# ԲԱՆԱՁԵՎԵՐ

## ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՅԵՎ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՁԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻ

355.2
Հ-22

ՅԵՐԵՎԱՆ
1927

2802-10

№ 6 ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ № 6

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

355.2
Հ-92

# ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՁԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

Կ009
36496

ԴԵԿՏԵՄԲԵՐ-ՓԵՏՐՎԱՐ 1927 Թ.

ՅԵՐԵՎԱՆ
1927

13 SEP 2013

41.15 7

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 2495
ԳՐԱՌ' 124 Բ. ՏԻՐԱԺ 500

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## I. ԿԿԲ 5-ՐԴ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

1. ՀամԿ (բ) Կ Անդրկովկասյան երկրային կոմիտեի զեկուցման առթիվ . . . . . . 5
2. Բանակի քաղաքական վարչության զեկուցման առթիվ . . . . . . . . . . 8
3. ԲՖ Կարմիր բանակի կուսակցական ու քաղլուսաշխատանքների խնդիրների շրջանային ու նավատորմների Քաղվարչությունների պետերի խորհրդակցության արդյունքների մասին 19
4. Բանակային կուսակցական հանձնաժողովի հաշվետվության առթիվ . . . . . 27
5. ԱՍՖԽՀ Բան-գյուղտեսչության ժողկոմատի Ռազմա-ծովային տեսչության աշխատանքի մասին . . . . . . . . . 37
6. Կուսակցական շինարարության հերթական խնդիրները . . . . . . . . 41
7. Զինթղթակցական աշխատանքի կուսակցական ղեկավարության մասին . . . . . 70
8. Հակակրոնական պրոպագանդը բանակում 80

## II. ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՁԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻ 6-ՐԴ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ


1. Ընկ. Շահգյալդյանի «Կուսակցության 15-րդ կոնֆերանսի արդյունքների» մասին տված զեկուցման առթիվ . . . . . . 90
2. Կովկասյան Կարմրադրոշ բանակի Քաղվարչության զեկուցման առթիվ . . . . 92
3. Հայկական Հրաձիգ Դիվիզիայի Քաղբաժնի զեկուցման առթիվ . . . . . 96
4. Դիվկուսհանձնաժողովի գործնեյության առթիվ . . . . . . . 132
5. Ընկ. Ս. Ալիբեկյանի «Կրասնայա Զվեզդա» թերթի մասին արած զեկուցման առթիվ . 143


---

# ԲԱՆԱՁԵՎ

## ՀԱՄ Կ (Բ) Կ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Լսելով ընկ. Օրախելաշվիլու զեկուցումը, Կովկասյան Կարմրադրոշ բանակի կուսակցական կազմակերպությունների 5-րդ կոնֆերանսը գոհունակությամբ հիշատակում է այն հսկայական հաջողությունները, որ ձեռք է բերել Խորհրդային Անդրկովկասը շինարարության բոլոր ասպարեզներում՝ անդրկովկասյան կուսկազմակերպության ու նրա գլխավոր շտաբի— ՀամԿ(բ)Կ Անդրյերկոմի լենինյան փորձառու ղեկավարությամբ։

Անդրկովկասի բազմաթիվ ժողովուրդների միջև հաստատված ամուր ազգամիջյան խաղաղությունն ու յեղբայրական համագործակցությունը խորհրդային տնտեսական ու կուլտուրական հաջող շինարարության գլխավոր հիմքը հանդիսացան Անդրկովկասյան Սոց. Ֆեդ. Խորհրդային Հանրապետության մեջ։ Պատերազմից քայքայված և մուսավաթների, դաշնակների ու մենշևիկների իշխանության օրոք ազգամիջյան յերկպառակությունների հետևանքով ուժասպառ յեղած Անդրկովկասը ներկայումս վոչ միայն հասել է նախապատերազմյան տնտեսական մակարդակին, այլև մի շարք ճյուղերում արդեն-իսկ անցել է այդ մակարդակից։ Անդրկովկասի տնտեսական կյանքում արդեն գոյություն ունին մի շարք այնպիսի նվա-

ճումներ (Զագեսը և այլ խոշոր էլեկտրոկայաններ, մի շարք նոր գործարաններ, Բաքվի նավթահանքերի մեքենայացումն և այլն), որ նշական բնույթ են կրում յերկրի ինդուստրիացման ասպարեզում և հզոր խթան են հանդիսանում այդ ուղղությամբ հետագա հաջողությունների համար: Միաժամանակ, զգալի հաջողություններ են ձեռք բերված գյուղատնտեսության վերկացման ու ամրացման գործում (ճահիճների չորացում, ոռոգում, բամբակի ցանքսի ավելացում և այլն), որը հաստատուն հիմք է ստեղծում սոցիալիստական տնտեսության հետագա զարգացման համար:

Աշխատավոր մասսաների կուլտուրայի և լուսավորության ասպարեզում խորհրդային Անդրկովկասը արդեն վաղուց հասել է այնպիսի հաջողությունների, որոնց հետ ոչ մի կերպ չի կարող համեմատվել անցյալը: Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները, որոնք առաջ գեղերում էին խավարում և տգիտության մեջ, ներկայումս հաջողությամբ կենսագործում են Լենինի՝ կուլտուրական հեղափոխության լոզունգը և ավելի ու ավելի լայն ճանապարհ են հարթում դեպի սոցիալիզմի շինարարության ակտիվ մասնակցելու համար:

Համ Կ(բ)Կ Անդրկովկասյան կազմակերպությունների ղեկավարությամբ Անդրկովկասի բանվոր դասակարգը ավելի ևս ամրացրեց իր միությունը բատրակության, գյուղական չքավորության ու միջակ գյուղացիության հետ, որոնք հանդիսանում են Խորհրդային իշխանության պողպատե հիմքը:

Կոնֆերանսը հատուկ գոհունակությամբ հիշատակում է Անդրկովկասյան կուսկազմակերպության Լենինյան տոկունությունը՝ օպպոզիցիոն բլոկի դեմ մը-



ղած գաղափարական պայքարում: Անդրկովկասյան կուսկազմակերպությունը, որն իր շարքերում ունի այնպիսի լենինյան ամրոցներ, ինչպիսին են Բաքվի ու Թիֆլիսի կազմակերպությունները, կարողացավ ըստ արժանվույն դիմադրել լենինյան հիմունքների ու մեր կուսակցության միասնության դեմ գործած միացյալ օպպոզիցիայի գրոհներին:

Ներկա մոմենտը բնորոշվում է Խորհրդային Միության ուղղված ռազմական վտանգի ուժեղացումով և իմպերիալիստական հակահեղափոխական զանազան խմբավորումների, դրանց թվում նաև մուսավաթական, դաշնակցական և մենշևիկյան էմիգրացիայի, շարքերի աշխուժացումով: Համաշխարհային իմպերիալիստները մեր դեմ զինված արշավ են պատրաստում, և, մասնավորապես, նրանք դեմ չեն մեր ծայրամասային Խորհրդային հանրապետություններում կրկնելու արյունալի ավանտյուրաները: Կոնֆերանսը հայտարարում է, որ Անդրկովկասի աշխատավորության հետ ամուր զոդված և իր կազմի մեջ արդեն ամրացած ազգային զորամասեր ունեցող Կովկասյան Կարմրադրոշ Բանակն, ամբողջ Կարմիր բանակի հետ միասին միշտ զգաստ է և միշտ պատրաստ է դիմադրություն ցույց տալու մեր թշնամիների բոլոր հանցափորձերին, որտեղից էլ որ բղխելիս լինեն այդ հանցափորձերը:

Կեցցե՛ Անդրկովկասյան կուսկազմակերպությունը—լենինյան կոմունիստական կուսակցության փառահեղ ջոկատներից մեկը:

Կեցցե՛ նրա ղեկավար Համ. Կ. (բ) Կ. Անդրյերկկոմը:

# ԲԱՆԱՁԵՎ

## ԲԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

1. Կոնֆերանսը Քաղվարչության կազմակերպչական–քաղաքական գիծն գտնում է ուղիղ և հավանություն տալիս նրա աշխատանքին:

2. Կոնֆերանսը նշում է մի շարք նվաճումներ ԿԿԲ զորամասերի մարտական պատրաստության բնագավառում.—բարելավվել է ռազմա–քաղաքական ուսուցումը, ավելի հաջող են անցել զորաշարժերը, վորոնք հայտնաբերել են կարմիր բանակայինների ու պետկազմի մարտական դրական հատկություններ և այլն:

Կուսկազմակերպությունները պետք է ապագայում ևս ակտիվ մասնակցեն և ամեն կերպ աջակցեն պետկազմին՝ զորքերի բոլոր տեսակի մարտական պատրաստության ամենից հաջող կիրառման գործին:

3. Խորհրդային Միությանն ուղղված նոր պատերազմի աճող վտանգը առաջնակարգ խնդիր է դարձնում մեր յերկրի պաշտպանունակության ամրացումը և բանակի բազմակողմանիորեն պատրաստությունը՝ ռազմական ժամանակի պայմաններում աշխատելու համար:

Կոնֆերանսը գտնում է, վոր այդ խնդրի իրագործման մեջ քաղապարատի ու կուս. կազմակերպությունների դերը կարևորագույն է: Քաղապարատն ու կուսկազմակերպությունները պետք է ամբողջ յեռանդով անցնեն այդ խնդրի լուծման, վոչ թե ժամանակ առ ժամանակ, վոչ թե կարճատև կամպանիաներով. այլ առորյա, սիստեմատիկ աշխատանքով:



Պատերազմի ժամանակվա համար պատրաստվելու խնդիրը պետք է համակի մեր աշխատանքի բոլոր ճյուղերը թե՛ բանակային ապարատի ներսում, թե՛ բանակի ամբողջ կազմի մեջ և թե՛ բանակից դուրս:

Կոնֆերանսն առանձնապես մատնանշում է պատերազմի ժամանակվա համար պատրաստության շուրջը տարվող մեր ամբողջ ագիտացիային ու պրոպագանդին կոնկրետ և առարկայորեն ճիշտ ուղղություն տալու անհրաժեշտությանը: Ագիտացիան ու պրոպագանդան պետք է կառուցվեն միջազգային դրության կոնկրետ փաստերի վրա, կապիտալիստական յերկրների կատաղի սպառազինման իրական (այլ վոչ թե կարծեցյալ, առավելագույն «եֆեկտի» վրա հիմնած) փաստերի վրա, մեզ համար բարենպաստ գործոնների բավականաչափ-լրիվ լուսաբանման վրա:

Կոնֆերանսը շեշտում է ՊԱԶԸ–Ավիոքիմի հարաճուն դերը և գտնում է, վոր անհրաժեշտ է բարձրացնել կուսկազմակերպությունների ու քաղապարատի ուշադրությունը դեպի այդ կազմակերպության աշխատանքը:

4. Անդրկովկասի բոլոր կոմունիստական կազմակերպությունների հետ միասին ԿԿԲ կուսկազմակերպությունները պետք է լիովին հաշվի առնեն յերկրի ազգայնական տենդենցների աճումն ու հակախորհրդային կուսակցությունների աշխուժացումը:

Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ուժեղացնել պայքարը ազգայնականության վորևէ արտահայտության դեմ, և ուժեղացնել աշխատանքն ավելի ևս համախմբելու բազմազգի Կովկասյան Կարմրադրոշ Բանակը ու դարձնելու նրան միասնական, միջազգա-

յին գիտակցությամբ և մարտական փոխադարձ օգնությամբ զոդված մի օրգանիզմ։

Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ավելի ևս հետևողականորեն ու վորոշակի աշխատանք կատարել մերկացնելու համար հակախորհրդային կուսակցությունների հակահեղափոխական էյությունը։

Կոնֆերանսը մատնանշում է, վոր դեռ ևս նկատվում են դեպքեր, յերբ բանակում ազգային փոքրամասնությունները բավարար չափով չեն սպասարկվում և անհրաժեշտ է համարում այդ թերությունների շուտափույթ վերացումը։

5. Կոնֆերանսը գոհունակությամբ արձանագրում է բանակային 4-րդ կուս. կոնֆերանսից մինչև այժմ յեղած ժամանակամիջոցում ԿԿԲ կուսակցական կազմակերպությունների թվական և մանավանդ վորակական աճումը։

Կոնֆերանսն արձանագրում է ԿԿԲ կուսակցական կազմակերպությունների լիակատար համերաշխությունը՝ միացյալ օպպոզիցիայի հակալենինյան յելույթների դեմ մղած պայքարում և միանգամայն համոզված է, վոր ԿԿԲ կուսակցական կազմակերպությունները ապագայում ևս հաստատապես կանգնած կը լինեն լենինիզմի ու մեր կուսակցության լենինյան միասնության դիրքերում։

Կոնֆերանսը գտնում է, վոր ղեկավարող կուսամարմինների նախընթաց վերընտրությունները ու դիվիզիաների կուսկոնֆերանսները բացահայտ կերպով վկայում են, վոր կուսակցական կազմակերպությունները բավականաչափ աշխուժացել ու ամրացել են բանակի պայմաններում ներկուսակցական դեմոկրատիայի հետևողական կիրառման հիման վրա։



Անհրաժեշտ է ձգտել ավելի զարգացնելու ունեցած հաջողությունները, անընդհատ շարունակելով պահպանել ստորին բջիջի ուժեղացման, ամբողջ աշխատանքի գաղափարական վորակի բարձրացման ու նրա սիստեմատիկ ստուգման ուղղությունը։ Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն նվիրել լենինյան տոկուն լայն կուսակտիվի աճեցմանն ու դաստիարակությանը, լրացնելով նրա շարքերը սոսկական խավերին պատկանող կուսակցականներով։

6. Բանակի քաղաքական-բարոյական դրությունն առողջ է։ Դիվիզիաների ռազմկոմների–քաղբաժինների պետերի մայիսյան խորհրդակցության վորոշումների իրացման անցնելու հետ միասին քաղապարատն ու կուս. կազմակերպություններն սկսել են մեծ չափով ընդգրկել անկուսակցական մասսայի քաղաքական տրամադրությունները։ Կուսակցական կազմակերպությունները գիտակցել են անկուսակցականների մեջ տարվող աշխատանքի վորակի բարելավման անհրաժեշտությունը՝ այդ ասպարեզում կան վորոշակի նվաճումներ։

Կոնֆերանսը գտնում է, վոր հետագայում կուսկազմակերպություններին անհրաժեշտ է առավելագույն նրբազգացությամբ հաշվի առնել և իրենց աշխատանքներում արտացոլել կարմիր բանակայինների ու պետկազմի ինչպես քաղաքական տրամադրությունները, այնպես էլ կենցաղային պահանջները։

Անկուսակցական մասսաների քաղաքական գիտակցության ու ակտիվության շարունակվող աճումը թելադրում է ավելի մեծ ուշադրություն դարձնել աշխատանքի վորակի, նրա քաղաքական բովանդա–

կության և ինքնագործունեության առավելագույն հայտնաբերման վրա:

7. Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ուժեղացնել քաղմարմինների ու կուսկազմակերպությունների ուշադրությունը դեպի կուսակցության աճման ու սոցիալական կազմի կանոնավորման խնդիրները՝ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վերջին վորոշման համեմատ: Մասնավորապես՝ անհրաժեշտ է օգտագործել 1904 թվի համալրման մեջ բանվորական խավի ավելացումը:

8. Կոնֆերանսը հիշատակում է կոմյերիտական կազմակերպությունների կազմի քանակական աճումը և բանակի կուսակցական-քաղաքական ամբողջ աշխատանքի մեջ կոմյերիտական աշխատանքի աճող նշանակությունը: Կոնֆերանսը հավանություն է տալիս ձեռնարկած այն միջոցներին, վորոնք նպատակ ունեն այդ աշխատանքի կազմակերպչական ծավալումը (ԼԿՅԵՄ գնդային ընտրական բյուրոներ, կոնֆերանսներ և այլն): Կոմյերիտմիության ղեկավարության գործում կուսկազմակերպությունների առաջնահերթ խնդիրները պետք է լինեն — հասնել այնպիսի դրության, յերբ ԼԿՅԵՄ անդամները միանգամայն ուսանելի կը լինեն, վորպես օրինակելի կարմիր բանակայիններ, չուտափույթ վերացնել մանր խնամակալությունը և ուժեղացնել միութենական աշխատանքի գաղափարական ղեկավարությունը:

9. ԿԿԲ զորամասերում միահրամանատարության գործնական կիրառումը տվել է դրական արդյունքներ:

Քաղմարմինների ու կուսկազմակերպությունների այդ ուղղությամբ հայտնաբերած ուշադրությունը, հրամկազմի աշխատանքներին ցույց տված յեռանդուն օգնությունը պետք է անընդհատ ուժեղանան:



Կոնֆերանսը հաստատում է հրամկազմի՝ քաղմարմինների ու զորամասերի քաղապարատի մերձեցման խնդրի ամբողջ կարևորությունը, վոր առաջադրել եր դիվռազմկոմների ու քաղբաժինների պետերի մայիսյան խորհրդակցությունը:

Կոնֆերանսը կրկին ընդգծում է, թե միահրամանատարությունն ամենևին չի նշանակում, թե վորևե կերպ պետք է նսեմանա կուսկազմակերպությունների ու քաղապարատի դերը բանակում, և անհրաժեշտ է համարում, ամենավճռական պայքար մղել նման տենդենցների դեմ:

10. Կարգապահական քաղաքականության գործնական կիրառման ասպարեզում կոնֆերանսը լիովին հաստատում է այն գիծը, վոր տվել է բանակային 4-րդ կուս. կոնֆերանսը, և վոր զարգացրել է դիվռազմկոմների ու քաղբաժինների պետերի մայիսյան խորհրդակցությունը:

Մատնանշելով կուսակցության անդամների և մանավանդ կոմյերիտականների կողմից նկատվող վոչ բավարար օրինակելության դեպքեր, կոնֆերանսն անհրաժեշտ է համարում մոտ ապագայում վերացնել այդ թերությունները:

11. Նախընթաց տարին հատկանշական է նրանով, վոր ավարտվել է յերկրային զորամասերի կազմակերպչական շրջանը և նրանք արդեն անցել են խորացրած սիստեմատիկ աշխատանքի: Կոնֆերանսը գտնում է, վոր յերկրային զորամասերի աշխատանքում առաջ են գալիս հետևյալ հերթական խնդիրները.

ա) ուշադրության ծանրության կենտրոնը աշխատանքի կազմակերպչական ձևերից փոխադրել աշխա-

տանքի վորակի բարելավման, նրա գաղափարական ուժեղացման կողմը·

բ) ամբողջ քաղ· լուսաշխատանքն ավելի մեծ չափով համակել ռազմական բովանդակությամբ·

գ) հավաքներից առաջ տեղի ունեցող ագիտ· կամպանիաներում վերացնել հորդորների թեքումը, ավելի պահանջկոտ լինել դեպի փոփոխական կազմն ու նախակոչիկները, վորպես դեպի ԽՍՀՄ զինապարտ քաղաքացիները·

դ) ավելի սերտ կապվել քաղաքացիական կազմակերպությունների հետ, նրանց լայն չափով մասնակից դարձնելով միջհավաքային աշխատանքներին։

12· Կարմիր բանակային մասսայի ակտիվության աճման հետ կապված իբրև ագիտպրոպաշխատանքի կարևորագույն խնդիր հանդիսանում է՝ այդ ակտիվության լրիվ ընդգրկումը—աշխատանքի բովանդակության, մեթոդների ու ձևերի բարելավման միջոցով։ Դրա համար պետք է հատուկ ուշադրություն դարձնել զորամասերում աշխատողների նախապատրաստման բոլոր տեսակների ու ձևերի կազմակերպման վրա։ Կուսակցական կազմակերպությունները պետք է ավելի մոտենան ագիտպրոպ աշխատանքի բոլոր տեսակների մասնակցությանն ու նրանց ղեկավարությանը։ Ամենից առավել այդ ուշադրությունն անհրաժեշտ է արտադպրոցական աշխատանքի բնագավառում։ Կուսակցական կազմակերպությունները պետք է խորապես գիտակցեն ու գործնականապես իրացնեն այն լոզունգը, թե՝ «արտադպրոցական աշխատանքը կուսակցության աշխատանքն է անկուսակցականների մեջ»։ Կոնֆերանսը հավանություն է տալիս քաղպարապմունքների հարցի վերաբերյալ Դիվռազմկոմների մայիսյան խորհրդակցության,



ինչպես նաև ագիտպրոպբաժինների պետերի խորհըրդակցության վորոշումներին։ Այդ վորոշումների իրացումը պետք է հիմնական խնդիր լինի աշխատանքի առաջիկա շրջանի համար։

13· Հաշվի առնելով արտադպրոցական աշխատանքի ասպարեզում մեթոդական գիտելիքների ու հմտության պակասությունը, կոնֆերանսը նպատակահարմար է համարում կազմակերպել բանակային կարճատև (2—3 ամսյա) դասընթացներ վերապատրաստելու համար վաշտերի արտադպրոցական աշխատանքի հիմնական ղեկավարներին, այն է՝ քաղղեկներին։ Նույն այդ դասընթացները պետք է տան հիմնական ղեկավարների բնակազմ հակակրոնական պրոպագանդայի համար, վորը բանակում մինչև այժմ բավարար չափով չի զարգացված։

14· Պետկազմի կուլտուրական պահանջների սպասարկման վրա պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել, քան դարձվել է մինչև այժմ։ Այդ սպասարկումը պետք է ընթանա ինչպես անմիջորեն զորամասերում տարվող աշխատանքի գծով այնպես էլ ԿԿԲ խոշորագույն կայազորներում Կարմիր Բանակի Տներ (բարձր տիպի ակումբներ) կազմակերպելու միջոցով։

15· Մատակարարման ասպարեզում կոնֆերանսը գտնում է վորոշ հաջողություններ՝ այդ աշխատանքի ընդհանուր կանոնավորման տեսակետից։ Դրա հետ միասին կոնֆերանսն արձանագրում է վորոշ բացեր, վոր յերբեմն յեղած միջոցների աննպատակահարմար ոգտագործման հետևանք են։

Անհրաժեշտ է հասնել նրան, վորպեսզի բանակի ամբողջ տնտեսական ապարատը վերից մինչև վար աշխատի վորոշակի և անարգել։ Ամբողջ պետկազմը պատ-

տավոր է առավելագույն հոգատարություն ցուցահանի կարմիր բանակայինի վերաբերմամբ, և գործ դնի բոլոր ջանքերը զորանոցում, յեղած միջոցների սահմաններում, ըստ հնարավորության լավագույն նյութական-կենցաղային պարագա ստեղծելու համար:

Խնայողության ռեժիմի գործնական կիրառման ընթացքում նկատվող խեղաթյուրման դեպքերի և այդ հարցին բյուրոկրատական մոտեցման դեպքերի դեմ պետք է մղել ամենավճռական պայքար: Կուսկազմակերպություններն անպատճառ պետք է ակտիվ մասնակցություն ցույց տան բանակային տնտեսության մեջ խնայողության ռեժիմի հետագա արմատացմանը և այդ խնդրի շուրջն առողջ հասարակական կարծիք կազմակերպեն, ձգտելով, վոր կարմիր բանակային ամբողջ մասսան ու պետկազմը ճիշտ ըմբռնեն այն:

Կուսակցական կազմակերպությունները պետք է մեծ ուշադրություն նվիրեն տնտեսական ապարատի համար աշխատողներ ջոկելուն և այդ ապարատի աշխատանքներին ոգնելուն: Կուս. կազմակերպությունները պետք է ուժեղացնեն տնտեսական աջակցող հանձնաժողովներին ցույց տված ղեկավարությունը:

16. Ամբողջ Անդրկովկասի մասշտաբով ռազմա-կրթական հիմնարկների միացման գիծը կոնֆերանսը համարում է ճիշտ, և մատնանշում, վոր ԿԿԲ Քաղվարչության ռազմդպրոցներին ցույց տված ղեկավարությունը բարելավված է:

Կոնֆերանսը գտնում է, վոր ռազմա-կրթական հիմնարկների կուսկազմակերպությունների աշխատանքի հիմք պետք է ծառայեն ռազմակրթական հիմնարկների կուսաշխատողների 26 թվի խորհրդակցության վորոշումները և չեշտում է ուսանողական մասսայի և դպրոցի ամբողջ ապարատի ինտերնացիոնալ դաստիարակության հատուկ նշանակությունը:



Ռազմա-կրթական հիմնարկների վերջին համալրման ժամանակ՝ զորանոցներից ուղարկվող թեկնածուների սահմանված տոկոսը պետք է բարձրացնել, միևնույն ժամանակ ուժեղացնելով զորանոցներում տեղի ունեցող թեկնածուների պատրաստությունը:

Ռազմա-կրթական հիմնարկների սկսված միացման հետ կապված՝ ուժեղացնել կուլտուր-լուսավորական կարիքների համար բաց թողնվող միջոցների հատկացումը:

Անհրաժեշտ համարել ռազմա-կրթական հիմնարկների ու դիվիզիաների ավելի սերտ կապի կանոնավորումը:

17. Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ուժեղացնել դիվիզիաների քաղխորհրդակցություններն ու բանակային քաղխորհրդակցության կողմից նրանց ցույց տված ղեկավարությունը:

1008 / 36496

Անհրաժեշտ է շարունակել և ուժեղացնել պատմիչ [illegible]արմինների աշխատողների ակտիվ մասնակցության գիծը կուս-քաղաքական աշխատանքներում:

18. Մասսաների ակտիվության աճումով պայմանավորված եյական խնդիրներից մեկը պետք է լինի բանակի ամբողջ կյանքում հեղափոխական որինականության սկզբունքների առավելագույն հետևողական կիրառումն ու հեղափոխական որինականության հարցերի վերաբերյալ բացատրական աշխատանքի ծավալումը:

19. Կոնֆերանսն արձանագրում է «Կրասնիյ Վոյին» թերթի և ազգային դիվիզիաների թերթերի շարունակվող բարելավումը: Զինթղթակցային շարժման

զգալի աճումը պահանջում է, վոր կուսկազմակերպությունները զինթղթակցային աշխատանքին ավելի մեծ ուշադրություն նվիրեն, քան թե այդ յեղել է մինչև այժմ: Դիվիզիաների թերթերը պետք է ավելի մեծ չափով հաշվի առնեն ու բավարարեն կարմիր բանակային մասսայի շահերն ու պահանջները:

Կոնֆերանսը կոչ է անում ԿԿԲ բոլոր կուսկազմակերպություններին յեռանդուն աշխատանք կատարել ընդարձակելու համար «Կրասնայա Զվեզդա» կենտրոնական թերթի ու «Վոյեննիյ Վեստնիկ»-ի բաժանորդագրությունը:

20. Հիշատակելով ամբողջ տեղեկատու-վիճակագրական աշխատանքի, և մասնավորապես քաղաքական ինֆորմացիայի աստիճանական բարելավումը, կոնֆերանսը հերթական խնդիր է համարում այդ ասպարիզում բոլոր ինֆորմացիոն նյութերի վորակի բարձրացման հետ միասին կրճատել նրա քանակը:

21. Կոնֆերանսը մատնանշում է մի շարք նվաճումներ «Боец ККА» և «АЗВПО» ռազմա-սպառողական ընկերությունների գործունեության մեջ և գտնում է, վոր ներկա պայմաններում ԿԿԲ զինվորական ծառայողների բավարար սպասարկման համար անհրաժեշտ է պահպանել «Боец»-ը և «АЗВПО»-ն, վորպես ինքնուրույն մարմիններ և միացնել նրանց անդրկովկասյան մասշտաբով:

22. Կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում միջոցներ ձեռք առնել բարելավելու համար ԱՍՖԽՀ զորակոչային հանձնաժողովների աշխատանքները:

23. Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ռեալ իրագործելի միջոցներ ձեռք առնել բարելավելու համար պետկազմի բնակարանային պայմանները:



24. Մատնանշելով կրտսեր հրամկազմի՝ վարժական դպրոցներում ստացած պատրաստության բարելավումը, կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ամբողջ պետկազմի ու կուսկազմակերպության ոգնությունը կրտսեր հրամկազմին՝ նրա առօրյա աշխատանքների մեջ:

Միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել ուշադրությունը դեպի գերակետիկ կրտսեր հրամկազմի ընտրությունն ու սիստեմատիկ աշխատանք կատարել նրա ռազմա-քաղաքական պատրաստության վերաբերյալ:

25. Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ընդարձակել բանակի պետկազմի առողջության վերականգնման համար տարվող աշխատանքները:

26. Անհրաժեշտ է, վորպեսզի ԿԿԲ Քաղվարչությունն արագացնի Անդրկովկասի ուսումնասիրությանը վերաբերվող նյութերի հրատարակությունը:

# ԲԱՆԱՁԵՎ

## ԲԳ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԼՈՒՍԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՅԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՈՒ ՆԱՎԱՏՈՐՄՆԵՐԻ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Լսելով ընկ. Լանդայի զեկուցումը ԲԳ Կարմիր բանակում տարվող կուսակցական ու քաղաքական-լուսավորական աշխատանքի խնդիրների և շրջանային ու նավատորմների քաղվարչությունների պետերի խորհրդակցության արդյունքների մասին, ԿԿԲ 5-րդ կուսկոնֆերանսը գոհունակությամբ հիշատակում է բանակի կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունների վորակի ու քանակի աճումը, նրանց ամրա-

յումը, կուսկազմակերպությունների գաղափարական-քաղաքական կյանքի աշխուժացումը, նրանց մեծ ընդգրկումը կարմիր բանակային մասսայի անընդհատ աճող ակտիվությանը և բանակի մարտունակության ամրացման գործում նրանց կատարած աշխատանքի ուժեղացումը։

Կոնֆերանսն առանձնապես հիշատակում է այն փաստը, որ բանակային կուսկազմակերպություններն ամբողջ կուսակցության հետ միասին վճռական դիմադրություն ցույց տվին միացյալ օպոզիցիայի ելույթներին, որպիսի հանգամանքը նպաստեց բանակային կուսկազմակերպությունների է՛լ ավելի ամրացման ու համախմբման, նրանց լենինյան գաղափարական տոկունության ու բոլշևիկական միաձուլության ամրացմանը։

2· Հիշատակելով բանակի մարտական պատրաստականության գործում ձեռք բերած նվաճումները, կոնֆերանսը դրա հետ միասին չեշտում է այդ աշխատանքի մի շարք թույլ կողմերը·

ա) բավարար չափով չեն համաձայնեցրած օպերատիվ ու քաղաքական աշխատանքները·

բ) հրամկազմը չի կարողանում լրիվ օգտագործել բարոյական-քաղաքական գործոնը օպերատիվ ղեկավարության մեջ·

գ) քաղկազմը բավականաչափ չի ռազմականացել (մասնավորապես, նա չափազանց թույլ ծանոթություն ունի մարտական ընդհանուր կանոնագրքերին և բավականաչափ վարժություն չունի քաղաշխատանքը մարտական պարագայում կատարելու մեջ)·

դ) կարմիր բանակայինի մարտական դաստիարակության տարրերը բավականաչափ չեն արտացոլված քաղլուսաշխատանքի ամբողջ սիստեմում։



Կուսկազմակերպությունների ուշադրության կենտրոնն այդ թերությունների վրա դարձնելը, նրանց վերացնելու նպատակով,—ահա առաջիկա շրջանի հիմնական խնդիրը, հատկապես կապված պատերազմի ուժեղացած վտանգի հետ։

3· Պատերազմի ժամանակվա քաղպատրաստության աշխատանքը դեռ չի գտել իր պատշաճ տեղը կուսքաղլուսաշխատանքի ամբողջ սիստեմում և կատարվել է միայն ի դեպ։ Նման դրությանը պետք է վերջ տրվի մոտակա ժամանակում։

Գործնականապես անհրաժեշտ է·

ա) ստուգել քաղզորահավաքային աշխատանքի վիճակը բանակի բոլոր զորամասերում և սերտ կապ ունենալով շտաբների հետ՝ նշել պատերազմի պատրաստության հետ կապված քաղաքական հարցերի մշակման վերաբերյալ մի շարք մոտակա կոնկրետ խնդիրներ·

բ) կանոնավորել պատերազմի ժամանակ տարվող քաղաքական աշխատանքի ձևերի ու մեթոդների սիստեմատիկ ուսումնասիրությունը·

գ) ուժեղացնել սահմանամերձ յերկրների հնարավոր հակառակորդների ու ռազմական գործողությունների հնարավոր թատերաբեմների ուսումնասիրության աշխատանքը·

դ) պատշաճ բարձրության վրա դնել ամբողջ բանակի կողմից քաղաքացիական պատերազմի փորձի ուսումնասիրությունը·

ե) ավելի մեծ ուշադրություն նվիրել քաղկազմի ռազմականացման գործին, ձգտելով այդ աշխատանքին

նալ սիստեմատիկ բնույթ, դրա հետ միասին միջոցներ ձեռք առնել հրամկազմի քաղաքական վորակի հետագա բարձրացման համար.

գ) կոնֆերանսը չեշտում է բանակում այսպես կոչված «խաղաղ» տրամադրությունների վերացման անհրաժեշտությունը (պատերազմի ռեալ հնարավորության թերահաշվառումը) չնայած ԽՍՀՄ վարած խաղաղ քաղաքականության.

է) հասնել նրան, վոր քաղաքացիական ապարատն ավելի պլանաչափ ու սիստեմատիկորեն մասնակցի պատերազմի ամբողջ քաղպատրաստությանը.

ը) ավելի մեծ ուշադրություն ու ղեկավարություն նվիրել ռազմական պրոպագանդին, և մասնավորապես «ՊԱԶԸ—Ավիաքիմ» ընկերության աշխատանքներին և մամուլի ռազմական բաժինները պատշաճ բարձրության վրա դնելուն.

թ) ավելի սերտ կապ հաստատել պահեստի պետկազմի հետ, վճռական միջոցներ ձեռք առնելով արագացնելու համար նրա վերապատրաստման թափը. դրա հետ միասին ուժեղացնել պահեստի պետկազմի կոնտիգենտի ուսումնասիրության աշխատանքը:

Կոնֆերանսն առանձնապես չեշտում է, վոր անհրաժեշտ է արագացնել՝ պատերազմի ժամանակ տարվող քաղլուսաշխատանքի վերաբերյալ կանոնադրությունների ու հրահանգների հրատարակությունը Քաղվարչության կողմից:

4. Կոնֆերանսը հիշատակում է զգալի նվաճումներ ԲԳ Կարմիր բանակի և մանավանդ հրամկազմի հիմնական կադրի կազմակերպման գործում, հիշատակում է նրա տեսակարար կշռի ու հասարակական դերի ավելացումը յերկրում ու բանակում:



Դրա հետ միասին կոնֆերանսը հրավիրում է բանակի բոլոր կուսկազմակերպությունների ուշադրությունն այն հանգամանքի վրա, վոր ակտիվ, ձեռներեց, ինքնուրույն ու վճռական հրամատարի դաստիարակության գործում նկատվում են մի շարք թերություններ: Կոնֆերանսը գտնում է, վոր ստորադրյալի ղեկավարության ամբողջ սիստեմում անհրաժեշտ է վերացնել այնպիսի մեթոդներ, ինչպիսին են նախաձեռնության սահմանափակումը, մանր խնամակալությունը, ջղայնացումը, ավելորդ կոնկրետացումն ու մանրամասնացումը (դետալիզացիան):

Դրա հետ միասին կոնֆերանսը չեշտում է, վոր անհրաժեշտ է ամեն կերպ բեռնաթափել պետկազմին, նվազեցնել զանազան հանձնաժողովների, հետաքննությունների ( дознания ), ժողովների ու նիստերի քանակը և խնդրում է Պուռ-ին արագացնել բեռնաթափման վերաբերյալ նյութերի մշակումը և, մասնավորապես, ամփոփել շրջանների փորձը բանվորական որվա խըտացման վերաբերյալ:

Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում վճռական պայքար մղել պետկազմի ու կարմիր բանակայինների փոխհարաբերությունների ասպարեզում տեղի ունեցած խեղաթյուրումների դեպքերի դեմ:

Անբավարար գտնելով պետկազմի կուլտուր-քաղաքական սպասարկումը, կոնֆերանսը ուշադրություն է հրավիրում դրա ուժեղացման անհրաժեշտության վրա:

Կոնֆերանսը խնդրում է Պուռ-ին վճռական միջոցներ ձեռք առնել ավելի արագ ծավալելու համար Կարմիր Բանակի ու Նավատորմի Տների ցանցը, և մասնավորապես այնպիսի կայազորներում, ինչպիսին են Բա-

գուն, Լենինականը, Երևանը, Բաթումն ու Քութայիսը:

5. Հիշատակելով բանակի քաղաշխատողների վերապատրաստման գործում ձեռք բերած հաջողությունները, կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում ամենաարագ կերպով լուծել ավագ քաղկազմի վերապատրաստման հարցը:

6. Մատնանշելով զգալի նվաճումներ կարմիր բանակայինների հետ տարվող քաղաքական աշխատանքի ասպարեզում, կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունների հեղինակության ու ազդեցության աճումն անկուսակցական մասսայի մեջ, նրա քաղաքական ու կուլտուրական մակարդակի բարձրացումը, շուրջ-կուսակցական ակտիվ ստեղծվելը, կոնֆերանսը շեշտում է հետևյալ թերությունների վերացման անհրաժեշտությունը, որ հաճախ նկատվում են անկուսակցականների մեջ տարվող աշխատանքներում (մասնավորապես, քաղաքական պարապմունքներում ու արտադպրոցական աշխատանքներում).

ա) խորհրդային իրականության գռեհկացնելը, խեղաթյուրումն ու գունազարդելը.

բ) մեր պրոլետարական պետության դասակարգային էության վոչ բավարար բացատրությունը.

գ) անկուսակցական մասսայի պահանջների ու արտահայտությունների վոչ բավարար հաշվառումն ու արտացոլումը քաղաշխատանքում.

դ) այժմեյականության անբավարար արտացոլումը:

ե) դաստիարակչական տարրերը ձևական տեղեկություններով փոխարինելը:



Կոնֆերանսն առանձնապես շեշտում է բանակի ամբողջ կազմի ինտերնացիոնալ դաստիարակության ուժեղացման անհրաժեշտությունը:

Կարմիր բանակայինների հետ տարվող դաստիարակչական ամբողջ աշխատանքը կանոնավորելու, հատկապես, և գյուղի համար ակտիվ պատրաստելու աշխատանքներում կարևոր նշանակություն ունի զորամասերի կուսքաղապարատի կապը կարմիր բանակայինների հայրենիքի հետ: Կոնֆերանսը խնդրում է Պուռ-ին Համ Կ (բ) Կ Կենտկոմում հարց դնել բոլոր կազմակերպություններին ցուցումներ տալու մասին՝ համալրման շրջաններից զորամասերին նյութեր մատակարարելու կարգի և կարմիր բանակայինների դաստիարակչական աշխատանքին քաղաքացիական կազմակերպությունների մասնակցության վերաբերյալ:

7. Կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում կարմիր բանակային կազմի նյութական—կենցաղային պայմանների բարելավումը և խնդրում է Պուռ-ին արագացնել այդ հարցի լուծումը:

8. Կոնֆերանսն արձանագրում է, որ քաղլուսաշխատանքի համար հատկացվող միջոցները բավական չեն և խնդրում է Պուռ-ին ավելացնել վարկերն ազգային զորամասերի (մանավանդ յերկրային), ազգային փոքրամասնություններ ունեցող զորամասերի, ինչպես և, ազգային լեզուներով գրականության հրատարակելու համար:

Մատնանշելով կարմիր բանակային մամուլի, և մանավանդ ազգային թերթերի, նյութական ծանր դրությունը, կոնֆերանսը խնդրում է Պուռ-ին արագացնել այդ հարցի լուծումը (միջոցների հատկացումն

ավելացնել, ազգային թերթերի հրատարակությունը դարձնել շաբաթական 3 անգամ և այլն):

9. Կոնֆերանսը խնդրում է Պուռ-ին հրատարակել սիստեմի յենթարկված կանոնադրություն բանակի կուսքաղլուսաշխատանքի մասին և անհրաժեշտ է գտնում, վոր Պուռ-ը մոտ ժամանակներում ցուցումներ տա ընթացիկ տարվա սեմինարներն անցկացնելու մասին, մատնանշելով սեմինարների ժամկետները: Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում Պուռ-ի կողմից քաղպարապմունքների ծրագրի հրատարակությունն այն ամբողջ ժամանակաշրջանի համար, յերբ փոփոխական կազմի կարմիր բանակայինը գտնվում է յերկրային զորամասերում:

10. Հիշատակելով ձեռք բերած նվաճումները տեղեկատու—վիճակագրական աշխատանքի սիստեմի կատարելագործման ասպարեզում, կոնֆերանսը խնդրում է Պուռ-ից միջոցներ մշակել գրավոր հաշվետվության վճռական կրճատման համար:

11. Հիշատակելով քաղմարմինների ու կուսկազմակերպությունների թերագնահատման ու նրանց դերը նսեմացնելու տենդենցների, ուստի և բանակում տարվող քաղաքական աշխատանքների կարևորության թերագնահատության դեռ ևս նկատվող դեպքեր, կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ուժեղացնել այդ յերևույթների դեմ մղած վճռական պայքարը:

12. Լսելով ընկ. Լանդայի հայտարարությունը շրջանային ու նավատորմների քաղվարչությունների պետերի խորհրդակցության մասին ու ԲԳ կարմիր բանակի միահրամանատարության հարցի վերաբերյալ Համ Կ (բ) Կ Կենտկոմի վորոշման մասին, կոնֆերանսն



ընդունում է կուսակցական Կենտկոմի վորոշումն ի անշեղ ղեկավարություն և ի կիրառում:

Հիշատակելով ազգային զորամասերի շինարարության գործում ձեռք բերած նվաճումները (նրանց հիմնական բնակազմի ամրացման ու վորակական բարելավումը, հրամկազմն ավելի մեծ չափով քաղաշխատանքի մեջ քաշելը և կուսխավի ընդարձակումը նրա մեջ), կոնֆերանսը հաստատում է դիվռազմկոմների—դիվքաղբաժինների պետերի (1926 թվի մայիսյան) խորհրդակցության վորոշումը և աժմեյական ու անհրաժեշտ է գտնում կիրառել միահրամանատարությունը ԿԿԲ ազգային զորամասերում ԽՍՀՄ Հեղռազմխորհրդի՝ 1924 թվի № 234 հրամանի սահմաններում:

## ԲԱՆԱՁԵՎ

### ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

1. Կովկ. Կարմրադրոշ բանակի կուսակցական հանձնաժողովի աշխատանքին հավանություն տալ և գիծն ընդունել ուղիղ:

2. Բանակային 5-րդ կուսակցական կոնֆերանսը հանձնարարում է կուսակցական հանձնաժողովներում հետագայում ևս շարունակել քաղմարմինների հետ ամենալայնագույն չափով կոնտակտ աշխատանքի գիծը: Ներկուսակցական աշխատանքի և անկուսակցականների մեջ տարվող աշխատանքի այն լուրջ խնդիրները, վոր դրված են բանակի կուսկազմակերպությունների ու քաղմարմինների առաջ, վերաբերում են նաև կուսհանձնաժողովներին: Կուսհանձնաժողովների ամբողջ գործունեյության մեջ այդ խնդիրները պետք է գտնեն

իրենց լիակատար արտահայտությունը: Նրանց աշխատանքը հիմնականում պետք է կառուցվի այնպես, վոր միանգամայն համապատասխանի քաղմարմինների՝ դեպի ստորին բջիջն ընդունած կուրսին: Կուսակցության աճման ընթացքը, այդ աճման կանոնավորումը, հիվանդագին յերևույթները պետք է ուսումնասիրվեն ստորին բջիջների աշխատանքի փորձով: Կուսհանձնաժողովների՝ այդ աշխատանքի ցույց տված գործնական ղեկավարությունը պետք է ուղղված լինեն այն բանին, վոր կուսակցության, բանակային կոնֆերանսների ընդհանուր վորոշումներն յուրաքանչյուր առանձին դեպքում ճիշտ կիրառվեն ստորին բջիջի կողմից:

## ԽՆԴԻՐՆԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ ԿԱՆՈՆԱՎՈՐԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

3. Նախընթաց տարին (համեմատած 1925 թվի հետ) չավելց ընդունված բանվորների տոկոսի բարձրացում, այլ ընդհակառակը, տոկոսը նույնիսկ փոքր ինչ իջավ (18,6%-ից մինչև 18,2%): Այդ տոկոսը բարձրացնելու համար յեղած հնարավորությունները լիովին չեն օգտագործվում: Աճումը կանոնավորելու գործում կուսկազմակերպությունների հիմնական խնդիրն առաջվա պես մնում է առավելագույն թվով բանվորներին կուսակցության շարքերը գրավել՝, վորպեսզի կուսակցության մեջ անշեղ բարձրանա պրոլետարական բնակազմի տեսակարար կշիռը:

4. Ընդհանուր առմամբ ճիշտ համարելով կուսակցության մեջ գյուղացիների ընդունելության գիծը, կոնֆերանսը հանձնարարում է կուսհանձնաժողովներին մանրամասնել իրենց մոտեցումը սոցիալական առանձին խմբերի վերաբերմամբ: Յուրաքանչյուր առանձին դեպքում, ուշադիր ուսումնասիրության միջոցով, պետք է պարզել, թե գյուղացիական սոցիալական խմբերից վո՞ր մեկին է պատկանում ընդունվողը, վորպեսզի կուսհանձնաժողովներն ունենան միանգամայն պարզ թվական նյութեր կուսակցության՝ ի հաշիվ գյուղացիության աճման բնույթի մասին (չքավորներ, միջակներ): Առաջվա պես առաջին հերթին պետք է ընդունել բատրակներին ու չքավորներին, ինչպես նաև՝ ամենից ակտիվ միջակներին: Միջակներին ընդունելիս առանձին խնամքով պետք է պարզել նրանց հասարակական-քաղաքական գիտակցությունը, կուսակցությանը նվիրված լինելը, օրինակելիությունը ռազմա-քաղաքական ուսուցման մեջ ու կարգապահությունը:

5. Ծառայողների և այլոց ընդունելության ժամանակ հետագայում էլ խստիվ առաջնորդվել Համ Կ (բ) Կ 14-րդ համագումարի ցուցումներով և Համ Կ (բ) Կ Կենտկոմի՝ «կուսակցության աճումը կանոնավորելու մասին» վորոշումով: Կոնֆերանսը պարտադիր է գտնում ընդունվողների անձնական ներկայությունը կուսհանձնաժողովներում, յերբ քննում են նրանց դիմումները (յերբ և վորտեղ այդ հնարավոր է):

6. Կոնֆերանսն ուշադրություն է հրավիրում ընդունվողների սոցիալական դրությունը վորոշելու հարցի լրջության վրա: Համ Կ (բ) Կ Կենտկոմի վերջին ցուցումներով բանակում կուսհանձնաժողովներին վերապահված այդ աշխատանքին պետք է նվիրել ամենալուրջ ուշադրությունը (տես Համ Կ (բ) Կ հրահանգը կուսկազմակերպությունների սոցիալական կազմը սահմանելու մասին):

7. Անհրաժեշտ է բարելավել կուսակցության ըն-

դունելության վերաբերյալ գործերի ուսումնասիրության ընթացքը· զրուցել ընդունվողների հետ, հանձնարարողների հետ (իրոք, ճանաչո՞ւմ են նրան, ում հանձնարարում են, յերաշխավորության դրդապատճառները), ծանոթանալ տվյալ կուսկազմակերպության աճմանը։

8· Մերժումները, ընդունելության դեմ լինելը, պետք է սպառիչ կերպով հիմնավորվեն բջիջների ու կուսհանձնաժողովների կողմից, վորպեսզի ապահովված լինի այդ հարցի ճիշտ ուսումնասիրությունը։ Կոնֆերանսը հատուկ ուշադրություն է դարձնում դրա վրա, վորովհետև անցյալ տարի հնարավորություն չի յեղել ուսումնասիրելու մերժումների պատճառները (ինչպես բջիջներում, այնպես էլ կուսհանձնաժողովներում), մինչդեռ առանձին կազմակերպություններում այդ մերժումները բազմաթիվ են յեղել։

9· Անհրաժեշտ է լիովին օգտագործել թե՛ ընդունելության վերաբերյալ գործերի ուսումնասիրությունը և թե՛ հենց ընդունելության ընթացքը կուսհանձնաժողովներում, ուսումնասիրելու համար դեպի կուսակցությունը յեկած ձգտման պատճառները կուսքաղլուսաշխատանքների առանձին ճյուղերի ազդեցությունը, շփումը կոմունիստների հետ և այլն)։

10· Նախընթաց տարին ցույց տվեց, վոր ծառայության առաջին տարվա (1903 թվի) կարմիր բանակայինները շատ թույլ են կուսակցության մեջ քաշվել։ Կոնֆերանսը շեշտում է, վոր անհրաժեշտ է օգտագործել բանակում գտնվելու առաջին տարին ավելի լրիվ չափով կուսակցության մեջ քաշելու համար կարմիր բանակային ակտիվին, մանավանդ բանվորներից, բատրակներից ու չքավորներից։



11· Յերկրային զորամասերի բնակազմից ընդունելու հարցում կոնֆերանսը նշում է հետևյալ կարգը — բջիջի հաստատումից հետո գործն անցնում է կուսբյուրոյին, վորտեղ խնամքով ուսումնասիրվում է։ Կուսբյուրոյի հաստատումից հետո գործն անցնում է գնդային պատգամավորական կուսժողովին։ Յերբ հնարավոր չի ժողով հրավիրել, կամ նրա գումարումը ձգձգվում է, ամբողջ նյութը կուսբյուրոյից անցնում է կուսհանձնաժողովին։

12· Նշելով, վոր դիվկուսհանձնաժողովների կողմից, չնչին բացառությամբ, անբավարար են իրագործված բանակային 4-րդ կուսկոնֆերանսի ցուցումները կոմյերիտական աճման խնդիրներին մոտենալու հարցի մասին, կոնֆերանսն անհրաժեշտ է համարում բարելավել այդ աշխատանքը, առանձնապես նկատի առնելով շրջանային քաղվարչությունների պետերի (1927 թ.) հունվարյան խորհրդակցության վորոշումները։

Դիվկուսհանձնաժողովները պետք է իրենց անդամներից պարբերաբար տեղեկատու զեկուցումներ լսեն կոմյերիտական կազմակերպությունների աճման մասին, ինչպես նաև (քաղմարմինների հետ համաձայնության գալով) զեկուցումներ լսեն այդ աշխատանքի ընթացքի մասին ամբողջ դիվիզիայում։

13· Թեկնածուներից կուսակցության անդամ փոխադրելիս անհրաժեշտ է խնամքով ուսումնասիրել ընկերների, վորպես թեկնածուների կատարած աշխատանքը, պարզելով, թե վորքան այդ աշխատանքն իրոք նպաստել է նրանց կուսակցության անդամ դառնալուն։

14· Կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում, վոր կուսկազմակերպությունները (քաղմարմինների հետ միասին) կատարեն դիվիզիաների կուսկազմակերպու-

թյունների կազմի աճման ու կանոնավորման հաշվեհարթարը մի վորոշ ժամանակաշրջանում (մոտավորապես 3—4 ամիսը մեկ անգամ), վորպեսզի գործնական ամփոփումներ անեն ու ցուցումներ տան կուսկազմակերպություններին։

## ՀԻՎԱՆԴԱԳԻՆ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

15. Նախընթաց շրջանը միանգամայն ակներև ապացուցեց, վոր ԿԿԲ կուսկազմակերպություններն առողջ են։ Բջիջներում՝ ոպպոզիցիայի դեմ մղած ներկուսակցական պայքարի հարցերի քննությունը ցույց տվեց կուսկազմակերպությունների շարքերի լենինյան ամրակուռությունը, վորոնք միահամուռ դիմադրություն ցույց տվեցին ոպպոզիցիային։

Իջել ե նաև կուսբարոյականության խախտման դեպքերի տոկոսը (ԿԿԲ ամբողջ կուսկազմակերպության վերաբերմամբ պատասխանատվության կանչվածների թիվը 3,8 տոկոսից իջել ե 2,6 տոկոսի)։

Սակայն այն պարագան, վորի մեջ ստիպված են աշխատել կուսկազմակերպությունները, անցյալ տարի տեղի ունեցած կուսզանցանքների անալիզը, վկայում են այն մասին, վոր մենք աշխատանքի առաջիկա շրջանում ես ստիպված ենք լինելու գործ ունենալ նվազ չափով զուտ կուսակցականների կողմից կուսբարոյականության առանձին խախտումների և այլ զանցանքների հետ և մինչև իսկ կուսակցության շարքերը վոչ կոմունիստական, խորթ տարրերի խցկման դեպքերի հետ։

Կոնֆերանսը հանձնարարում ե կուսհանձնաժողովներին խնամքով ուսումնասիրել, անալիզի յենթարկել



այն պատճառները, վորոնցից բղխում են հիվանդագին յերևույթները և անշեղ կռվել նրանց դեմ։

16. Այդ պայքարի ուղղությունը վորոշված ե ՀամԿ(բ)Կ 14-րդ համագումարի վորոշմամբ, վորտեղ ասված ե. «առավելապես կուսակցական դաստիարակչական աշխատանք... սակայն չթուլացնելով վճռական պայքարը կուսակցության այն տարրերի դեմ, վորոնք քայքայում են կուսակցությունը, կամ խախտում են նրա միասնությունը»։ Կոնֆերանսը գտնում ե, վոր անհրաժեշտ ե զանցանքների քննության ժամանակ հաշվի առնել նրանց ազդեցությունը տվյալ զորամասի մարտունակության վրա, այդ զանցանքների ազդեցությունը կարմիր բանակայինների մեջ պետկազմի ունեցած հեղինակության վրա։ Այնպիսի յերևույթների նկատմամբ (վոր յերբեմն նկատվել են անցյալ տարի), ինչպիսին են—հարբեցողությունը կարմիր բանակայինների մեջ, անկարգությունները զորանոցներում, կարմիր բանակայիններից փող պարտք վերցնելը, աշխատանքը խանգարող խառնակչությունները (склока) պետք ե առանձնապես խիստ մոտեցում ունենալ։

17. Կոնֆերանսը հրավիրում ե կուսկազմակերպությունների ուշադրությունն այն հիվանդագին յերևույթների վրա, վոր անցյալ տարի սաստիկ տարածված եյին, այն ե՝ հարբեցողությունը, կուսկարգապահության խախտումը, կուսանդասվածությունը (վորի մեջ նաև խառնակչությունը), անփույթ վերաբերմունքը դեպի ծառայության պարտականությունը, կոմունիստական բարոյականության խախտումը։ Կոնֆերանսը հաստատում ե բանակային 4-րդ կուսկոնֆերանսի այն վորոշումը, թե անհրաժեշտ ե ավելի խիստ մոտեցում ունենալ դեպի աճման տենդենց ունեցող

կուսզանցանքները։ Սակայն դեպի այնպիսի կուսզանցանքները, ինչպիսին են կուսդիսցիպլինայի խախտումը և կուսանզսպվածությունը (վոր 16-ից հասել են 38-ի) հարկավոր է գլխավորապես նախազգուշական-դաստիարակչական մոտեցում, վորովհետև մեծ մասամբ այդ զանցանքները կապված են կուսակցության մեջ մտնող նոր խավերի բավարար կուսդաստիարակություն չունենալու հետ։

18. Կուսկոնֆերանսը, հիշատակելով նախազգուշական-դաստիարակչական աշխատանքի ձեռք բերած նվաճումները,—իսկ այդ յերևում է նրանից, վոր իջել է արտաքսվածների տոկոսը պատասխանատվության կանչվածների քանակի նկատմամբ (44,5 տոկոսից մոտ 31,4 տոկոսը), իջել է մանավանդ արտաքսված բանվորների տոկոսը (47,2 տոկոսից՝ մոտ 30,7 տոկոս),— հանձնարարում է կուսհանձնաժողովներին շարունակել հետագա աշխատանքն այդ ուղղությամբ։

19. Անհրաժեշտ է ավելի խնամքով ուսումնասիրել կուսակցությունից ու Կոմերիտմիությունից հեռանալու պատճառները։

20. Ընկերներին տրվող կուսպատիժները (բացի բջիջի նախագահության մեջ արած ընկերական հանդիմանություններից) պետք է հաստատվեն ամբողջ կուսակցական կազմակերպության կողմից և վոչ մի դեպքում չպետք է քննության առնվեն միայն կուսբյուրոյի կողմից (իսկ այդպիսի դեպքեր տեղի յեն ունեցել)։

21. Կոմերիտմիության աճումը կանոնավորելու հարցերին նվիրած ուշադրությունն ուժեղացնելու հետ միասին, կուսհանձնաժողովները պետք է ավելի գործնական մտնեն Կոմերիտմիության մեջ յեղած հիվանդագին յերևույթների ուսումնասիրությանն ու նր-



րանց դեմ պայքարելու հարցերին։ Այդ աշխատանքում պետք է սերտ կապվել Կոմերիտմիության կոմիտեներին կից գործող կոնֆլիկտային հանձնաժողովների հետ։ Կուսհանձնաժողովները (համաձայնության գալով քաղմարմինների հետ) պետք է պարբերաբար իրենց նիստերում դնեն կոմերիտական կազմակերպության դրության վերաբերող հարցեր։

22. Կոնֆերանսը հանձնարարում է կուսհանձնաժողովներին (քաղմարմինների հետ միասին) ավելի խնամքով ուսումնասիրել ներկուսակցական դեմոկրատիայի կիրառման հարցերը, և մանավանդ պետկազմին պատկանող կուսակցականների փոխհարաբերությունները քաղմարտիկների հետ, ծառայության դիրքի ազդեցությունը կուսակցական փոխհարաբերությունների վրա։

## ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

23. Կուսհանձնաժողովներն իրենց ամբողջ աշխատանքի ընթացքում պետք է ամենասերտ կապ ունենան մասսաների հետ, ձգտելով այնպես անել, վոր՝ «կուսակցության բոլոր անդամները նայեն վերահսկիչ հանձնաժողովների վրա այնպես, ինչպես իրենց ընկերական կազմակերպությունների վրա» (ՀամԿ(բ)Կ 14-րդ համագումար)։ Այդ աշխատանքի հիմնական ուղղություններն են՝ կուսատենակալների ինստիտուտը, կուսհանձնաժողովի զեկուցումները կուսհավաքույթներում, կուսհանձնաժողովների ընդլայնված նիստերը, գործերի ուսումնասիրությանն առանձին կուսակցականներին մասնակից դարձնելը և այլն։ Կուսհանձնաժողովների նյութերը պետք է լայն կուսակցական մասսաների սեփականությունը դառնան։

24. Կուսատենակալների ինստիտուտը լիովին արդարացրեց իրեն: Նրանց աշխատանքի բարելավման նպատակով կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում. ա) կուսատենակալների ընտրությունը կատարել այն կարմիր բանակայիններից, կուրսանտներից ու կրտսեր հրամկազմից (բանվորներից, գյուղացիներից), վորոնք ունեն առնվազն մի տարվա կուսակցական ստաժ (նկատի ունենալով ավելի մեծ ստաժով սոսկական բանակայինների բացակայությունը). բ) կուսատենակալների համար խորհրդակցություններ կազմակերպել, հրահանգել նրանց, գ) կուսկազմակերպությունները պետք է ղեկավարեն իրենցից ջոկված կուսատենակալներին:

25. Կուսհանձնաժողովները պետք է պարբերաբար (իրենց լիազորությունների ժամանակաշրջանում առնվազն յերկու անգամ) հաշիվ տան կատարած աշխատանքի մասին իրենց կուսկազմակերպություններին:

26. Կուսկազմակերպությունները պետք է ձգտեն ստեղծելու իրենց շուրջը հաստատամիտ, տոկուն կուսակցականների կադր, վորոնց պետք է սիստեմատիկ կերպով աշխատանքի մեջ քաշեն:

27. Անհրաժեշտ է ուժեղացնել կուսհանձնաժողովների գործունեության լուսաբանումը բանակային ու դիվիզիաների (ազգային դիվիզիաներում) մամուլի էջերում, ինչպես նաև քաղաքացիական մամուլի կուսկյանքի բաժիններում:

28. Անցյալ տարի մեծ չեյին նվաճումները կուսհանձնաժողովների և ԿՎՀ ու կուսկոմների կապի գործում: Կոնֆերանսը հանձնարարում է կուսհանձնաժողովներին ավելի սերտորեն կապել վերահսկիչ հանձնաժողովների ու կուսկոմների հետ, պարբերաբար զեկուցել նրանց կուսկազմակերպության դրության ու



աճման մասին և ստանալ նրանցից այդ հարցերին վերաբերող բոլոր ցուցումները: Յերկրային դիվիզիաների կուսհանձնաժողովները պետք է իրազեկ լինեն աճումը կանոնավորելու հարցերին ու փոփոխական կազմի մեջ տեղի ունեցող հիվանդագին յերևույթներին:

29. Պուռ-ի Վերահսկիչ Հանձնաժողովի առաջ հարց հարուցել գործավարության կրճատման և դիվկուսհանձնաժողովներում հաստիքավոր (շտատով) տեխնիքական քարտուղար ունենալու խնդիրը:

## ԲԱՆԱՁԵՎ

### ԱՍՖԽՀ ԲԱՆԳՅՈՒՂՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԱՏԻ ՌԱԶՄԱ–ԾՈՎԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Լսելով ԱՍՖԽՀ Բանգյուղտեսչության Ժողկոմատի Ռազմա–Ծովային տեսչության գործունեության զեկուցումը, կոնֆերանսը հիշատակում է Ռազմա–Ծովային տեսչության աշխատանքի մեջ հետևյալ հիմնական նվաճումները:

1. Իրագործված են բանակային 4-րդ կուսկոնֆերանսի առաջարկությունները.

2. 1925—26 թվի ծրագրով բավական լրիվ ընդգրկված են տեղական այն հարցերը, վոր արտահայտում են ԿԿԲ առանձնահատկություններն ու զորամասերի առաջարկները.

3. Արտածրագրային աշխատանքով ընդգրկված են այն եպիզոդիկ հարցերը, վոր էական դեր են խաղում ԿԿԲ զորամասերի կյանքում.

4. Հետազոտված են ռազմական շինարարության և զորամասերի մարտունակության ամրացման խոշոր հարցերը (հետազոտված են՝ կարգապահությունը, դաշ–

տային պատրաստությունը, հրամկազմի վերապատրաստությունը)·

5· Ակտիվ աջակցություն են ցույց տվել Ռազմա-Ծովային Տեսչությանը (կարգապահության հետապնդում) Կովկասյան Կարմրադրոշ Բանակի ու Կասպից Ռազմական Նավատորմի քաղմարմիններն ու կուսհանձնաժողովները և հրավիրված է զորամասերի (նավամասերի) կուսկազմակերպությունների ուշադրությունը Ռազմա-Ծովային Տեսչության գործունեությանն աջակցելու վրա·

6· Բարձրացել է Ռազմ.-Ծով. Տեսչության աշխատողների վորակը, և կատարելագործված են տեսուչների աշխատանքի մեթոդները:

Վորպես գործնական առաջարկներ, 5-րդ կոնֆերանսը մտցնում է հետևյալը·

1· Զորամասերի (նավամասերի) քաղմարմինների ու կուսկազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ անհրաժեշտ է ձեռք առնել ավելի վճռական միջոցներ մասսայականացնելու համար՝ Կովկասյան Կարմրադրոշ Բանակի ու Կասպից Ռազմական Նավատորմի կուսակցականների, կոմյերիտականների ու անկուսակցականների լայն խավերում՝ Ռազմ. Ծով. Տեսչ. աշխատանքները, Բանգյուղտեսչության մարմինների գործունեությունն ու Բանգյուղտեսչության նոր խնդիրները (մասնավորապես անհրաժեշտ է մասսայականացնել ընկ. Որժոնիկիձեյի զեկուցագիրը (докладная записка):

2· Ռազմ.-Ծով.-Տեսչության աշխատանքներն ավելի լայն չափով լուսաբանելու և ԿԿԲ ու Կասպռազմնավատորմի կյանքին նրա մասնակցությունն ուժեղացնելու նպատակով անհրաժեշտ է, վորպեսզի պարբերա-



կան զեկուցումներ ուղարկելու և զորամասերի (նավամասերի) հետազոտման ժամանակ տեսուչների արած բանավոր ինֆորմացիայի հետ միասին, ռեալ հնարավորությունների սահմաններում, Ռազմծովտեսչությունն իր գործունեության մասին տեղեկացնի նաև պարբերական մամուլին ,,Военный Вестник'', ,,Красная Звезда'', ,,Красный Воин'', և ազգային զինվորականների թերթերին):

3· ԿԿԲ ու Կասպռազմնավատորմում խնայողության ռեժիմի ճիշտ կիրառումը պահանջում է, վորպեսզի Ռազմծովտեսչությունն ավելի մեծ մասնակցություն ցույց տա այդ աշխատանքին: Մասնավորապես ՌԾՏ պետք է հատուկ ուշադրություն դարձնի մթերումների հարցերի ուսումնասիրության վրա, նկատի ունենալով այդ մթերումներին մասնավոր առևտրականի ցույց տված մասնակցության տեսակարար մեծ կշիռը:

4· Հատուկ կարևոր նշանակություն տալով բանակային ապարատի զանազան ողակներում յերևացող բյուրոկրատիզմի դեմ մղած պայքարին, կոնֆերանսը ՌԾՏ լուրջ խնդիրն է համարում «բողոքների բյուրոյի» աշխատանքի ծավալումը: Այդ խնդրի իրագործումը հնարավոր է միայն այն ժամանակ, յերբ ՌԾՏ լայն չափով իրազեկ կանի զինվորականներին՝ բանակային ապարատի առանձին մասերի աշխատանքներում նկատած թերությունների մասին:

Բյուրոկրատիզմի դեմ մղած պայքարի գործում ՌԾՏ ինֆորմացիայի մի այլ աղբյուրն է գործնական կապը դատախազության և «կարմիր բանակային նամակների բյուրոների հետ»:

Սահմանված արտոնություններով զինվորականնե-

րին չբավարարելու և այլ յերևույթների դեմ տված բողոքների ու դիմումների շուտափույթ լուծման համար առանձնապես կարևոր է հրավիրել Բանվորագյուղացիական Տեսչության հանրապետական մարմինների հատուկ ուշադրությունը:

5. Բանակում (նավատորմում) բյուրոկրատիզմի դեմ պայքար մղելու մեջ՝ ԲԳՏ հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի՝ ԿԿԲ և Կասպռազմնավատորմի զորամասերի (ռազմանավերի) ու հիմնարկների հաշվետվության ու գործավարության սիստեմի կրճատման ու պարզեցման հնարավորությունների հարցի հետազոտումը:

Հնարավորության դեպքում նպատակահարմար է մտցնել ԲԳՏ՝ 26—27 թվի աշխատանքների ծրագրի մեջ ԿԿԲ ու Կասպռազմնավատորմում գործադրվող հաշվետվության ու գործավարության սիստեմի հետազոտումը:

6. Կոնֆերանսը գտնում է, որ ԲԳՏ արտադրական աշխատանքի կարգով պետք է պատշաճ ուշադրություն դարձնի բանակի մատակարարման մարմինների գործունեության առանձին աննորմալությունների ուսումնասիրության և վերացման վրա, աննորմալություններ, որ ընդհանուր նշանակություն ունեն ԿԿԲ համար, և բղխում են ինչպես Մատակարարման Պետի Վարչության աշխատանքի թերություններից, այնպես էլ նրանից անկախ:

7. Կուսկոնֆերանսն անհրաժեշտ է համարում համալրել ԲԳՏ համապատասխան այնպիսի աշխատողներով, որոնք ծանոթ են ազգային զորամասերի առանձնահատկություններին և գիտեն ազգային լեզուները:



## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 14-րդ համագումարից հետո կուսակցությունը վերստին ստիպված էր կենտրոնացնելու իր ուշադրությունը նոր օպոզիցիայի՝ գաղափարապես տրոցկիզմով գլխավորված օպոզիցիոն բլոկի դեմ մղած ներկուսակցական պայքարի հարցերի վրա: Օպոզիցիոն բլոկի հայացքների հակալենինյան սիստեմը, ֆրակցիոն աշխատանքն ու գործնական առաջարկները բոլշևիկյան պատշաճ դիմադրություն գտան ամբողջ կուսակցության կողմից և ճիշտ գնահատվեցին 15-րդ համամիութենական կոնֆերանսի կողմից, որպես սոցիալ-դեմոկրատական թեքում մեր կուսակցության մեջ: Օպոզիցիայի սնանկացած պարագլուխների յելույթը Կոմինտերնի Գործկոմի 7-րդ ընդլայնած պլենումում նորից կատարյալ ակնհայտությամբ հաստատեցին այդ գնահատականի ճշտությունը:

ԿԿԲ կուսակցական կազմակերպությունները հաջողաբար անցան ընդհանուր կուսակցական պայքարի բոլոր էտապներից: Ամբողջ կուսակցության հետ միասին նրանք միահամուռ կերպով դիմադրություն ցույց տվեցին օպոզիցիայի հակալենինյան յելույթներին: Ամբողջ կուսակցության հետ միասին նրանք գաղափարապես աճեցին, հարստացան քաղաքական փորձառությամբ, համախմբվեցին:

Այն ժամանակ, յերբ բանակային 3-րդ կուսկոնֆերանսը հիշատակել էր, թե՝ «բանակային կուսկազմակերպության մեծ մասը կտրված է ընդհանուր կուսակցական նշանակություն ունեցող հարցերի ըմբռնումից», այժմ արդեն պետք է հիշատակվի այդ դրության

արմատական փոփոխություն: Կուսակցության ան- դամների ամբողջ մասսան տեղյակ է կուսակցության ողջ կյանքին ու մասնակցում է կուսակցության առաջ ծառացող հարցերի լուծման:

ԿԿԲ կուսակցական կազմակերպությունների հեր- թական խնդիրն է աշխատանքի հետագա ուժեղացումը՝ 14-րդ համագումարի և 15-րդ համամիութենական կոնֆերանսի վորոշումների հիման վրա: Անհրաժեշտ է ավելի ուժեղացնել կուսկազմակերպությունների գա- ղափարական-քաղաքական կյանքը, կուսակցության անդամների ու թեկնածուների ամբողջ մասսան պետք է առավելագույն չափով լրիվ ու հաստատապես յու- րացնի կուսակցական վորոշումները:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2. Կոնֆերանսը նշում է ընդհանուր աշխուժացում ԿԿԲ կուսակցական կազմակերպությունների կյանքում ու գործունեության մեջ՝ բանակի պայմաններում ներ- կուսակցական դեմոկրատիայի կիրառման հիման վրա:

Այդ աշխուժացումն առանձնապես վառ ցույց տվե- ցին գնդային բյուրոների, բջիջների քարտուղարների ու նախագահությունների աշնանային վերընտրու- թյունները: Կուսկազմակերպությունները ընդհանուր առմամբ լրիվ կատարեցին իրենց ղեկավար դերը ան- կուսակցական մասսայի նկատմամբ:

Կուսակցական աշխատանքում ամենաէական նվա- ճումներն են.—

ա) Վաշտային բջիջների ցանցի հետագա ծավա- լումը և կուսկազմակերպությունների կազմի թվական աճումը, վորի հետ միասին անշեղ ավելացել է ասկա- կան խավը և բարձրացել է կուսակցական հրամկազմի



թիվը (1925 թվի հոկտեմբերի 1-ին յեղել են բջիջներ— 274, կուսակցության անդամներ՝ 1894, թեկնածուներ՝ 1223, առ 1-ն հոկտեմբեր 1926 թվի կան բջիջներ՝ 311, կուսակցության անդամներ՝ 2154, թեկնածուներ՝ 1327: Սոսկական կարմիր բանակայիններից կուսակ- ցության անդամ ու թեկնածու յեն յեղել 1925 թվի հու- լիսի 1-ին 862 հոգի, 1926 թվի հուլիսի 1-ին՝ 1280 հո- գի, հրամկազմից կուսակցության անդամ ու թեկնա- ծու յեն յեղել 1925 թվի հունվարի 1-ին 1263 հոգի և 1926 թվի հուլիսի 1-ին՝ 1432 հոգի):

բ) Ակտիվի ու կուսակցության անդամների ամ- բողջ մասսայի գաղափարական-քաղաքական անշեղ ա- ճումը՝ կուսակցական ժողովներում բոլոր համակու- սակցական ու ընդհանուր քաղաքական հարցերի հար- ցադրման ու քննության հիման վրա, ինչպես նաև կու- սակցական լուսավորության լայն ծավալված աշխա- տանքի հիման վրա:

գ) Կազմակերպչական-կուսակցական աշխատանքի զգալի բարելավում ու զարգացում, վոր նպաստել է ակտիվի ընդարձակման և ամբողջ կուսկազմակերպու- թյունների կոլլեկտիվ աշխատանքի ուժեղացման (վե- րընտրությունների կազմակերպումը, աշխատանքի կո- միսիոն մեթոդը, բյուրոյի կազմի ընդարձակումը, աշ- խատանքի ավելի ճիշտ բաժանումը բջիջների անդամ- ների միջև):

դ) Կուսկազմակերպությունների՝ զորամասի շինա- րարությանը ցույց տված մասնակցության վորոշ ու- ժեղացումը, մասնավորապես ռազմական կարգապա- հության բավական մեծ ուշադրություն հատկացնելը:

ե) Անկուսակցական կարմիր բանակային մասսայի քաղաքական գիտակցության մակարդակի բարձրացու-

մը և փոքր հաջողություններ այդ մասսայի առաջավոր մասին ակտիվ աշխատանքի մեջ քաշելու գործում:

Կուսակցական աշխատանքի ամենաէական թերությունների թվին պետք է դասել.

ա) այնքան էլ բավարար չի դրված աշխատանքը անկուսակցականների մեջ. մասնավորապես բավականաչափ ուսումնասիրված չէ կարմիր բանակայինների բանվորական մասը և բավականաչափ ընդգրկված չեն չքավոր գյուղացիներին ու բատրակներին պատկանող կարմիր բանակայինները, միանգամայն բավարար չէ կուսկազմակերպության մոտեցումը դեպի անկուսակցական պետկազմը, դեռ բավարար մոտեցում չկա դեպի ադմպրոպաշխատանքի ղեկավարությունը, ինչպես նաև դպրոցական-քաղաքական պարապմունքների գծով.

բ) զգալի թերություններ կան կուսկազմակերպությունների աճումը կանոնավորելու գործում, այսպես օրինակ՝ թույլ է աշխատանքը դեպի կուսակցությունը յեղած ձգտման կանոնավորումը. թույլ է աճման կանոնավորումը սոցիալական կազմի տեսակետից (1925 թվի հոկտեմբերից մինչև 1926 թվի սեպտեմբերը թեկնածու ընդունելու մասին դիմումներ տվողներից 17,1 տոկոսը յեղել է բանվոր, 72,2 գյուղացի և 10,7 % այլք, ընդունվածներից 18,2 % յեղել է բանվոր 72,4 գյուղացի և 9,4 տոկոսն այլք. այդ բաշխումը համարյա չի տարբերվում ԿԿԲ ամբողջ կազմի բաշխումից), թույլ է ուսումնասիրված մերժված դիմումների հարցը, դեռ ևս բավական պլանաչափություն չկա ընդունելության մեջ, չի վերացված զորացրումից առաջ նկատվող «հարվածայնությունը».



գ) դեռ թույլ է թեկնածուների հետ տարվող աշխատանքը մի շարք կուսկազմակերպություններում.

դ) բավականաչափ գործնական մոտեցում չկա դեպի զորամասի շինարարության հարցերը և նրանք լրիվ չեն ընդգրկված:

ե) կուսաշխատանքի գծով բավարար գործնական միջոցներ չեն ձեռնարկվում ռազմական ժամանակի պատրաստության ասպարեզում:

Առաջիկա ժամանակաշրջանի խնդիրը պետք է լինի՝ զարգացնել յեղած նվաճումներն ու վերացնել նկատած թերությունները: Հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացված լինի ամբողջ կուսակցական աշխատանքի որակի բարձրացման վրա և ընդունած որոշումների կատարումը ստուգելու, պատվերների իրագործման հսկողության վրա:

Ներկուսակցական գաղափարական ու կազմակերպչական աշխատանքի հաջողությունները պետք է օգտագործվեն, որպես բարենպաստ նախադրյալներ՝ ամեն կերպ կուսակցական ազդեցությամբ անկուսակցական մասսաների ընդգրկումը բարելավելու համար:

## ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԵՋ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Անկուսակցականների մեջ տարվող աշխատանքում կուսակցական կազմակերպությունները պետք է յելնեն՝ անկուսակցական մասսաների աճող քաղաքական ակտիվությունն իրենց ազդեցությամբ ընդգրկելու հիմնական խնդրից: Կուսակցական կազմակերպությունները պետք է իրենց աշխատանքը կառուցեն այնպես, որպեսզի ոչ միայն ամբողջապես ընդգրկեն անկուսակցական մասսային, այլև հաշվի առնեն ան-

կուսակցականների բազմատարր խմբերը (բանվորներ, չքավորներ ու բատրակներ, միջակների հիմնական մասսա, միջնակարգ կրթությամբ կարմիր բանակայիններ, պետկազմ, որի թվում նաև կրտսեր պետկազմը):

4. Անկուսակցականների մեջ տարվող աշխատանքի հիմքում պետք է լինեն պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարներն ու նրա ղեկավարող դերը սոցիալիստական շինարարության մեջ՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, բանվոր դասակարգի ու չքավոր գյուղացիության և միջակ գյուղացիության հիմնական մասսայի ամուր դաշինքը, ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների յեղբայրական միությունը, Հոկտեմբերյան հեղափոխության միջազգային նշանակությունն ու խնդիրները, Խորհրդային Միության զինված ամուր պաշտպանության անհրաժեշտությունը: Հաշվի առնելով անցյալ փորձը, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել պրոլետարիատի դիկտատուրայի հարցի ավելի վորոշակի խնդրադրման վրա: Անհրաժեշտ է ավելի լավ հիմքերի վրա դնել կուսակցության հերթական վորոշումների մասսայականացումը, մանավորապես, ավելի լայն ու ավելի լավ պետք է պրոպագանդել չքավորության ոգնության ասպարեզում կուսակցության ձեռք առած միջոցները:

Ամբողջ աշխատանքը պետք է կառուցվի կոնկրետ ու համոզիչ նյութի վրա, վճռականապես վերացնելով «բռնադրոսիկ հորդորների» ու «ծաղկեցնելու» մեթոդները:

5. Անկուսակցական մասսաների մեջ տարվող աշխատանքի ու ղեկավարության կազմակերպչական կառուցման ասպարեզում անհրաժեշտ է առաջնորդվել վարչացումն ու չափազանց ճիշտ ռեգլամենտացիան վերացնելու ուղղությամբ: Լիովին պահպանելով ղեկավարությունը և ապահովելով կուսակցական գծի կիրառումն աշխատանքում, անհրաժեշտ է սիստեմատիկ ընդարձակել անկուսակցական մասսաների ինքնագործունեության հայտնաբերման իրական հնարավորությունները: Անհրաժեշտ է ավելի յեռանդով, քան մինչև այժմ, ակտիվ աշխատանքի քաշել առաջավոր անկուսակցականներին, լիովին ոգտագործելով աշխատանքի յեղած բոլոր ձևերը (կոնֆերանսներ, ժողովներ, արտադրողական աշխատանք, անտեսական աջակցող հանձնաժողովներ, կապի հանձնաժողովներ, կամավոր ընկերություններ և այլն):

6. Անհարժեշտ է շարունակել և ուժեղացնել անկուսակցական ակտիվի համախմբման աշխատանքը, այդ ակտիվն է բջիջի իրական հիմքը և բջիջն ամբողջ անկուսակցական մասսայի հետ կապողը (ակտիվի ավելի լավ հայտնաբերումն ու նրա աշխատանքի հաշվառումը, ակտիվի կազմի սիստեմատիկ ընդարձակումը, նրան ինքնուրույն աշխատանքի մեջ քաշելը):

7. Զորամասերի ամբողջ հասարակական կյանքի ու քաղ-լուսաշխատանքի կարգով անհրաժեշտ է չքավորներին ու բատրակներին պատկանող կարմիր բանակայինների համար լիովին ապահովել առավելագույն կուլտուր-քաղաքական ոգնություն: Աշխատանքի յուրաքանչյուր ճյուղ (անհատական մշակում, հասարակական կազմակերպություններ, ժողովներ, արտադրողական աշխատանք, քաղպարապմունքներ, կոնցերտական աշխատանք և այլն) պետք է սիստեմատիկ ուղղվի՝ կարմիր բանակային մասսայի չքավոր-բատ-

րակային խավի ընդգրկման, ակտիվացման ու կուլտուր-քաղաքական աճման տեսակետից: Այդ աշխատանքը բանակի պայմաններում կազմակերպչորեն չպետք է առանձնացնել:

8. Կուսկազմակերպությունը պետք է ուշադրություն նվիրի այս տարի քանակով մեծացած միջնակարգ կրթությամբ կարմիր բանակայինների խավին: Անհրաժեշտ է կարմիր բանակայինների այդ մասը մոտեցնել քաղլուսավորական աշխատանքին, օգտագործել նրանց կուլտուրական զարգացումը մնացած կարմիր բանակայիններին օգնելու համար: Միջնակարգ կրթությամբ բանակայիններին, մնացած կարմիր բանակայինների մեջ տարվող աշխատանքում, վորպես ակտիվիստներ օգտագործելիս, չպետք է նրանց չափից դուրս ծանրաբեռնել, հաշվի առնելով նրանց ծառայության սահմանափակ ժամկետը, և այն, վոր անհրաժեշտ է նրանցից պատրաստել պահեստի հրամանատարներ:

9. Կուսակցական կազմակերպությունները պետք է ավելի մոտենան անկուսակցական պետկազմին՝ նրանց իրենց ազդեցությամբ ընդգրկելու նպատակով: Կուսկազմակերպությունները պետք է ավելի լավ ուսումնասիրեն պետկազմի տրամադրությունները, ձգտեն, վոր ավելի մեծ մերձեցում լինի կուսակցական ու անկուսակցական պետկազմի միջև, հաշվի առնեն և օգտագործեն քաղլուսաշխատանքին մասնակցող անկուսակցական ակտիվի աճումը: Անհրաժեշտ է ավելի ընդարձակ ձևով քաղաքական հարցեր դնել պետկազմի ժողովներում և ուժեղացնել կուսղեկավարությունը՝ պետկազմի կուլտուրական կարիքների սպասարկման ասպարեզում:

10. Կուսկազմակերպությունները պետք է ամեն



կերպ աջակցեն պետկազմի առանձին խմբերի և պետկազմի ու կարմիր բանակայինների միջև ընկերական կապերի ամրացմանը:

11. Արտադպրոցական աշխատանքի ասպարեզում կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ուժեղացնել կուսղեկավարությունը, բարձրացնել գաղափարական վորակը, ուժեղացնել պատասխանատվությունը և արտադպրոցական աշխատանքը դարձնելու իսկապես ամբողջ բանակի հասարակայնության գործ: Վորպես հերթական խնդիր, կուսկազմակերպությունների առաջ դրված է վճռական պայքար մղելը արտադպրոցական աշխատանքում յեղած չաբլոնի, ավելորդ ռեգլամենտացիայի, արտադպրոցական աշխատանքներին մասնակցող կարմիր բանակայինին նախաձեռնությունից զուրկ կամակատար դարձնելու դեմ: Կուսկազմակերպությունները պետք է նպաստեն, վորպեսզի կարմիր բանակայինների անկուսակցական մասսան առավելագույն չափով լրիվ արտահայտի իր հետաքրքրությունը, կարծիքներն ու ցանկություններն արտադպրոցական աշխատանքի հարցերի վերաբերյալ:

12. Կուսակցական կազմակերպությունները պետք է ընդառաջեն կարմիր բանակայինների՝ դեպի հանրակրթական ուսուցումն ունեցած ձգտումը և օգտագործեն այդ՝ կարմիր բանակայինների քաղաքական գիտակցությունն ու ռազմական պատրաստությունը բարձրացնելու համար:

13. Հաշվի առնելով, վոր դպրոցական-քաղաքական պարապմունքները կարմիր բանակային մասսայի քաղաքական դաստիարակության հիմնական ձևերից մեկն են, կուսկազմակերպությունները պետք է ուժեղացնեն քաղպարապին ցույց տված իրենց աջակցու-

թյունը՝ քաղպարապմունքների գաղափարական առավելագույն բարձր վորակ ձեռք բերելու համար։

14. Կուսկազմակերպությունները մինչև այժմ բավականաչափ հաշվի չեն առնում զինթղթակիցների, վորպես անկուսակցական ակտիվի լավագույն մասերից մեկի—աշխատանքի դերը։ Այդ ասպարեզում հերթական խնդիրն է՝ ուժեղացնել զինթղթակցային աշխատանքին ցույց տված կուսակցական ղեկավարությունն ու զինթղթակիցների քաղաքական դաստիարակությունը՝ նրանց ամենորյա գործունեության ընթացքում։ Ավելի յեռանդով պետք է առաջ քաշել անկուսակցական զինթղթակիցներին խմբկոմների կազմի և հասարակական աշխատանքի բոլոր ձևերի մեջ։

15. Չնայած բանակային 4-րդ կուսկոնֆերանսի վորոշմանը, անկուսակցականների մեջ տարվող աշխատանքի հաշվառումը չափազանց թույլ է։ Կուսակցական կազմակերպությունները պետք է ուշադրություն դարձնեն այդ թերության շուտափույթ վերացման վրա։

## ԲԱՆԱԿԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՄՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16. Կուսկազմակերպությունների աճման ու ներքին ամրացման հետ միասին հետզհետե պետք է աճի և նրանց դերը ռազմական շինարարության մեջ։ Չփոփոխելով այդ աշխատանքի գոյություն ունեցող կազմակերպչական շրջանակները (Պուռ-ի 1924 թվի № 32 շրջաբերական) անհրաժեշտ է այնպես անել, վորպեսզի անշեղ բարձրանա կոլլեկտիվների ու բջիջների ազդեցությունը զորամասի ամբողջ կյանքի վրա, ավելի ակտիվ աջակցություն ցույց տրվի պետկազմին՝ գանելու համար գործնական միջոցներ աշխատանքի ու զորա-



մասի կացության մեջ յեղած թերությունները վերացնելու նպատակով։

17. Այդ խնդրի լուծմանը, մանավանդ միահրամանատարության պրակտիկայի ընդարձակումով, պետք է ամենաակտիվ մասնակցությունը ցույց տա կուսակցական պետկազմը։ Կուսակցական պետկազմը պարտավոր է նախաձեռնություն ցույց տա՝ կոլլեկտիվների ու բջիջների առաջ դնելով զորամասի կյանքի այն հարցերը, վորոնք պահանջում են կազմակերպել հասարակական կարծիք, կամ կարիք ունեն բջիջի օգնության։

18. Խնայողության ռեժիմի գործնական կիրառման առթիվ կուսակցական կազմակերպությունները պետք է անհամեմատ մեծ չափով մտնեն զորամասերի տնտեսական կյանքի հարցերին, և մասնավորապես, պետք է ուժեղացնեն տնտեսական աջակցող հանձնաժողովներին ցույց տված ղեկավարությունը։ Հավասարապես անհրաժեշտ է ավելի կանոնավոր ձևով դնել շարային կյանքի հարցերը։

19. Զորամասի կյանքին վերաբերյալ հարցեր դնելուն անհրաժեշտ է ավելի գործնական բնույթ տալ (ինչպես այդ արդեն մատնանշված է բանակային 4-րդ կուսկոնֆերանսի կողմից), վորի համար հարկավոր է համապատասխան ձևով բարելավել նախապատրաստական աշխատանքը։

## ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃՄԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ

20. Անկուսակցական մասսայի աճող ակտիվությունը և աճման կանոնավորման թերություններն անցյալ տարում (տես վերև ասածը) վկայում են այն մասին, վոր անհրաժեշտ է այդ հարցին նվիրել ամենալուրջ ուշադրությունը։ Կոնֆերանսն առանձնապես

շեշտում է պրոլետարական կորիզի առավելագույն ավելացման անհրաժեշտությունը, վորովհետև կուսակցության շարքերը գրաված բանվորների քանակը, համեմատած ամբողջ բանակում յեղած բանվորների քանակի հետ, յերբեք չի կարելի բավարար համարել: Կարմիր բանակայինների գյուղացիական մասի նկատմամբ կատարվող աշխատանքը պետք է ապահովի առաջին հերթին բատրակ-չքավորական տարրերի կուսակցության մեջ գրավելը: Դրա հետ միասին կոնֆերանսը հաստատում է 4-րդ կուսկոնֆերանսի այն վորոշումը, վոր անհրաժեշտ է ոգտագործել նպաստավոր պայմանները բանակում միջակ գյուղացիներից կարմիր բանակայինների լավագույն մասին կուսակցության շարքերն ընդունելու համար:

21. Կոնֆերանսն առաջադրում է հետևյալ գործնական միջոցներն աճումը կանոնավորելու ասպարեզում.

ա) Ավելի առաջ քաշել ծառայության առաջին տարում աչքի ընկնող ակտիվին (1903 թվի ընդունելության չափազանց դանդաղ թափը լիովին հաշվի առնել 1904 թվի ընդունելության ժամանակ նրա ծառայության առաջին տարում).

բ) ավելի լավ հաշվի առնել դեպի կուսակցությունը ձգտողների և դիմում տվողների քանակը, վորի հիման վրա խնամքով ուսումնասիրել մերժումների պատճառները (վորոնց թիվն անցյալ տարի չափազանց մեծ եր) և մերժման ազդեցությունը տվյալ ընկերոջ հետագա աշխատանքի վրա.

գ) ուսումնասիրել կուսքաղլուսաշխատանքի զանազան ճյուղերի ազդեցությունը դեպի կուսակցությունը յեղած ձգտումը.

դ) կուսկազմակերպություններում, կուսբյուրոներում, քաղմարմիններում կուսհանձնաժողովների հետ միասին վորոշ ժամանակամիջոցում կատարել կուսակցության աճման ամփոփումը, դնելով այդ հարցը կուսժողովներում. այդ հնարավորություն կը տա կենտրոնացնելու ամբողջ կազմակերպության ուշադրությունը նրա աճման հարցերի վրա և իրագործելու այդ պրոցեսի ակտիվ ղեկավարությունը:



## ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

22. Ներկուսակցական գլխավոր խնդիրը կոնֆերանսը համարում է լայն ակտիվ և կուսակցության բոլոր անդամների գաղափարական-քաղաքական մակարդակի հետագա բարձրացման, նրանց բոլշևիկյան դաստիարակության ու գաղափարական կոփվածության աշխատանքները: ԿԿԲ կուսկազմակերպությունները պետք է հետագայում ես «վճռական գաղափարական պայքար մղեն մեր կուսակցության մեջ յեղած սոցիալ-դեմոկրատական թեքման դեմ, բացատրելով մասսաներին ոպպոզիցիոն բլոկի սկզբունքային տեսակետների սխալականությունը և լուսաբանելով այդ տեսակետների ոպպորտունիստական բովանդակությունը, «թեկուզ ինչպիսի «հեղափոխական» ֆրազներով էլ նրանք ծածկված լինեն»:

Կուսկազմակերպությունները պետք է ապագայում ես առանց տատանման աշխատանք տանեն ամրացնելու համար մեր կուսակցության լենինյան միասնությունը, վորպես յերաշխիք մեր կուսակցության հզորության, պրոլետարիատի դիկտատուրայի ամրության և սոցիալիստական շինարարության հաջողության:

Կուսակցական շինարարության հերթական խըն-

դիրները պետք է լուծվեն ներկուսակցական դեմոկրատիայի սկզբունքների կիրառման և համակուսակցական ու տեղական հարցերի քննության ժամանակ ամբողջ կուսակցական մասսայի ակտիվության բարձրացման հիմունքով:

Կուսակցական լուսավորությանը, վորպես ներկուսակցական դաստիարակչական ամբողջ աշխատանքի կարևորագույն մասին, պետք է ավելի մեծ ուշադրություն նվիրել:

23. Կոնֆերանսը նորից հրավիրում է կուսակցության բոլոր անդամների ուշադրությունը՝ կուսկազմակերպությունների ըստ մշտական ու փոփոխական կազմերի բաժանվելու վտանգի վրա, վորի մասին մատնանշել է բանակային 4-րդ կուսկոնֆերանսը: Կուսակցական կազմակերպություններն առաջվա պես պետք է ձգտեն՝ ամրացնելու ներկուսակցական դողումը, հաղթահարելու պաշտոնեական դրության վորևէ ազդեցությունը կուսակցական հարաբերությունների վրա, համախմբելու բջիջները և նրանցից կազմելու մի սերտ կոմունիստական ընտանիք:

24. Կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում, վոր կուսկազմակերպությունները հատուկ ուշադրություն դարձնեն թեկնածուների հետ տարվող աշխատանքների վրա, ոգտագործելու համար թեկնածուական ստաժը, կուսակցության իսկական անդամ մշակելու նպատակով (թեկնածուների գործնական աշխատանքի ժամանակին ստուգումը, անհատական ոգնությունը պատրաստության ժամանակ):

25. Անցած գարնանն ու աշնանը տեղի ունեցած՝ կուսբյուրոների, բջիջների նախագահությունների ու քարտուղարների վերընտրությունները ներկուսակցական խոշոր կամպանիաների նշանակություն ստացան: Յեկող հաշվետու—վերընտրական կամպանիաները պետք է հաստատապես մտնեն կուսաշխատանքի սիստեմի մեջ և նրանց կիրառումը պետք է ավելի ևս կատարելագործվի: ԿԿԲ Քաղվարչությունը վերընտրություններին գրած իր փակ նամակներում պետք է տա վոչ միայն հրահանգչական նյութ, այլ և մի ամփոփ ինֆորմացիա՝ բանակի կյանքի հիմնական հարցերի վերաբերյալ:

26. Կուսաշխատանքի կազմակերպչական դրության գլխավոր հերթական խնդիրը պետք է լինի՝ ձգտել հասնելու հրահանգների և ընդունված վորոշումների ավելի վորոշակի ստուգման: Ստուգման և ինքնաստուգման կուլտուրը պետք է հաստատապես ու սիստեմատիկ կերպով կիրառվի ինչպես ղեկավարող կուսմարմինների, այնպես էլ բջիջների կողմից: Ստուգման հիմքը պետք է լինի ամենից առաջ կատարվող աշխատանքի վորակը պարզելը:

27. Առաջիկա շրջանում անհրաժեշտ է ուժեղացնել՝ կուսկազմակերպություններին ռազմական ժամանակվա պայմանների աշխատանքների պատրաստության մեջ քաշելը, ավելի լայն կերպով դնելով ու մշակելով կուսակցական շինարարության հարցերը ռազմական խաղերում, դաշտային ուղևորություններում, զորաշարժերում:

28. Աշխատանքի կամպանիական ձևը, վորն արդարացրեց իրեն, պետք է գործադրվի և ապագայում: Կոնֆերանսը հանձնարարում է քաղմարմիններին ամեն կերպ աջակցել՝ կոլեկտիվների բյուրոներին կից յեղած կազմակերպչական և ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքների ծավալմանը և առաջիկա

ամխմբերում և մի ամփոփել նրանց գործունեության նախնական փորձը։

29. Կուսակցական աշխատանքի ղեկավարության ասպարեզում կոնֆերանսն առաջադրում է հետևյալ խնդիրները.

ա) կոլեկտիվների բյուրոների աշխատանքի սիստեմում վաշտային բջիջներին ցույց տված ղեկավարությունը, կենդանի հրահանգումն ու նրանց աշխատանքներին ցույց տված օժանդակությունը պետք է դիտվի, վորպես առաջնակարգ և հիմնական բնագավառ. պետք է բարձրացնել բջիջի ասկական կուսակցական բանակայիններից ընտրված քարտուղարի հեղինակությունը.

բ) անհրաժեշտ է շարունակել կուսակցական հրամկազմին՝ կուսղեկավարության մասնակից դարձնելու գիծը.

գ) կոմիսարները պետք է ավելի մեծ չափով կենտրոնացնեն իրենց ուշադրությունը կուսակցական-քաղաքական ղեկավարության հարցերի վրա. այդ վերաբերում է և այն ընկերներին, վորոնք իրենց անձնավորությամբ միացրել են և՛ կուս-քաղաքական և՛ շարային աշխատանքի ղեկավարությունը, և վորոնք դեռ լիովին չեն ընդգրկել կուսակցական ղեկավարության խնդիրները.

դ) քաղմարմինները կուսկազմակերպություններին ցույց տված իրենց ղեկավարության մեջ պետք է լինեն կուսակցական մասսաներին ամենամեծ չափով մոտենալու խնդիրներից. քաղմարմինների՝ բջիջներին ցույց տված ղեկավարությունը պետք է առավելապես հնարավոր չափով կառուցվի կուսակցական լայն շփման մեթոդների վրա (քաղմարմինների աշխատողների



զեկուցումները բջիջներում՝ աշխատանքի հերթական հարցերի վերաբերյալ. կոլեկտիվների ընդհանուր ժողովների ինֆորմացիան հետազոտությունների արդյունքների մասին, հետազոտությունների հնարավոր հարմարեցումը վերընտրական շրջանին)։

30. Քաղաքացիական կազմակերպությունների հետ ունեցած կապի ասպարեզում կոնֆերանսը հաստատում է, վոր մինչև այժմ բավականաչափ չի իրագործված բանակային 4-րդ կուսկոնֆերանսի այն ցուցումը, թե՝ անհրաժեշտ է բարելավել կապը ներքին բովանդակության տեսակետից, զորական կազմակերպությունները Անդրկովկասյան հանրապետությունների կուսակցական ու խորհրդային կյանքին մոտենալու տեսակետից։

31. Հետզհետե, երբ աճում է բանակային կոմյերիտականների թիվը, միութենական աշխատանքին ցույց տված ղեկավարությունը, կուսակցական ազդեցության կիրառումը կոմյերիտմիության մեջ, ստանում է ավելի ու ավելի մեծ նշանակություն։ Կուսկազմակերպություններն իրենց ղեկավարության մեջ պետք է առաջնորդվեն բանակում տարվող միութենական աշխատանքի հետագա կազմակերպչական զարգացման խնդրով (դնդային խմբակների բյուրոներ, կոնֆերանսներ)։ Այդ հանգամանքը պարտավորեցնում է գործադրել կուսղեկավարության ամենաճկուն ձևերը, շուտափույթ վերացնելու մանր խնամակալության մնացորդները, դրա հետ միասին ուժեղացնելով ամբողջ միութենական աշխատանքին ցույց տված գաղափարական ղեկավարությունը։

## ԿՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՏՈՒԿ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ

32. ԿԿԲ յերկրային զորամասերի կուսկազմակերպությունների գլխավոր առանձնահատկությունը, վոր բացասաբար ե ազդում նրանց աշխատանքի վրա, միջհավաքային շրջանում նրանց ցրված դրությունն ե: Կոնֆերանսը, վորպես առաջնակարգ խնդիր առաջադրում ե հետևյալը՝ անհրաժեշտ ե լավագույն կերպով գործադրել ներկուսակցական աշխատանքի այն կազմակերպչական ձևերը, վոր կը նպաստեն կուսկազմակերպությունների ամրացմանն ու համախմբմանը, այն ե՝ ուժեղացնել բջիջների ղեկավարությունը միջհավաքային շրջանում, ուժեղացնել բջիջների կապը համալրման շրջանները մեկնող կուսակցականների հետ: Ղեկավար մարմինների աշնանային վերընտրությունները կատարել ընդհանուր հավաքների վերջում. գումարել պատգամավորական կուսժողովներ գարնանային վերընտրություններ կատարելու համար. փոփոխական կազմի կոմունիստներին մասնակից դարձնել բջիջների վերընտրական ժողովներին, այդ ժողովներում դնել կոլեկտիվի բյուրոյի հաշվետու զեկուցումները:

33. Անկուսակցականների մեջ տարվող աշխատանքի ասպարեզում անհրաժեշտ ե. ա) ավելի սերտ կապ հաստատել համալրման շրջանների քաղաքացիական կուսկազմակերպությունների հետ, վորպեսզի նրանց միջոցով հիմնականում կատարվի զորական կուսկազմակերպությունների ամբողջ միջհավաքային աշխատանքը. բ) բարելավել անկուսակցականների մեջ տարվող աշխատանքի քաղաքական բովանդակությունը, կապելով քաղաքական հիմնական հարցերը կարմիր բա-



նակի ու յերկրի պաշտպանության խնդիրների հետ. գ) այնպես անել, վոր ավելի արագ ծավալվի աշխատանքն անկուսակցականների մեջ հավաքների ժամանակ:

34. Կոնֆերանսը հիշատակում ե, վոր բավականաչափ հաշվի չի առնված ԿԿԲ յերկրային զորամասերի կուսաշխատանքի փորձը և կուսկազմակերպությունների ու քաղմարմինների հերթական խնդիրն ե համարում այդ թերության վերացումը:

## ԿՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՏՈՒԿ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՌԱԶՄԱ-ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

35. Կոնֆերանսը լիովին հաստատում ե ռազմակրթական հիմնարկների կուսաշխատողների հուլիսյան խորհրդակցության վորոշումները, և գտնում ե, վոր այդ վորոշումների կիրառումը պետք ե ռազմակրթական հիմնարկների կուսկազմակերպությունների հիմնական աշխատանքը լինի առաջիկա շրջանում: Կոնֆերանսն անհրաժեշտ ե համարում հետագայում ել շարունակել բարձրացնել կուսակցական կազմակերպությունների դերը դպրոցներում և հաղթահարել կուսաշխատանքի մեջ «դպրոցական թեքում» մտցնելու, կուսկազմակերպությունը դպրոցական ապարատի հավելվածը դարձնելու ամեն մի տենդենց:

36. Ռազմա-կրթական հիմնարկների վերակազմակերպման առթիվ ինտերնացիոնալ դաստիարակության և ամուր ընկերական զոդում ստեղծելու հարցերի վրա պետք ե կենտրոնացնել ուշադրությունը: Կուսակցական կազմակերպությունների ամբողջ գործնական աշխատանքը պետք ե ուղղել այն բանին, վորպեսզի այդ խնդիրները լավագույն ձևով լուծվեն՝ ինչպես

սեփական միջավայրում, այնպես էլ ամբողջ զորքում: Այդ ասպարեզում յեղած առանձին հիվանդագին յերևույթները պետք է ուշադրությամբ հաշվի առնվեն և ուսումնասիրվեն բջիջների կողմից, վորպեսզի ամենաարագ կերպով վերացնեն, կազմակերպելով կուսակցականների և ուսանողական ամբողջ մասսայի հասարակական կարծիքը:

37. Անհրաժեշտ է ձգտել լավագույն ձևով և բազմակողմանիորեն նախապատրաստել ուսանողներին, շրջանավարտումից հետո զորամասերում տանելիք առաջիկա գործնական աշխատանքների համար:

## ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կարմիր բանակում կոմյերիտմիության հիմնական խնդիրն է՝ աջակցել բանակի մարտական կորովի ամրացմանը: Բանակում աշխատող յուրաքանչյուր կոմյերիտականի պարտքն է լինել ակտիվ, առաջավոր մարտիկ, որինակ ծառայել քաղաքական գիտակցությամբ, կարգապահությամբ և մարտական լավագույն վարժությամբ:

Այդ աշխատանքի մեջ ԿԿԲ կոմյերիտական կազմակերպություններն աճեցին ու ամրացան, ավելի մեծ նշանակություն ստացան կուս–քաղաքական կյանքում և Կարմիր բանակի ամբողջ շինարարության մեջ:

14–րդ համագումարից հետո ՀամԿ (բ) Կ մեջ տեղի ունեցող պայքարում, բանակի կոմյերիտական կազմակերպությունները հաջող բռնեցին քննությունը: Բանակի կուսակցական կազմակերպության հետ միասին կոմյերիտմիությունը ճիշտ լենինյան դիրք գրավեց:



Միությունն ունի խոշոր նվաճումներ այն խնդիրների լուծման գործում, վոր առաջադրել են նրան բանակային 4–րդ կուսկոնֆերանսը, 7–րդ համագումարի զինվորական պատգամավորների խորհրդակցությունը և միության վերջին համագումարները, (վորոնք մատնանշել են, թե անհրաժեշտ է աշխուժացնել աշխատանքը՝ ներկուսակցական դեմոկրատիան լրիվ կիրառելու գծով, աշխուժացնել խմբակային ժողովները, կոմյերիտական կազմակերպություններին ավելի մոտեցնել զորամասի կյանքին և այլն):

Բարելավվել է միութենական աշխատանքի կուսակցական ղեկավարությունը:

Բայց դրա հետ միասին բանակային 5–րդ կուսկոնֆերանսը մատնանշում է, վոր կոմյերիտական կազմակերպությունները բավարար չափով չեն մասնակցում ընդհանուր կուսակցական կյանքին, բավական արագ չէ կուսակցության ու միության վերջին համագումարների ու կոնֆերանսների վորոշումների կատարման թափը:

Այդ վորոշումների հետագա ավելի լրիվ կենսագործմամբ պետք է զբաղվեն միության բանակային կազմակերպությունները առաջիկա շրջանում:

Բանակում տարվող կոմյերիտական աշխատանքների համար կոնֆերանսն առաջադրում է հետևյալ հերթական խնդիրները.—

### ԱՃՄԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.

1. Զորամասերը, կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունները պետք է ավելի մեծ ուշադրություն նվիրեն միության աճումը կանոնավորելու հարցի վրա:

2. Բանվոր ու բատրակ յերիտասարդության լրիվ

ընդգրկման խնդիրը դեռ ևս չի լուծված մինչև իսկ 1903 թվի համալրման նկատմամբ: Ներկայումս նորեկների գալու հետևանքով այդ խնդիրն ավելի ևս մեծ նշանակություն է ստանում:

3. Սովորաբար նորեկների կողմից զգալի ձգտում է նկատվում դեպի միությունը բանակ գալուց 2–3 ամիս հետո: Նորեկներին միության մեջ քաշելն այս տարի պետք է սկսել ըստ հնարավորության ավելի վաղ, առանց չափից դուրս ձգձգելու ուսումնասիրության շրջանը:

4. Աճումը կանոնավորելու գործում պետք է վերացնել անցյալ տարի տեղի ունեցող այն աննորմալ երևույթները, որ խոչընդոտ էին հանդիսանում միության աճմանը: Պետք է հրաժարվել քաղպատրաստության նկատմամբ չափից դուրս պահանջներից, որ դնում են միությունը մտնող բանվոր ու գյուղացի երիտասարդության առաջ, կանոնադրությամբ չնախատեսնված ձևական պահանջներ չանել (ինքնակենսագրության վավերացում և այլն), աշխատել այնպես անել, որ գործերի քննությունն արագ կատարվի ինչպես միության խմբակներում, այնպես էլ կոմիտեներում:

## ՄԻՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆԵՐՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

5. Ավելի վճռապես պետք է շարունակել կուսակցական ղեկավարության վերցրած գիծը, վճռապես պետք է կռվել ղեկավարության հին ձևերի դեմ (թեկնածությունները «վզի փաթաթելը» ընտրությունների ժամանակ, կուսակցական կորիզ գումարելու միջոցով կոմյերիտմիության մեջ կուսակցական ֆրակցիա կազ-



մակերպելու տենդենցներ, կոմյերիտական հարցերի վերաբերյալ որոշումների ավելորդ մանրակրկիտություն):

6. Գնդային խմբակներում բյուրոներ ստեղծելը զգալիորեն հեշտացնում է վաշտային խմբակների ղեկավարությունը կոմյերիտական կազմակերպության կողմից, հնարավորություն է տալիս ղեկավարությունն ավելի կոնկրետ դարձնելու, աշխատանքի որոշ բաժանում կատարելու կոմյերիտական ակտիվի մեջ: Այդ հնարավորությունները պետք է ամբողջապես օգտագործել:

7. Պետք է այնպես անել, որ ըստ հնարավորության կոմյերիտականների մեծ թիվ մասնակցի ղեկավարող աշխատանքին, մշտական հանձնաժողովներ ստեղծելով գնդային բյուրոյին կից, ինչպես այդ գոյություն ունին կուսկազմակերպության կից, սովորական կոմյերիտականներին հանձնաժողովների մեջ քաշել, ջոկել կոմյերիտականներ վաշտային խմբակների հետազոտման համար և այլն:

8. ԿԿԲ դիվիզիաներից մեկում (ինչպես նաև այլ շրջաններում) դիվիզիական կոմյերիտական կոնֆերանսներ գումարելու փորձը դրական արդյունքներ տվեց: Կոնֆերանսները նպաստում են կոմյերիտականների ակտիվության ավելի մեծ ընդգրկմանը, հնարավորություն են տալիս կոմյերիտական ստորին ակտիվի ավելի լայն խավերին մեջ քաշելու ղեկավարող աշխատանքին: Բանակային 5-րդ կուսկոնֆերանսն անհրաժեշտ է գտնում դիվիզիական ու բանակային կոմյերիտական կոնֆերանսներ գումարել՝ միության քաղաքացիական կազմակերպություններում կոնֆերանսների ավարտելուց հետո:

9. Պետք է խստիվ պահպանել կազմակերպիչների ու գնդային բյուրոների հաշվետվությունների ժամկետները: Անհրաժեշտ է ապահովել ղեկավարող մարմինների իսկական ընտրողականությունը:

10. Կոնֆերանսը մատնանշում է, վոր ներմիութենական դեմոկրատիան ամեն տեղ ճիշտ չի հասկացվում կոմյերիտականների կողմից: Պետք է այնպես անել, վոր կոմյերիտականը հասկանա, թե՝ «ներմիութենական դեմոկրատիայի կիրառումը միայն ընտրողականությամբ չի վերջանում, վոր նրա կիրառումը նշանակում է՝ ակտիվ աշխատանքի մեջ քաշել կոմյերիտմիության բոլոր անդամներին, բարձրացնել կոմյերիտական մասսայի մեջ պատասխանատվությունն ամբողջ միության մեջ տարվող աշխատանքի համար»:

11. Ներմիութենական դեմոկրատիայի բավականաչափ կիրառումը, կոմյերիտականների լայն մասսաներին աշխատանքի մեջ քաշելը, կապահովի ակտիվի ճիշտ առաջ քաշումը: Պետք է ամրացնել ակտիվի նախապատրաստման գործում ունեցած գնդային խորհըրդակցությունների աշխատանքը, ավելի կանոնավոր հրավիրել այդ խորհրդակցությունները, քննության դնելով միութենական աշխատանքի առանձին գործնական հարցերը: Պետք է բարելավել պատասխանատու կազմակերպիչների սեմինարների ու պրոպկոլլեկտիվների աշխատանքը, ապահովելով նրանց բավականաչափ պատրաստված ղեկավարներով, բավական քանակությամբ գրականությամբ: Պետք է վճռապես հրաժարվել աշխատանքի ղեկավարության մեջ հրամանատարության մեթոդներից, վոր յերբեմն գործադրում է ղեկավարող կոմյերիտական ակտիվը:

12. Բանակային կազմակերպություններում թույլ



է կոմյերիտականների պահանջների ու տրամադրությունների հաշվառումը: Այդ հաշվառման բարելավումն անհրաժեշտ պայման է միութենական աշխատանքի ղեկավարության, այդ ամբողջ աշխատանքի դրության բարելավման համար: Այդ նպատակով անհրաժեշտ է ամենից առաջ ոգտագործել գնդային դըպրոցների դասակային կազմակերպիչներին, պրոպկոլեկտիվներում աշխատող կոմյերիտականներին. այդ աշխատանքին պետք է մասնակցի նաև յուրաքանչյուր ակտիվ կոմյերիտական:

13. Պետք է առաջվա պես ձգտել ուժեղացնելու միության կոմիտեների մասնակցությունը բանակում տարվող կոմյերիտական աշխատանքի ղեկավարության գործում:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

14. Կուսակցական կազմակերպությունները պետք է մասնակից դարձնեն միության կազմակերպություններին ընդհանուր քաղաքական ու կուսակցական կյանքի կարևորագույն հարցերի քննությանը: Առանց դրան խոսք չի կարող լինել յերիտասարդության լենինյան դաստիարակության մասին: Պետք է վճռապես պայքարել այդ հարցերի քննությանը կոմյերիտական կազմակերպություններին մասնակից դարձնելու վախի դեմ, մի յերևույթ, վոր նկատվել է մի քանի զորամասերում Կենտկոմի հուլիսյան պլենումի վորոշումների մշակման ժամանակ:

15. Պետք է պայքարել ընդհանուր քաղաքական ու համակուսակցական հարցերի հարցադրման ժամանակ «ուսումնասիրական» («изученческий») մոտեցման դեմ. Այդ հարցերը պետք է վոչ միայն ուսումնասիրվեն

կոմյերիտական խմբակի ժողովներում, այլ և քաղաքականապես քննության առնվեն խմբակի կողմից. խըմբակը պետք է հայտնաբերի իր վերաբերմունքը դեպի այդ հարցերը:

16. Հսկայական նշանակություն ունի ընդհանուր կուսակցական հարցերի ժամանակին քննության առնելը. ընդհանուր կուսակցական կյանքի թափից յետ մնալը նպաստում է «դպրոցական», «ուսումնասիրական» թեքմանը:

## ՆԵՐԽՄԲԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

17. Անհրաժեշտ է հետագայում շարունակել աշխուժացնել կոմյերիտական ժողովները, նրանց բովանդակությունն ավելի հարմարեցնել կոմյերիտականների պահանջներին: Անհրաժեշտ է խմբակների ժողովները թեթևացնել մանր կազմակերպչական հարցերից, ավելի մեծ տեղ տալով զորամասի կյանքին վերաբերող հարցերին: Հարցերի ընտրության մեջ ավելի մեծ նախաձեռնություն պետք է տալ վաշտային խմբակին, վորպեսզի նա՝ խմբակի անդամ կոմյերիտականների պահանջների հաշվառման հիման վրա, ինքը կարողանա հարցեր առաջադրել:

18. Կոմյերիտական ժողովների աշխուժացումը զգալիորեն կը նպաստի «դպրոցական» թեքման վերացմանը, թեքում, վոր նկատվել է նաև ընդհանուր միութենական հարցերի մշակման ժամանակ (օրինակ՝ միության 7-րդ համագումարի վորոշումների մշակման ժամանակ):

19. Խմբակներում աշխատանքի բավականին ճիշտ բաշխում դեռ ևս չկա: Կոմյերիտականների զգալի տոկոսը չունի վոչ մի պարտականություն այն ժամանակ,



յերբ մյուսները չափից դուրս ծանրաբեռնված են: Պետք է ավելի յեռանդով անցնել իրագործելու այն լոզունգը՝ թե՝ «չկա կոմյերիտական, առանց միութենական պարտականությունների»: Թույլ ընկերներին աշխատանք հանձնարարելու վախը չպետք է գոյություն ունենա. պետք է ուժեղացնել նրանց աշխատանքին ցույց տված ղեկավարությունը, օգտագործելով դրա համար բոլոր այն հնարավորությունները, վոր տալիս է գնդային խմբակներում բյուրոներ ստեղծելը, հանձնաժողովային աշխատանքի գործադրությունը: Խմբակում աշխատանքի բաժանումը պետք է նշի պատասխանատու կազմակերպիչն ու հաստատվի խմբակի ժողովի կողմից. աշխատանքի բաշխման ժամանակ պետք է հաշվի առնել կոմյերիտականի՝ այս կամ այն ասպարեզում աշխատելու ցանկությունը, նրա ընդունակությունները:

20. Կոնֆերանսը հանձնարարում է ԿԿԲ Քաղվարչությանը միջնորդել Պուռ–ին կրտսեր հրամկազմի դպրոցների և առանձին մանր մասերի խմբակներում բյուրոներ ստեղծելու մասին: Այդ մասերի խմբակներն այնքան բազմամարդ են, վոր առանց բյուրոների ներխմբակային աշխատանքը լավ կանոնավորելու հնարավորություն չկա:

## ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԵՋ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

21. Կոմյերիտական կազմակերպությունը կուսակցության օգնականն է անկուսակցական կարմիր բանակային մասսայի ակտիվության ընդգրկման խնդիրների լուծման ժամանակ: Անկուսակցականների մեջ տարվող

աշխատանքին պետք է մեծ ուշադրություն նվիրել: Այստեղ պետք է ամենամեծ չափով շաղկապված լինեն բջիջի ու կոմյերիտական խմբակի աշխատանքները: Ամբողջ աշխատանքը պետք է տարվի բջիջի անմիջական ղեկավարությամբ:

22. Աշխատանքի հիմնական ձևը պետք է մնան կոմյերիտական խմբակների դռնբաց ժողովները: Պետք է հասնել նրան, վորպեսզի այդ ժողովներն ավելի ու ավելի շատ թվով հաճախեն անկուսակցական կարմիր բանակայիններն, ըստ վորում պետք է ավելի խնամքով ընտրել ժողովների հարցերը, հաշվի առնել և անկուսակցական կարմիր բանակային յերիտասարդության պահանջները. պետք է կանոնավոր հրավիրել դռնբաց ժողովներ:

23. Պետք է ավելի լավ հաշվի առնել այն կոմյերիտականների աշխատանքի փորձը, վորոնք անցյալ ճամբարային շրջանում ամրացված են յեղել վրաններին, վորպեսզի ավելի լայն օգտագործվի այդ փորձը այս տարվա ամրանը:

24. Վորպեսզի կոմյերիտականները ժամանակին և ճիշտ պատասխանեն կարմիր բանակայինների պահանջներին, հարկավոր է, վոր կոմյերիտականներն ավելի մեծ չափով մասնակից դառնան զորամասի կենցաղի ու ռազմական չինարարության վերաբերող հարցերի քննությանը:

25. Կոմյերիտականների աշխատանքը զանազան ինքնագործունեության կազմակերպություններում, նրանց մասնակցությունն արտադպրոցական աշխատանքներին, հանդիսանում են անկուսակցականների մեջ տարվող աշխատանքի ամենագլխավոր ձևերից մե-



կը: Կոմյերիտականը պետք է զգա, վոր ինքը վոչ միայն խմբակի, ինքնագործունեության կազմակերպության անդամ է, այլ և կոմունիստական ազդեցության հաղորդիչն է նրանց մեջ: Անհրաժեշտ է կոմյերիտականի ակտիվ մասնակցությունը զորամասի հասարակական կյանքի բոլոր ձևերում և նրա պատասխանատվության բարձրացումն այդ աշխատանքի համար:

26. Կոմյերիտականների մասնակցությունն ուժեղացնելու նպատակով պետք է ավելի հաճախ առաջադրել արտադպրոցական աշխատանքի, ինքնագործունեության կազմակերպությունների աշխատանքի հարցերը (զեկուցում լենինկյան խորհրդի, ակումբի վարչության, ինքնագործունեության կազմակերպությունների բյուրոների և այլն) խմբակների ժողովներում, գնդային բյուրոների նիստերում, վորպեսզի խմբակն իր առաջարկներն անի նրանց աշխատանքները բարելավելու վերաբերյալ:

## ՀԻՎԱՆԴԱԳԻՆ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

28. Կոմյերիտականին որինակելի կարմիր բանակային դարձնելու խնդիրը դեռ լուծված չէ: Կոմյերիտականն իր կարգապահությամբ դեռ բավականաչափ չի տարբերվում անկուսակցական կարմիր բանակայինից: Տեղի ունեն դեպքեր, յերբ կոմյերիտականը դառնում է կարմիր բանակայինների վատառողջ տրամադրությունների «ձայնափողը», («рупор»), և յերբեմն էլ նախաձեռնողը: Կազմակերպության աշխատանքի ընդհանուր ուժեղացման հետ միասին, առանց վորի անհնար է վերացնել այդ թերությունը, պետք է ավելի

մեծ ուշադրություն դարձնել կարգապահության հարցերին: Կարգապահության բարձրացման աշխատանքը պետք է խմբակների մշտական սիստեմատիկ աշխատանքը դառնա. կարգապահության հարցերը պետք է դրվեն խմբակի ժողովներում, կապելով այն զորամասի կարգապահության դրության հետ: Պետք է հրաժարվել կրկնակի պատիժներից, վորպես պարտադիր սիստեմից (միութենական պատժին պետք է կոմյերիտականը յենթարկվի միայն այն դեպքում, յերբ կարգապահությունը սիստեմատիկ կերպով է խախտում, կամ լուրջ զանցանք է գործում):

29. ԿԿԵ կոմյերիտական կազմակերպություններում տեղի ունեն կազմակերպությունների կողմի հոռունության յերեվույթներ: Արտաքսվածների թիվը չափազանց մեծ է, արտաքսման հարցի նկատմամբ բավականաչափ լուրջ մոտեցում չկա: Պետք է ավելի շատ դաստիարակչական բնույթ կրող ազդեցության միջոցներ գործադրել. իսկ միությունից արտաքսելը պետք է գործադրվի, վորպես, իրոք, միութենական պատժի գերագույն միջոց:

30. Միությունից կամավոր դուրս գալու դեպքերը թեև բազմաթիվ չեն, բայց արժանի յեն ավելի մեծ ուշադրության: Պետք է ավելի խնամքով ուսումնասիրել այդ դեպքերի պատճառները:

## ԶԻՆԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Կարմիր բանակային մասսայի քաղաքական ու կուլտուրական ընդհանուր աճումն իր վառ արտահայտությունն է գտնում զինթղթակցային շարժման ա-



նընդհատ աճման մեջ, վորը կարմիր բանակային ակտիվությունը յերևան հանելու կարևորագույն ձևերից մեկն է: Այն ժամանակ, յերբ 1925 թվին բանակում հաշվվում եր մինչև 500 զինթղթակից և մոտ 60–70 պատի լրագիր, ներկայումս մենք արդեն ունենք մոտ 370 պատի լրագիր և ավելի քան 2500 զինթղթակից:

2. Հանձինս զինթղթակիցների մենք ամենից առաջ ունենք առաջավոր, հասարակական-գործիչ կարմիր բանակայիններ, վորոնք «Կրասնիյ Վոյին»-ի, ազգային կարմիր բանակային մամուլի և բանակի պատի թերթերի միջոցով ակտիվ մասնակցում են բանակի շինարարությանն ու ամրացմանը, և վորոնք, բանակի կուսկազմակերպությունների կողմից ճիշտ ղեկավարության դեպքում, հանդիսանում են կուսակցության՝ անկուսակցական մասսաների հետ ունեցած կապի կարևորագույն օղակներից մեկը, կուսակցության ազդեցության տարածողները մասսաների վրա:

3. Բանակային 4-րդ կուսկոնֆերանսից հետո զինթղթակցային շարժման ղեկավարությունը բանակի կուսկազմակերպության կողմից փոքր ինչ բարելավվել է: Սակայն կուսկազմակերպությունների և առանձին ղեկավարող ընկերների կողմից զինթղթակցային աշխատանքի հարցերի վրա դարձրած ուշադրությունը դեռ ևս զգալիորեն չի համապատասխանում այդ աշխատանքի թվական աճմանն ու հասարակական-քաղաքական նշանակությանը: Ընկ. Բուբնովն ասել է. թե զինթղթակցային աշխատանքը «վոչ թե արտադպրոցական աշխատանքի մի կողմնակի մասն է, այլ հասարակական-քաղաքական աշխատանքի կարևորագույն ձևը», վոր «Կարմիր բանակն ուժեղ է վոչ միայն ավի-

նով, այլ և զինթղթակցով», մինչդեռ մեզանում մինչ այժմ տեղի յեն ունենում զինթղթակցային աշխատանքի թերագնահատման դեպքեր, պատահում է, որ այդ աշխատանքին վերաբերում են, որպես «ամենից սակավ կարևոր աշխատանքին»:

4. Նկատվում է, որ ղեկավարող աշխատողներն ու կուսկազմակերպությունները նվազ ծանոթություն ունեն զինթղթակցական աշխատանքին վերաբերող հիմնական նյութերին ու հրահանգներին: Ուստի և անխուսափելի յեն զանազան սխալներն ու խեղաթյուրումներն այդ աշխատանքին ցույց տված ղեկավարության գործում: Զինթղթակցային աշխատանքի հետագա հաջող զարգացման ու նրա ճիշտ ղեկավարության համար անհրաժեշտ է, որպեսզի զինթղթակցային շարժման ղեկավարող հիմնական նյութերը ծանոթ լինեն ոչ միայն զորամասերի ղեկավար աշխատողներին, այլ և սովորական կուսակցականներին ու ԼԿՅԵՄ բոլոր անդամներին:

5. Հատուկ նշանակություն տալով զինթղթակիցների՝ մարտական պարագայում կատարած աշխատանքին, և մատնանշելով, որ այդ աշխատանքի փորձը դեռ ուսումնասիրված ու սիստեմի բերված չէ, կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում առաջիկա ճամբարային շրջանում ու զորաշարժում ամենալուրջ ուշադրությունը նվիրել զինթղթակցային աշխատանքին, մարտական պարագայում այդ աշխատանքի ու նրա կուսակցական ղեկավարության ուսումնասիրության տեսակետից:

6. Զինթղթակցային շարժման բավական լրիվ չընդգրկելը և զինթղթակիցների թվական աճումից



կուսղեկավարության յետ մնալը անխուսափելիորեն այն հետևանքն են ունենում, որ թուլանում է զինթղթակիցների սերտ կապը կուսկազմակերպությունների հետ, վատանում է զինթղթակիցների մեջ տարվող դաստիարակչական աշխատանքը, առաջանում են զանազան հիվանդագին յերևույթներ ու թեքումներ զինթղթակցային աշխատանքում: Զինթղթակցային շարժման անընդհատ աճումը համառորեն առաջադրում է կուսկազմակերպությունների առաջ՝ կուսղեկավարության բարելավման ու խորացման, ինչպես նաև զինթղթակիցների մեջ դաստիարակչական աշխատանքի ուժեղացման խնդիրները: Կոնկրետ կերպով մոտ ժամանակներում քաղմարմիններն ու բանակի կուսկազմակերպությունները պետք է ուշադրություն դարձնեն հետևյալի վրա:

## ԴԻՎԻԶԻԱՆԵՐՈՒՄ

7. Դիվիզիաների կազմակերպիչները, չնչին բացառությամբ, սիստեմատիկ աշխատանք չեն կատարում զինթղթակցային շարժման ղեկավարության գործում: Քաղբաժնի աշխատանքի ծրագրի մեջ հաճախ չի մտնում զինթղթակցային աշխատանքը: Քաղբաժինների հաշվետվություններում զինթղթակցային աշխատանքը թույլ է լուսաբանվում, իսկ յերբեմն ամենևին չի լուսաբանվում:

8. Ղեկավարությունը բարելավելու համար ամենից առաջ անհրաժեշտ է, որպեսզի

ա) դիվիզիաների կազմակերպիչները աշխատեն «ԲԳԿԲ զինթղթակցային աշխատանքի կազմակերպիչների մասին կանոնադրության» համաձայն.

բ) զինթղթակցային աշխատանքն անպայման մտնի քաղբաժնի աշխատանքի ընդհանուր ծրագրի մեջ.

գ) դիվիզիաների կազմակերպիչներն ու ազգային թերթերի խմբագրությունները ուժեղացնեն զինթըղթակցային աշխատանքի հարցերի վերաբերյալ գնդային բյուրոների ու կազմակերպիչների կենդանի հրահանգումը, միաժամանակ պիտի ուժեղացվի զինթըղթակցային աշխատանքի կենդանի ղեկավարությունը «Կրասնիյ Վոյին»-ի կողմից.

դ) անհրաժեշտ է, վորպեսզի քաղբաժիններն ուժեղացնեն քաղաքացիական թերթերի ռազմական բաժինների ու նրանց զինթղթակիցների նկատմամբ տրվող անմիջական ղեկավարությունը.

ե) այս կամ այն կամպանիաներն անցկացնելիս, ինչպես նաև ռազմա-քաղաքական ուսուցման կարևորագույն շրջաններում (զորաշարժեր և այլն), պետք է հատուկ ուշադրություն դարձնել զինթղթակիցների աշխատանքի ղեկավարության վրա, յելնելով տվյալ դիվիզիաների առանձնահատկություններից.

զ) միջոցներ ձեռք առնել ուժեղացնելու զինթըղթակիցների կապը բանգյուղթղթակիցների հետ.

է) զինթղթակցային աշխատանքը պետք է ավելի լրիվ լուսաբանվի ու ամփոփվի քաղբաժինների հերթական զեկուցումներում:

## ԳՆԴԵՐՈՒՄ

9. Գնդերի (ու նրանց համազոր զորամասերի) կուսբյուրոները զինթղթակցային աշխատանքի ղեկավարությունն իրագործում են գնդային կազմակերպիչների ու կուսակցական զինթղթակիցների միջոցով:



Գնդային կազմակերպիչների աշխատանքն, ընդհանուր առմամբ, ավելի բավարար է, քան թե դիվիզիաների կազմակերպիչներինը, բայց այստեղ ևս մենք գտնում ենք մի շարք թերություններ: Այդ թերությունները, գլխավորապես, հետևանք են նրան, վոր գնդերում դեռ ևս լրիվին չի կիրառված այն դրույթը, թե կազմակերպչի աշխատանքը պետք է՝ «հանդիսանա կուսակցական հիմնական աշխատանք», վոր կազմակերպիչը պետք է լինի «պատասխանատու իր աշխատանքի համար» և «հնարավորություն ունենա փաստորեն իրագործելու այդ աշխատանքը»: (Բուբնով):

10. Վաշտային պատի լրագրերի ամրացման, բանավոր ու կենդանի լրագրերի աճման և զինթղթակցային շարքերի անընդհատ աճման հետևանքով գնդերի կուսկազմակերպությունների ու կուսբյուրոների առաջ խնդիր է դրվում առավելագույն չափով ուժեղացնել ու բարելավել այդ թերթերի ու զինթղթակցային աշխատանքի ղեկավարությունը: Կոնկրետ կերպով կուսբյուրոյի առաջ դրված են հետևյալ խնդիրները.

ա) զինթղթակցային աշխատանքն անպայման պետք է մտնի գնդի կուսակցական աշխատանքի ծրագրի մեջ.

բ) «կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունները պետք է շարունակ իրազեկ լինեն բանակի թղթակցական շարժման գործնական խնդիրներին, շարունակ ծանոթանան գնդի զինթղթակցային աշխատանքի դրությանը, արագ ըմբռնեն զինթղթակցական շարժման բացասական մոմենտները և նպաստեն նրա առողջ աճմանը» (բանակային մամուլի 3-րդ համաբանակային խորհրդակցության բանաձևից).

գ) կուսբյուրոն պետք ե պարբերաբար լսի կազմակերպիչների զեկուցումները զորամասի զինթղթակցային աշխատանքի դրության մասին և նրանց գործնական ցուցումներ տա հետագա աշխատանքի համար·

դ) գնդերի կազմակերպիչները պետք ե բարելավեն վաշտերի կուսկազմակերպությունների կողմից զինթղթակցային աշխատանքին ցույց տված ղեկավարությունը·

ե) անհրաժեշտ ե կանոնավորել պատի լրագրերի խմբագիրների ու խմբկոլների անդամների և զինթըղթակցական խմբակների անդամների պարբերական հըրահանգչական–մեթոդական խորհրդակցությունները, վաշտային պատի լրագրերի ու խմբակների փոխադարձ ծանոթությունը միմյանց աշխատանքներին, պատի լրագրերի խմբկոլների խորհրդակցություններն ու զինթղթակիցների ընդհանուր ժողովները, վորտեղ պետք ե դնել վոչ միայն զուտ զինթղթակցային հարցեր, այլև տվյալ զորամասի ռազմաքաղաքական ուսուցման և ընդհանրապես ռազմական շինարարության վերաբերյալ հարցեր·

զ) հատուկ ուշադրություն պետք ե դարձնել պատի լրագրերի խմբկոլների անդամների սեմինարների աշխատանքի բարելավման վրա, վորոնք պատրաստում են զինթղթակցային կազմակերպության հիմնական ակտիվը·

է) զորամասերի կուսկազմակերպությունները պետք ե բարելավեն վաշտային պատի լրագրերի ուսումնասիրությունը, վորոնք արտացոլում են լայն կարմիր բանակային մասսայի տրամադրություններն ու պահանջները, սիստեմատիկ կազմակերպելով պատի



լրագրերի ցուցահանդեսներ ու մրցանակներ լավագույն թերթերի համար։ Դրա հետ միասին կուսկազմակերպությունները պետք ե լայն մասսայականացնեն զինթղթակցային աշխատանքը բանակի ամբողջ կազմի մեջ, բացատրելով նրա նշանակությունը բանակի մարտական կարողի ամրացման գործում·

ը) զինթղթակիցների ռազմական վորակը բարձրացնելու և ռազմական ուսուցման հարցերի լուսաբանման ասպարեզում նրանց աշխատանքը բարելավելու համար, անհրաժեշտ ե հրամկազմին ակտիվ մասնակից անել զինթղթակցային աշխատանքին, ինչպես նաև զինթղթակիցներին մասնակից դարձնել ՊԱՋԸ աշխատանքին և նրանց դաստիարակել այն վոգով, թե «զինթղթակիցն որինակելի մարտիկ ե»·

թ) անհրաժեշտ ե ավելի լայն չափով, քան մինչև այժմ ե յեղել, անկուսակցական զինթղթակիցներին քաշել պատի լրագրերի խմբկոլների կազմի մեջ։

## ՎԱՇՏԵՐՈՒՄ

11. Վաշտերի (հեծելավաշտերի, մարտկոցների) աշխատանքին ցույց տված ղեկավարությունն առավել թույլ ե, մինչդեռ վաշտային պատի լրագրերին ու զինթղթակցական խմբակին անցնելու հետևանքով, հատկապես վաշտն ե, վոր հանդիսանում ե զինթղթակցային աշխատանքի այն կարևորագույն ողակը, վոր անմիջապես շփվում ե կարմիր բանակային լայն մասսային։

12. Պատի լրագիրը վաշտում հաճախ միայն անունով ե հանդիսանում վաշտային բջիջի օրգանը։ Վաշտային կազմակերպության կողմից չկա սիստեմատիկ ղեկավարություն պատի լրագրերի աշխատանքի նկատ-

մամբ: Վաշտային բջիջները պետք է ուժեղացնեն պատի
լրագրերի աշխատանքի ղեկավարությունը, տալով
խմբագիրներին կոնկրետ ղեկավարող ցուցումներ լրա-
գրերի բովանդակության, կամպանիաներ կիրառելու և
այլ խնդիրների վերաբերյալ, կանոնավոր կերպով լսե-
լով զեկուցումներ նրանց աշխատանքի մասին՝ ոչ
միայն բյուրոների նիստերում, այլ և վաշտային բջիջ-
ների ժողովներում:

13. Մի քանի վաշտերում պատի լրագրերի խմբկոլ-
ները քիչ ուշադրություն են դարձնում տվյալ վաշտերի
ազգային փոքրամասնություններին պատկանող մար-
տիկներին մասնակից դարձնելու պատի լրագրներին:

Այդ անկասկած մեծ բաց է պատի լրագրերի աշ-
խատանքում, որ պետք է լրացվի ամենամոտ ժամա-
նակում:

14. Վերջին ժամանակներս առանձին աշխատողներ
մատնանշում են, որ պատի լրագրերի հեղինակու-
թյունը որոշ չափով ընկել է ռոսկական մարտիկների
մեջ: Այդ հանգամանքն առաջին հերթին առաջ է գալիս
նրանից, որ թուլացել է պատի լրագրերին ցույց տը-
ված կուսղեկավարությունը, անուշադիր վերաբեր-
մունք կա դեպի մարտիկների այն թղթակցությունները
ու առաջարկները, որ տպվում են պատի լրագրերում,
պետկազմն աչքաթող է անում այն թղթակցություն-
ները, որ նրանց հանձնում են խմբկոլները հետազոտ-
ման և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար:
Կուսկազմակերպությունները պետք է ամենալուրջ ու-
շադրությունը դարձնեն հիշյալ թերությունները վե-
րացնելու վրա, և ամեն կերպ բարձրացնեն պատի լրա-
գրերի հեղինակությունը, որ հանդիսանում են՝ «կու-



սակցության՝ մասսաների վրա ազդելու և բանակի
մարտունակությունն ամրացնելու» ձևերից մեկը:

15. Վաշտային զինթղթակցական խմբակների աշ-
խատանքն, ընդհանուր առմամբ, համեմատած անցյալի
հետ բարելավվել է: Սակայն մինչև այժմ մի քանի
խմբակների աշխատանքներում նկատվում է դպրոցա-
կան թեքում, որ չափազանց փոքր գործնական ար-
դյունքներ է տալիս և խանգարում է զինթղթակիցների՝
խմբակների ակտիվ աշխատանքների լծվելուն: Այդ դը-
րությունը պետք է փոխվի, և խմբակների աշխատանքը
պետք է առավելագույն չափով համաձայնեցնել վաշտի
ուսուցման ընդհանուր խնդիրներին ու պատի լրագրերի
գործնական աշխատաքնին՝ զինթղթակիցների լայն
ինքնագործունեության հիման վրա:

16. Բանակի նոր համալրման գալու հետ վաշտա-
յին խմբակների առաջ դրված է խմբակների աշխատան-
քին նոր զինթղթակիցներ քաշելու խնդիրը, որոնց
պետք է ջոկել նոր համալրումից և մասնավորապես,
նախկին բանգյուղթղթակիցներից: Անցյալ տարիների
փորձը ցույց տվեց, որ հաճախ նախկին բանգյուղ-
թղթակիցները ձգտում են բանակի պայմանները փո-
խադրել աշխատանքի այնպիսի մեթոդներ (մերկացում-
ներ, խմբկոլների լայն ընտրողականություն և այլն),
որ չեն համապատասխանում զինթղթակցական աշխա-
տանքի հիմնական գծին:

Կուսկազմակերպությունները պետք է հիմնական
աշխատանք կատարեն բացատրելու համար նոր զին-
թղթակիցներին՝ զինթղթակցական աշխատանքի ամե-
նագլխավոր սկզբունքները բանակում:

մամբ: Վաշտային բջիջները պետք է ուժեղացնեն պատի լրագրերի աշխատանքի ղեկավարությունը, տալով խմբագիրներին կոնկրետ ղեկավարող ցուցումներ լրագրերի բովանդակության, կամպանիաներ կիրառելու և այլ խնդիրների վերաբերյալ, կանոնավոր կերպով լսելով զեկուցումներ նրանց աշխատանքի մասին՝ ոչ միայն բյուրոների նիստերում, այլ և վաշտային բջիջների ժողովներում:

13. Մի քանի վաշտերում պատի լրագրերի խմբկոլները քիչ ուշադրություն են դարձնում տվյալ վաշտերի ազգային փոքրամասնություններին պատկանող մարտիկներին մասնակից դարձնելու պատի լրագրներին:

Այդ անկասկած մեծ բաց է պատի լրագրերի աշխատանքում, որը պետք է լրացվի ամենամոտ ժամանակում:

14. Վերջին ժամանակներս առանձին աշխատողներ մատնանշում են, որ պատի լրագրերի հեղինակությունը որոշ չափով ընկել է սոսկական մարտիկների մեջ: Այդ հանգամանքն առաջին հերթին առաջ է գալիս նրանից, որ թուլացել է պատի լրագրերին ցույց տըված կուսղեկավարությունը, անուշադիր վերաբերմունք կա դեպի մարտիկների այն թղթակցություններն ու առաջարկները, որ տպվում են պատի լրագրերում, պետկազմն աչքաթող է անում այն թղթակցությունները, որ նրանց հանձնում են խմբկոլները հետազոտման և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար: Կուսկազմակերպությունները պետք է ամենալուրջ ուշադրությունը դարձնեն հիշյալ թերությունները վերացնելու վրա, և ամեն կերպ բարձրացնեն պատի լրագրերի հեղինակությունը, որ հանդիսանում են՝ «կու-



սակցության՝ մասսաների վրա ազդելու և բանակի մարտունակությունն ամրացնելու» ձևերից մեկը:

15. Վաշտային զինթղթակցական խմբակների աշխատանքն, ընդհանուր առմամբ, համեմատած անցյալի հետ բարելավվել է: Սակայն մինչև այժմ մի քանի խմբակների աշխատանքներում նկատվում է դպրոցական թեքում, որ չափազանց փոքր գործնական արդյունքներ է տալիս և խանգարում է զինթղթակիցների՝ խմբակների ակտիվ աշխատանքների լծվելուն: Այդ դըրությունը պետք է փոխվի, և խմբակների աշխատանքը պետք է առավելագույն չափով համաձայնեցնել վաշտի ուսուցման ընդհանուր խնդիրներին ու պատի լրագրերի գործնական աշխատաքնին՝ զինթղթակիցների լայն ինքնագործունեության հիման վրա:

16. Բանակի նոր համալրման գալու հետ վաշտային խմբակների առաջ դրված է խմբակների աշխատանքին նոր զինթղթակիցներ քաշելու խնդիրը, որոնց պետք է ջոկել նոր համալրումից և մասնավորապես, նախկին բանգյուղթղթակիցներից: Անցյալ տարիների փորձը ցույց տվեց, որ հաճախ նախկին բանգյուղթղթակիցները ձգտում են բանակի պայմանները փոխադրել աշխատանքի այնպիսի մեթոդներ (մերկացումներ, խմբկոլների լայն ընտրողականություն և այլն), որ չեն համապատասխանում զինթղթակցական աշխատանքի հիմնական գծին:

Կուսկազմակերպությունները պետք է հիմնական աշխատանք կատարեն բացատրելու համար նոր զինթղթակիցներին՝ զինթղթակցական աշխատանքի ամենագլխավոր սկզբունքները բանակում:

# ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԸ ԲԱՆԱԿՈՒՄ

1. Կարմիր բանակայինի դաստիարակության ընդհանուր սիստեմում հակակրոնական պրոպագանդը դեռ չափազանց աննշան ու անբավարար տեղ է բռնում:

Հակակրոնական պլանային պրոպագանդի անհրաժեշտությունը ներկայումս համառորեն առաջ է գալիս, որպես չափազանց կարևոր խնդիր, շնորհիվ հետևյալ պայմանների.—

ա) Խորհրդային Միության քաղաքական ու տնտեսական կյանքի ասպարեզում առաջացած աշխուժացման ու աճման հետ միասին՝ աշխուժացում է նկատվում նաև կրոնական ասպարեզում.

բ) տարեցտարի բանակի շարքերն է գալիս կուլտուրապես ու քաղաքականապես ավելի պատրաստված, ավելի ակտիվ յերիտասարդություն, բարձրանում և խորանում են պահանջներն ու հետաքրքրությունը դեպի հակակրոնական պրոպագանդը:

2. Հակակրոնական պրոպագանդում նկատվող թերությունները (թեքումներ բովանդակության և ուղղության մեջ դեպի «սոսկ» լուսավորականությունը, կապված կրոնի դասակարգային եյության վանման հետ, կամ թե դեպի կրոնի «զուտ» մերկացման կողմը, տեղ-տեղ հակակրոնական պրոպագանդի կատարյալ դադարեցումը, կարմիր բանակայինների կրոնասիրության թույլ ուսումնասիրությունը, հակակրոնական պրոպագանդը բացառապես արտադպրոցական կազմակերպությունների վրա ձգելը) բացատրվում է հետևյալ պատճառներով.

ա) քաղպարատի ու կուսկազմակերպությունների թույլ ղեկավարությամբ.



բ) որակյալ հակակրոնականների համարյա կատարյալ բացակայությամբ, մանավանդ աշխատողների ստորին բնակազմի մեջ.

գ) ձեռնարկների պակասությամբ.

դ) ծրագրային-մեթոդական հարցերի թույլ մշակությամբ:

3. Կարմիր բանակայինի բանակում տարվող յերկամյա հակակրոնական դաստիարակության նպատակը լինելով՝ զարգացնել նրա մեջ քննադատական վերաբերմունք դեպի կրոնը, խախտել դեպի գերբնական ուժերն ունեցած նրա հավատը, անհրաժեշտ է գործնականապես ձգտել.—

ա) պատվաստել ճիշտ մատերիալիստական հայացք դեպի բնության ու հասարակական կյանքի յերևույթները.

բ) ըմբռնել ու ճանաչել տալ գիտական տնտեսավարության և մասնավորապես գյուղատնտեսության հիմնական դրույթների ու պահանջների ճշտությունը.

գ) ըմբռնել տալ կրոնի դասակարգային եյությունը, նրա ռեակցիոն դերը, մանավանդ ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության ժամանակակից պայմաններում.

դ) ճիշտ հասկացնել տալ կարմիր բանակայիններին կուսակցության ու խորհրդային իշխանության՝ կրոնի վերաբերյալ վարած քաղաքականությունը:

4. Հակակրոնական պրոպագանդի բովանդակության հարցերի հիմնական շրջանը— որոշվում է վերոհիշյալ նպատակներով: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որպեսզի վերջնականապես վերացվեն դեռ ևս գոյություն ունեցող թեքումները՝ թե՛ դեպի կրոնի,

վորպես աշխատավորների ստրկացման գործիքի, մերկացման կողմը և թե դեպի սոսկ «լուսավորականության» կողմը:

«Մերկացնելով կրոնը, վորպես դասակարգային ստրկացման գործիք, վորպես կուլակության սպասավոր այն ժամանակ, յերբ նա ձգտում է իր ազդեցությունը յենթարկել ու ստրկացնել չքավոր ու միջակ գյուղացուն, չեշտելով կրոնի այդ սոցիալական-քաղաքական դերը ժամանակակից գյուղում, միևնույն ժամանակ անհրաժեշտ է հակակրոնական պրոպագանդում մեծ ուշադրություն նվիրել բնագիտությանն ու ագրոպրոպագանդային: Հակակրոնական պրոպագանդը գյուղում գյուղացուն պետք է մատերիալիստական բացատրություն տա հասարակական կյանքի ու բնության այն յերևույթներին, վորոնց հետ գործ է ունենում գյուղացին:

Հակակրոնական աշխատանքը պետք է կառուցվի այնպես, վոր նա կապված լինի կուսակցության ու խորհրդային իշխանության՝ սոցիալիստական շինարարության համար կատարած ընդհանուր աշխատանքին, այդ աշխատանքի խնդիրների ու մեթոդների հետ ներկա մոմենտի պայմաններում»: (ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կից հակակրոնականների խորհրդակցության բանաձևից):

5. Ծառայության ճիշտ ժամկետներ հաստատելը հնարավորություն է տալիս հակակրոնական պրոպագանդը մղել վորոշ սիստեմով, վորոշ ծրագրով, վորը նկատի ունի կարմիր բանակայինի յերկու տարի բանակում մնալը: Ծրագիրը պետք է նշի աշխատանքի ծավալման հիմնական ուղիները, սահմանելու համար մի



վորոշ կոնտակտ և հակակրոնական մոմենտներով համակելու ինչպես դպրոցական այնպես էլ արտադպրոցական աշխատանքը՝ 2 տարվա ընթացքում:

Անհրաժեշտ է.

ա) Հակակրոնական մոմենտներ մտցնել ամբողջ ընթացիկ ագիտացիայի ու պրոպագանդի մեջ.

բ) Համաձայնեցնել քաղպարապմունքների ու սանպարապմունքների յերկամյա ծրագիրը հակակրոնական պրոպագանդի հարցերի հետ.

գ) Ձեռք առնել վճռական միջոցներ ծավալելու համար հակակրոնական պրոպանգանդը արտադպրոցական կազմակերպությունների գծով: Քաղվարչությունը պետք է մշակի մանրամասն ծրագրեր բարձր ու ցածր տիպի խմբակների համար.

դ) Համաձայնեցնել ամբողջ հանրակրթական աշխատանքը հակակրոնական պրոպագանդի հետ՝ կրոնական աշխարհահայացքի սնահողության ու վնասակարության կոնկրետ որինակների միջոցով.

ե) սիստեմատիկ հակակրոնական պրոպագանդ մղել պարբերական մամուլի ու պատի լրագրերի համապատասխան մշտական բաժինների միջոցով:

6. Հակակրոնական պրոպագանդը կուսաշխատանքի ընդհանուր սիստեմում պետք է վորոշակի ու մշտական տեղ գրավի: Առանց կուսկազմակերպությունների ղեկավարության ուժեղացման անհնար է բավարար չափով հակակրոնական պրոպագանդ մղել:

Քաղպարպատներն ու կուսկազմակերպությունները պետք է.—

ա) մոտ ժամանակներում կանոնավորեն և հետագայում սիստեմատիկ իրագործեն զորամասերում տար-

վող հակակրոնական պրոպագանդի ղեկավարությունը: Պետք է աշխատեն ըմբռնել, որ նրանց վրա է ընկնում հակակրոնական պրոպագանդի բովանդակության, ուղղության ու կացության պատասխանատվությունը.

բ) պետք է դաստիարակել կուսակցականների մեջ՝ անաստվածության պրոպագանդի վերաբերյալ նրանց վրա ընկած պարտականությունների անհրաժեշտության ու պատասխանատվության գիտակցությունը: Անհրաժեշտ է նրանց գործնական աշխատանքի մեջ քաշել և մասնավորապես օգտագործել խմբակային աշխատանքը.

գ) «Անաստվածների Միությունում» կատարած ակտիվ աշխատանքը և ընդհանրապես կուսակցականների հակակրոնական աշխատանքը հավասարեցնել կուսաշխատանքին, հաշվելով այդ աշխատանքը կուսբեռնավորում» (ՀամԿ(բ)Կ Կենտկոմին կից հակակրոնականների խորհրդակցության բանաձևից).

դ) հակակրոնական աշխատանքի հարցերը մտցնել կուսքաղլուսաշխատանքի ծրագրերի մեջ.

ե) ուշադրություն դարձնել հակակրոնական պրոպագանդի մոմենտների վրա, քաղլուսաշխատանքի առանձին ղեկավարների զեկուցումները լսելիս, տալ նրանց համապատասխան հրահանգներ: Ինքնուրույն զեկուցումներ դնել նաև հակակրոնական աշխատանքի վիճակի մասին բջիջների ու կոլլեկտիվների ժողովներում.

զ) ջոկել ավելի պատրաստված կուսակցականներ լենանկյուններում ու ակումբներում հակակրոնական աշխատանք կատարելու համար.

է) աջակցել և ամնիջական մասնակցություն ցույց տալ խմբակների ղեկավարների պատրաստման, դպր-



ոցական ու արտադպրոցական աշխատանքի համաձայնեցման, սեմինարներ կազմակերպելու և այլ աշխատանքներին նպաստելու.

ը) ամեն կերպ աջակցել կազմակերպելու «Անաստվածների Միության» բջիջներ ու կանոնավորելու նրանց աշխատանքը, ղեկավարելով այն «Անաստվածների Միության» անդամ-կուսակցականների միջոցով: Լավ հիմքերի վրա դնել անկուսակցականներին Միության մեջ գրավելու գործը.

թ) միջոցներ ձեռք առնել բարձրացնելու կուսակցականների որակը.

ժ) միջոցներ ձեռք առնել հակակրոնական պրոպագանդի մեջ քաշելու կոմյերիտականներին: Յերիտասարդ անաստվածների բնակազմի ընտրությունն ու նախապատրաստությունը պետք է կուսակցության աջակցող խմբակների հիմնական խնդիրներից մեկը լինի: Սակայն անհրաժեշտ է նախատեսնել անցյալի սխալները այն է՝ «հարձակումը» („наскок“) «հակակրոնական խիզախություն» („ухарство“) որոնք հակասում են մեր հակակրոնական պրոպագանդի գծին:

7. Անաստվածներին համախմբելու և նրանց հակակրոնական պայքարին մասնակից դարձնելու նպատակով անհրաժեշտ է բոլոր այն զորամասերում, որտեղ դրա համար կան անհրաժեշտ նախապայմաններ, կազմակերպել «Անաստվածների Միության» բջիջներ:

ԿԿԲ Քաղվարչությունը պետք է խնամքով հաշվի առնի բանակում յեղած անաստվածների միության բջիջների աշխատանքի առաջին փորձը և մոտ ապագայում մշակի մանրամասն ցուցումներ նրանց աշխատան-

վող հակակրոնական պրոպագանդի ղեկավարությունը։ Պետք է աշխատեն ըմբռնել, որ նրանց վրա չի ընկնում հակակրոնական պրոպագանդի բովանդակության, ուղղության ու կացության պատասխանատվությունը։

բ) պետք է դաստիարակել կուսակցականների մեջ՝ անաստվածության պրոպագանդի վերաբերյալ նրանց վրա ընկած պարտականությունների անհրաժեշտության ու պատասխանատվության գիտակցությունը։ Անհրաժեշտ է նրանց գործնական աշխատանքի մեջ քաշել և մասնավորապես օգտագործել խմբակային աշխատանքը։

գ) «Անաստվածների Միություններում» կատարած ակտիվ աշխատանքը և ընդհանրապես կուսակցականների հակակրոնական աշխատանքը հավասարեցնել կուսաշխատանքին, հաշվելով այդ աշխատանքը կուսբեռնավորում» (ՀամԿ(բ)Կ Կենտկոմին կից հակակրոնականների խորհրդակցության բանաձևից)։

դ) Հակակրոնական աշխատանքի հարցերը մտցնել կուսքաղլուսաշխատանքի ծրագրերի մեջ։

ե) ուշադրություն դարձնել հակակրոնական պրոպագանդի մոմենտների վրա, քաղլուսաշխատանքի առանձին ղեկավարների ղեկուցումները լսելիս, տալ նրանց համապատասխան հրահանգներ։ Ինքնուրույն զեկուցումներ դնել նաև հակակրոնական աշխատանքի վիճակի մասին բջիջների ու կոլլեկտիվների ժողովներում։

զ) ջոկել ավելի պատրաստված կուսակցականներ լենանկյուններում ու ակումբներում հակակրոնական աշխատանք կատարելու համար։

է) աջակցել և ամնիջական մասնակցություն ցույց տալ խմբակների ղեկավարների պատրաստման, դրվագային ու արտադպրոցական աշխատանքի համաձայնեցման, սեմինարներ կազմակերպելու և այլ աշխատանքներին նպաստելու։

ը) ամեն կերպ աջակցել կազմակերպելու «Անաստվածների Միության» բջիջներ ու կանոնավորելու նրանց աշխատանքը, ղեկավարելով այն «Անաստվածների Միության» անդամ-կուսակցականների միջոցով։ Լավ հիմքերի վրա դնել անկուսակցականներին Միության մեջ գրավելու գործը։

թ) միջոցներ ձեռք առնել բարձրացնելու կուսակցականների որակը։

ժ) միջոցներ ձեռք առնել հակակրոնական պրոպագանդի մեջ քաշելու կոմյերիտականներին։ Երիտասարդ անաստվածների ընակազմի ընտրությունն ու նախապատրաստությունը պետք է կուսակցության աջակցող խմբակների հիմնական խնդիրներից մեկը լինի։ Սակայն անհրաժեշտ է նախատեսնել անցյալի սխալները այն է՝ «հարձակումը» („наскок“) «հակակրոնական խիզախությունը» („ухарство“) որոնք հակասում են մեր հակակրոնական պրոպագանդի գծին։

7. Անաստվածներին համախմբելու և նրանց հակակրոնական պայքարին մասնակից դարձնելու նպատակով անհրաժեշտ է բոլոր այն զորամասերում, որտեղ դրա համար կան անհրաժեշտ նախապայմաններ, կազմակերպել «Անաստվածների Միության» բջիջներ։

ԿԿԲ Քաղվարչությունը պետք է խնամքով հաշվի առնի բանակում յեղած անաստվածների միության բջիջների աշխատանքի առաջին փորձը և մոտ ապագայում մշակի մանրամասն ցուցումներ նրանց աշխատան-

քի վերաբերյալ և բանակի ղեկավարող մարմինների համար։

8. Կարմիր բանակայինի կրոնասիրության ուսումնասիրությունը լուրջ ու բարդ խնդիր է հակակրոնական պրոպագանդի ճիշտ և բավական խոր կառուցման համար։ Դրան մինչև այժմ բավարար ուշադրություն չի նվիրված, յեղել են անսիստեմ և մակերևույթային ուսումնասիրություններ, սխալ՝ լավատեսական (մեծ մասամբ) կամ հոռետեսական յեզրակացություններ.

Անհրաժեշտ է.

ա) կարմիր բանակայինի կրոնասիրության ուսումնասիրությունը կատարել ավելի սիստեմատիկ, սկսելով նրա զորամասը գալու առաջին իսկ օրերից, քաղբարոյական դրության ուսումնասիրության ընթացքում.

բ) տվյալ հարցի ղեկավարությունն ու նյութերի մշակումը կենտրոնացնել կուսկազմակերպության մեջ.

գ) ուսումնասիրությունը կատարել վոչ միայն քանակի, այլև վորակի ուղղությամբ, վորոշելով կարմիր բանակայինների հավատի ուժն ու բնույթը, կրոնական–կենցաղային նախապաշարումները.

դ) կարմիր բանակայինի կրոնասիրության ուսումնասիրության ամբողջ աշխատանքում, պետք է հայտնաբերել հատուկ զգուշություն, նախատեսություն և զսպվածություն։ Վճռապես պետք է հրաժարվել հարցվածային, եպիզոդիկ ուսումնասիրության փորձերից, վոր տեղի յեն ունեցել անցյալում, այն է՝ հարցացուցակներից (անկետա), քվեարկություններից, հարց ու փորձից և այլն։ Կարմիր բանակայինի անաստվածությունը վորոշելու համար հիմնական



հատկանիշը պետք է լինեն վոչ թե նրա անձնական հավաստիացումները, այլ փաստերը նրա կյանքից, նրա բարքից, տրամադրություններից, ծանոթությունը նրա աշխարհահայացքին.

ե) ուսումնասիրության համար հատուկ ուշադրություն նվիրել կուսակցականների ու կոմյերիտականների, ինչպես նաև անաստվածների բավականաչափ ստուգված ու վորակապես հայտնաբերված ակտիվի օգտագործմանը։ Բացի դրանից, այդ նպատակով օգտագործել քաղլուսապարատն ընթացիկ աշխատանքի պրոցեսում. տուխդխորհրդի, քաղպարապմունքներում ու սանպարապմունքներում տված հարցերի ուսումնասիրություն, տեղեկատու աշխատանքներում, գրքերի ընթեռնելիության ուսումնասիրություն։ Անհրաժեշտ է համապատասխան ձևով հրահանգել աշխատողներին։

9. Ներկա պայմաններում հատուկ նշանակություն է ստանում, պայքարն աղանդական շարժման դեմ, վորի աճումն ընթանում է պաշտոնական կրոններից հրաժարվող խմբակների ընդգրկման գծով։

Հակակրոնական աշխատանքի մեթոդները աղանդավորների նկատմամբ հաճախ գործադրվում են, առանց հաշվի առնելու զանազան աղանդների առանձնահատկությունները, վոր բացասական արդյունքներ են տալիս։

Անհրաժեշտ է մանրամասնորեն ծանոթանալ ամենից առաջ բապտիստների, մոլոկանների ու դուխոբորների շարժումների առանձնահատկություններին, հատուկ ուշադրություն դարձնելով այդ աղանդների ներկայացուցիչների վրա, վորոնք իրենց ուսմունքներում

քի վերաբերյալ և բանակի ղեկավարող մարմինների համար:

8. Կարմիր բանակայինի կրոնասիրության ուսումնասիրությունը լուրջ ու բարդ խնդիր է հակակրոնական պրոպագանդի ճիշտ և բավական խոր կառուցման համար: Դրան մինչև այժմ բավարար ուշադրություն չի նվիրված, յեղել են անսիստեմ և մակերևույթային ուսումնասիրություններ, սխալ՝ լավատեսական (մեծ մասամբ) կամ հոռետեսական յեզրակացություններ.

Անհրաժեշտ է.

ա) կարմիր բանակայինի կրոնասիրության ուսումնասիրությունը կատարել ավելի սիստեմատիկ, սկսելով նրա զորամասը գալու առաջին իսկ օրերից, քաղբարոյական դրության ուսումնասիրության ընթացքում.

բ) տվյալ հարցի ղեկավարությունն ու նյութերի մշակումը կենտրոնացնել կուսկազմակերպության մեջ.

գ) ուսումնասիրությունը կատարել ոչ միայն քանակի, այլև որակի ուղղությամբ, որոշելով կարմիր բանակայինների հավատի ուժն ու բնույթը, կրոնական-կենցաղային նախապաշարումները.

դ) կարմիր բանակայինի կրոնասիրության ուսումնասիրության ամբողջ աշխատանքում, պետք է հայտնաբերել հատուկ զգուշություն, նախատեսություն և զսպվածություն: Վճռապես պետք է հրաժարվել հարվածային, եպիզոդիկ ուսումնասիրության փորձերից, որ տեղի յեն ունեցել անցյալում, այն է՝ հարցացուցակներից (անկետա), քվեարկություններից, հարց ու փորձից և այլն: Կարմիր բանակայինի անաստվածությունը որոշելու համար հիմնական



հատկանիշը պետք է լինեն ոչ թե նրա անձնական հավաստիացումները, այլ փաստերը նրա կյանքից, նրա բարքից, տրամադրություններից, ծանոթությունը նրա աշխարհահայացքին.

ե) ուսումնասիրության համար հատուկ ուշադրություն նվիրել կուսակցականների ու կոմյերիտականների, ինչպես նաև անաստվածների բավականաչափ ստուգված ու որակապես հայտնաբերված ակտիվի օգտագործմանը: Բացի դրանից, այդ նպատակով օգտագործել քաղլուսապարատն ընթացիկ աշխատանքի պրոցեսում. աուդիտորիայի, քաղպարապմունքներում ու սանպարապմունքներում տված հարցերի ուսումնասիրություն, տեղեկատու աշխատանքներում, գրքերի ընթեռնելիության ուսումնասիրություն: Անհրաժեշտ է համապատասխան ձևով հրահանգել աշխատողներին:

9. Ներկա պայմաններում հատուկ նշանակություն է ստանում, պայքարն աղանդական շարժման դեմ, որի աճումն ընթանում է պաշտոնական կրոններից հրաժարվող խմբակների ընդգրկման գծով:

Հակակրոնական աշխատանքի մեթոդները աղանդավորների նկատմամբ հաճախ գործադրվում են, առանց հաշվի առնելու զանազան աղանդների առանձնահատկությունները, որ բացասական արդյունքներ են տալիս:

Անհրաժեշտ է մանրամասնորեն ծանոթանալ ամենից առաջ բապտիստների, մոլոկանների ու դուխոբորների շարժումների առանձնահատկություններին, հատուկ ուշադրություն դարձնելով այդ աղանդների ներկայացուցիչների վրա, որոնք իրենց ուսմունքներում

ձգտում են բացասական վերաբերմունք հաստատել դեպի զինվորական ծառայությունը։

10. Ադրբեջանում հակակրոնական պրոպագանդ մղելիս անհրաժեշտ է առաջին հերթին ուշադրություն դարձնել կենցաղային նախապաշարումները վերացնելու վրա (վերաբերմունքը դեպի կինը, սերունդների փոխհարաբերությունները և այլն)։

11. Հակակրոնականների բնակազմ պատրաստելը մեր ժամանակվա անհետաձգելի խնդիրն է։ Անհրաժեշտ է մինչև ճամբար դուրս գալը կազմակերպել կայազորային կոնֆերանս-սեմինարներ։ Քաղաշխատանքի կաբինետներին կից անհրաժեշտ է ստեղծել «Հակակրոնական» բաժիններ, լուրջ ուշադրություն դարձնել ժամանակին հակակրոնական գրականության ստանալու վրա։

Առաջին հերթին անհրաժեշտ է վերացնել քաղաշխատողների լայն շրջանի, կուսակցականների ու կոմերիտականների լայն ակտիվի տարրական անգրագիտությունը հակակրոնական պրոպագանդի հարցերում, թե՛ առանձնաբար պատրաստելով նրանց համապատասխան խմբակներում և թե՛ հակակրոնական գրականության ինքնուրույն ընթերցանության միջոցով։ Նույն նպատակով, ինչպես և այդ աշխատանքի դրությունը հաշվի առնելու համար, հարկավոր է ոգտագործել հակակրոնական պրոպագանդ մղող ընկերների մեթոդական խորհրդակցությունները։ Խորհրդակցությունները պետք է կազմակերպել սիստեմատիկ։ Հակակրոնական պրոպագանդի հարցեր մտցնել այն խորհրդակցություններում, որ նախատեսված են Պուռ-ի՝ 1926 թվի № 130 հրամանով։



12. Այդ աշխատանքին լայն չափով մասնակից դարձնել քաղաքացիական կազմակերպություններին։ Անհրաժեշտ է ներկայացուցչության միջոցով կապվել կուսկազմակերպություններին կից յեղած հակակրոնական հանձնաժողովների հետ, կապվել տեղական «Հակակրոնական» կաբինետների հետ, «Անաստվածների Միության» ընկերությունների քաղլուսվարների հետ, ապահովել յեկեղեցու ներկայացուցիչների գործունեության վերաբերյալ փաստացի նյութերի և գրականության, զեկուցողների ու ղեկավարների ստացումը։

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՁԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻ 6-ՐԴ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԵՆՍԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

## Բ Ա Ն Ա Ձ Ե Վ

Ընկ. Ա. Շահգյալդյանի՝ «Կուսակցության 15-րդ կոնֆերանսի արդյունքների» մասին տված զեկուցման առթիվ.

Հայկական Հրաձիգ Դիվիզիայի կուսակցական կազմակերպության 6-րդ կոնֆերանսը լսելով ընկ. Ա. Շահգյալդյանի զեկուցումը ՀամԿ(բ)Կ 15-րդ կոնֆերանսի արդյունքների մասին, ամբողջապես և լիովին միանում է նրա բոլոր վորոշումներին և Դիվիզիայի վողջ կազմակերպության անունից հաստատուն խոսք է տալիս իր աշխատանքների ընթացքում անշեղորեն ղեկավարվել այդ վորոշումներով և ավելի խորն ուսումնասիրել նրանց:

Կոնֆերանսը միևնույն ժամանակ դատապարտում է ոպպոզիցիոն բլոկի քաղաքական գիծը, վորն իր՝ կուսակցության Լենինյան միասնության դեմ մղած աննախընթաց ֆրակցիոն-քայքայիչ պայքարը փորձեց տեղափոխել Կոմինտերն, վորով նա դրժեց՝ ֆրակցիոն պայքարի մեթոդներից հրաժարվելու մասին հոկտեմբերի 16-ին կուսակցության տված իր խոստումը մի կողմից, ֆրակցիոն պայքարը Կոմինտերնի մյուս սեկցիաների մեջ տեղափոխելու և բոլոր ոպպոզիցիոն տարրերի համար մի նոր, ընդհանուր պլատֆորմա ստեղծելու քայլին դիմեց—մյուս կողմից:

Կոնֆերանսն արձանագրում է, վոր կուսակցության 15-րդ կոնֆերանսի և Կոմինտերնի Գործկոմի պլենումի վորոշումները միանգամայն ճիշտ են՝ ոպպոզիցիոն բլոկի գործելակերպը և ելույթները, վորպես սոցիալ-դեմոկրատական թեքում բնորոշելու խնդրում, վորը սպառնում է ՀամԿ(բ)Կ միասնությանը:

Ոպպոզիցիայի ամբողջ պլատֆորմն արհերքելիորեն ապացուցում է նրա լիակատար թերահավատությունը պրոլետարիատի ուժին ու Ս.Խ.Հ.Մ. սոցիալիզմ կառուցելու հնարավորության մասին, թերահավատություն, վորը միանգամայն հակառակ է մարքսիզմի և լենինիզմի ուսմունքին, և վորն արդեն դատապարտվել է մեր կուսակցության ու Կոմինտերնի կողմից:

Կոնֆերանսը մի ավելորդ անգամ ևս ընդգծում է, վոր սոցիալիզմի կառուցումը ՍԽՀՄ-ում մեր սեփական ուժերով միանգամայն հնարավոր է, վորի համար անհրաժեշտ նախադրյալներ և նյութական միջոցներ մենք արդեն ունենք:

Դիվիզիայի կուսակցական կոնֆերանսը, վճռականորեն դատապարտելով ոպպոզիցիայի ֆրակցիոն գործունեյությունը, միաժամանակ պարտավորեցնում է Դիվ. կուս. կազմակերպություններին ու նրա անդամներին շարունակել նույն թափով գաղափարական-քաղաքական պայքարը ոպպոզիցիոն բլոկի դեմ և լենինիզմի հիմունքների ուսումնասիրության գործը:

# ԲԱՆԱՁԵՎ

## Կովկասյան Կարմրադրոշ Բանակի Քաղվարչության զեկուցման առթիվ.

Լսելով ընկ. Հ. Հովսեփյանի զեկուցումը Կովկասյան Կարմրադրոշ Բանակի քաղաքական վարչության գործունեության մասին, Հայկական Հրաձիգ Դիվիզիայի կուսակցական կազմակերպության 6-րդ կոնֆերանսը քաղվարչության վարած քաղաքական-կուսակցական գիծը համարում է՝ ճիշտ, իսկ կատարած աշխատանքները՝ բավարար:

1. Կոնֆերանսն արձանագրում է, որ Բանակի կուսակցական կազմակերպությունը ընթացիկ տարում, թե՛ քանակապես և թե՛ որակապես զգալիորեն աճել է, ձեռք է բերել խոշոր նվաճումներ իր աշխատանքների բոլոր բնագավառներում: Այս մի տարվա ընթացքում, նա կարողացել է խորացնել մեր կուսակցության առաջ դրված հիմնական հարցերը, ակտիվ կերպով զբաղվել ընդհանուր կուսակցական-քաղաքական խնդիրների քննությամբ, մասնակցել օպպոզիցիոն բլոկի դեմ մղվող ներկուսակցական պայքարի, որի ընթացքում նա էլ ավելի հասունացել, ամրացել ու մշակված քաղաքական վերաբերմունք և հայտնաբերել հանդեպ կուսակցության ղեկավար մարմինների որոշումները և օպպոզիցիայի քաղաքական գիծը:

Բանակի կուս. կազմակերպությունն իր ժամանակին, որպես մի հիմնական միավոր, հանդես է եկել մեր վողջ կուսակցության հետ միասին պաշտպանելու օպպոզիցիոն բլոկի հակալենինյան, սկզբունքային սխալները, նրա սոցիալ-դեմոկրատական տրոցկիստական թեքումների համար: Ինչպես մինչև այժմ, այսուհետև էլ բանակի կուս. կազմակերպությունը պետք է վճռական, բոլշևիկյան պայքար մղի ամեն տեսակի հակակուսակցական, օպպոզիցիոն թեքումների և տենդենցների դեմ ում կողմից էլ, որ նրանք հանդես գան:

Կոնֆերանսն ընդգծում է, որ կուսակցության ներսում յերևացող նման թեքումների և տենդենցների դեմ վճռական պայքար մղելու համար անհրաժեշտ է ավելի ուժեղացնել լենինիզմի հիմունքների, բոլշևիկյան կուսակցության անցյալի և կուսակցության ու Կոմինտերնի վերջին բոլոր որոշումների ուսումնասիրության գործը:

2. Կոնֆերանսն արձանագրում է ներկուսակցական աշխատանքների որակի բարձրացումը և ընդհանուր աշխուժացումը, որպիսի հանգամանքը որեցոր աճող ու քաղաքականապես ակտիվացող անկուսակցական մասսային ընդգրկելու նախապայմանն է հանդիսանում: Հետագայում, այս հիմնական խնդրի իրագործման նըպատակով պետք է բացառիկ լուրջ ուշադրություն դարձնել կուսանդամների մեջ տարվելիք դաստիարակչական աշխատանքների խորացման և կուսակտիվի վերապատրաստման ու նրա շրջանակների լայնացման խնդրի վրա, որպեսզի մենք կարողանանք ամբողջապես ընդգրկել անկուսակցական մասսայի քաղաքական ակտիվությունը և հաշվի առնել ու տարբեր մոտեցում ունենալ նրա զանազան շերտերի նկատմամբ (բանվորներ, բատրակներ, չքավոր գյուղացիներ, միջակներ, ինտելիգենտներ և այլն):

3. Բանակի քաղ-բարոյական դրության կանոնավորման ասպարեզում ունեցած խոշոր նվաճումների

հետ միաժամանակ դեռ ևս կան մի շարք թերություններ, վորոնց վերացնելու նպատակով անհրաժեշտ է բարձրացնել մեր կուս. քաղլուս. աշխատանքների վորակն ու քաղափարական բովանդակությունը: Դասակարգայնորեն ավելի չերտավորված գյուղից յեկած մասն իր հետ բանակ է բերել քաղաքական ակտիվ տրամադրություններ ու ձևավորված պահանջներ, վորոնց լուծելու համար, պետք է ուժեղացնել ուսումնասիրության աշխատանքները և այդ տրամադրություններին և պահանջներին տալ ճիշտ քաղաքական ընթացք և բովանդակություն:

4. Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր մեր բանակը կազմված է մի շարք ազգություններից և այն, վոր մանր բուրժուական–հակախորհրդային տարրերը առևտրական կապիտալի զարգացման և հողի սակավության հիման վրա ցույց են տալիս վորոշ կենսունակություն, ազգային տրամադրությունների և տենդենցների սրումը Բանակում դառնում է միանգամայն հնարավոր: Յելնելով այս դրությունից, կուսակցական կազմակերպությունը պետք է լուրջ ուշադրություն դարձնի այս հողի վրա առաջացած տրամադրությունների ուսումնասիրության և մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության ու Անդրկովկասի ուսումնասիրության խնդրի վրա:

5. Հրամանատարական կազմի նյութական ու բնակարանային դրության բարվոքման հետ միաժամանակ բարձրացնել և նրա հասարակական–քաղաքական ակտիվությունը և ուժեղացնել նրա մասնակցությունը բանակի քաղլուս. աշխատանքների ասպարիզում: Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում հետագայում լուրջ



ուշադրություն դարձնել հրամանատարական կազմի քաղաքական տրամադրությունների ուսումնասիրության և ընդգրկման խնդրի վրա: Բացի այս, հրամ. կազմի քաղաքական պատրաստությունը բարձրացնելու նպատակով, պետք է նրան ավելի լայն չափերով քաշել քաղլուս. աշխատանքների ասպարեզ և ամեն կերպ ոժանդակել ու ընդառաջ գնալ նրա ինքնազարգացման աշխատանքներին:

6. Յերկրային շինարարության բնագավառում, մենք ունեցել ենք զգալի նվաճումներ: Բնակազմն արդեն ըմբռնել է յերկրային շինարարության հիմնական խնդիրներն ու պահանջները: Դրա հետ միաժամանակ յերկրային զորամասերի առաջ լուրջ խնդիր է դրվում ուժեղացնել և խորացնել միջհավաքային շրջանի աշխատանքները, վորպես յերկրային շինարարության հիմնական և ամենագլխավոր ասպարեզներից մեկը: Այս նպատակով կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ստեղծել նյութական հատուկ միջոցներ այդ աշխատանքների հաջող ընթացքն ապահովելու համար:

7. Հայկական Դիվիզիայի 6–րդ կոնֆերանսը մի ավելորդ անգամ ևս ընդգծում է, վոր միանգամայն ճիշտ են բանակի 4–րդ կուսկոնֆերանսի և քաղբաժինների պետերի, դիվիզիաների զինկոմների խորհրդակցության վորոշումները միահրամանատարության սիստեմի անցկացման մասին: Կոնֆերանսն արձանագրում է, վոր միահրամանատարության սիստեմին անցնելու համար արդեն ստեղծված են նպաստավոր պայմաններ, նաև ազգային զորամասերում–մասնավորապես, Հայկական Դիվիզիայում, վորի գործնական կիրառումը պետք է հետզհետե առաջ տանել:

## Բ Ա Ն Ա Ձ Ե Վ.

### Հայկական Հրաձիգ Դիվիզիայի քաղբաժնի զեկուցման առթիվ.

1. Լսելով ընկ. Գ. Սաֆրազբեկյանի զեկուցումը Հայկական հրաձիգ Դիվիզիայի քաղաքական բաժնի գործունեության մասին, Դիվիզիայի կուսակցական կազմակերպության 6-րդ կոնֆերանսը քաղբաժնի վարած քաղաքական-կուսակցական գիծը համարում ե՝ ճիշտ, իսկ կատարած գործնական աշխատանքները բավարար:

2. Քաղաքական բաժնի գործունեության անցած շրջանը բնորոշվում ե կարմիր բանակային մասսայի և հրամանատարական-քաղաքական կազմի նյութական կենցաղային և զորանոցային ու բնակարանային դրության ընդհանուր բարելավումով:

Այս ասպարիզում նկատված մասնակի թերությունները վերացնելու և հետագայում ավելի խոշոր հաջողությունների հասնելու նպատակով, անհրաժեշտ ե լուրջ ուշադրություն դարձնել Դիվիզիայի վողջ անձնական ապարատի վորակի բարձրացման, նրա ռացիոնալիզացիայի յենթարկման և խնայողության ռեժիմի ճիշտ կիրառման խնդիրների վրա:

3. Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր քաղաքացիական կոոպերացիան գործնականում ի վիճակի չե ապահովելու դիվիզիայի զորամասերին և բավարարելու հրամքաղկազմի պահանջները, անհրաժեշտ և նպատակահարմար գտնել Դիվիզիային ապահովելու համար հրավիրելու «Բոյեց Կ.Կ.Ա.» սպառողական ընկերությանը, վորի համար այս խնդիրը դնել համապատասխան մարմինների առաջ, վերջնական լուծում տալու համար:

4. Դիվիզիայի քաղաքա-բարոյական դրությունը ընդհանուր առմամբ բավարար համարելով, կոնֆերանսը միաժամանակ արձանագրում ե գյուղացիական տրամադրությունների գոյությունը (դժգոհություններ քաղաքային արդյունաբերական ապրանքների պակասության, բարձր գների, Խորհրդային իշխանության հարկային քաղաքականության մասին, գլխավորապես ունևորների և մասամբ միջակ տարրերի կողմից, խանդ դեպի բանվոր դասակարգը և այլն), վորպիսին զարգանալով, կարող ե ազդել զորամասերի ռազմունակության վրա:

Ելնելով այս դրությունից, կոնֆերանսն անհրաժեշտ ե համարում.—

ա) Վոր կուսակցական կազմակերպությունն ել ավելի մոտենա կ. բանակային մասսային, ուժեղացնի նրա քաղաքական տրամադրությունների, պահանջների ու դժգոհությունների առաջացման պատճառների ուսումնասիրությունը, համարելով այն լուրջ պատասխանատու և տևողական աշխատանք, հետևելով միաժամանակ բանակային մասսայի մեջ այս կամ այն հողի վրա առաջացած դժգոհություններին ու տեղի ունեցող բոլոր պրոցեսներին:

բ) Հաստատուն կուրս ընդունել անկուսակցական մասսայի որեցոր աճող հասարակական-քաղաքական ակտիվության լիակատար ընդգրկման և այդ ակտիվությանը ճիշտ քաղաքական ընթացք տալու և խորհրդային հունի մեջ առնելու համար:

գ) Ավելի ուժեղացնել, սիստեմատիկ դարձնել ու

խորացնել կ. բանակային մասսայի մեջ բանվոր դասակարգի ղեկավար դերի պրոպագանդն ու կոմունիստական կուսակցության ազդեցության հզորացման գործը:

դ) Դասակարգայնորեն ավելի շերտավորված գյուղից յեկած 1904 թ. ծնված զորակոչն իր հետ Դիվիզիա յէ բերել քաղաքական հասուն տրամադրություններ ու ձևավորված պահանջներ, վոր նա դնում է մեր քաղապարատի և կուսկազմակերպության առաջ:

Այդ մասսայի ուսումնասիրության, նրան արագորեն մեր ազդեցության տակ առնելու և նրա քաղաքական ակտիվությունը ճիշտ կերպով ոգտագործելու խնդիրը, պետք է իր վողջ ծանրությամբ մեր առաջ դրվի:

5. Մեր յերկրի տնտեսական-կուլտուրական ընդհանուր վերելքի հետ միաժամանակ, կենսունակության վորոշակի նշաններ են ցույց տալիս մանր բուրժուական—հակախորհրդային տարրերը, վորոնց գործունեությունը մեր պայմաններում արտահայտվում է նաև ազգայնական տրամադրությունների պրոպագանդի մեջ: Այսօրինակ տրամադրությունները նորեկների մեջ յեղող ունևոր տարրերի և զանազան այլ ճանապարհներով կարող են մուտք գործել նաև Դիվիզիայի շարքերը:

Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ե՛լ ավելի ուժեղացնել մասսաների ինտերնացիոնալիստական դաստիարակության գործը:

Միաժամանակ լուրջ ուշադրության առարկա պետք է դարձնել Անդրկովկասի և մանր բուրժուական-ազգայնական կուսակցությունների, գլխավորապես—դաշնակցության անցյալի ուսումնասիրության խնդիրը: Վերև հիշված խնդրի հաջող իրագործումը պահանջում



է կուս. կազմակերպություններից ավելի ուժեղացնել կուսակցության քաղաքական գիծը ազգային հարցի բնագավառում:

6. Արձանագրելով ռազմական կարգապահության բարձրացման բնագավառում ունեցած խոշոր նվաճումները, 6-րդ կոնֆերանսը նշում է, վոր Դիվիզիայի 5-րդ կուս. կոնֆերանսի նշած բացերը—հրամկազմի կողմից գործադրվող ուժերի միակողմանի բնույթ կրելը, դիսցիպլինար քաղաքականության անցկացման ընթացքում, ներքին կանոնագրքի մի շարք կետերի մոռացության տալը, պատժական թեքումը և այլն—դեռևս լիովին իրագործված չեն:

Նշելով կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների կատարած խոշոր դերը ռազմական կարգապահության բարձրացման գործում, կոնֆերանսը միաժամանակ ընդգծում է, վոր կուսակցականների և կոմյերիտականների կողմից դեռ ևս տեղի յեն ունենում կարգապահական խախտումներ, վորոնց տոկոսը յերբեմն—համեմատաբար վերցրած—հասնում է անկուսակցականների կողմից կատարած կարգապահական խախտումների տոկոսին:

Այս ասպարեզում, կոնֆերանսն անհրաժեշտ է համարում՝

ա) Շարունակել կարգապահության բարձրացման վճռական, կայուն գիծը, միաժամանակ ձգտելով բոլոր կանոնագրքերի և գոյություն ունեցող ցուցումների լրիվ կիրառմանը՝ նրանց ճիշտ ըմբռնման հիմունքներով:

բ) Ձգտել նրան, վոր հետզհետե բոլորովին վերանա կուսակցականների և կոմյերիտականների կողմից ռազմական կարգապահության խախտման դեպքերը: Ռազ-

մական կարգապահության հիմնական պահանջները չարունակաբար խախտող կուսակցականի նկատմամբ, կոմբջիջները պետք է նույնքան ուշադիր ու լուրջ վերաբերմունք ունենան, վորքան կուսակցական կարգապահությունը խախտող ընկերոջ նկատմամբ:

7. Դիվիզիայի հրամանատարական-քաղաքական ներկա կազմն իր ռազմական-քաղաքական պատրաստությամբ և վորակով ավելի բարձրացել ու առաջադիմել է: Բայց և այնպես, նկատելի յեն մի շարք հիմնական թերություններ, վորոնց շարքին են պատկանում, որինակ. հրամկազմի վորոշ մասի ծառայություն չիմանալը, կարմիր բանակային մասսայից կտրված լինելը, քաղլուսաշխատանքների մեջ վոչ ակտիվ մասնակցություն ցույց տալը և այլն:

Կոնֆերանսն այս ասպարեզում, անհրաժեշտ է համարում.—

ա) Եվ ավելի բարձրացնել հրամանատարական կազմի մասնակցությունը քաղլուսաշխատանքների մեջ:

բ) Ձգտել նրան, վոր հրամանատարը ավելի մոտ լինի կ. բանակային մասսային, վորպեսզի նա մի կողմից բարձրացնի իր հեղինակությունը, իսկ մյուս կողմից ցույց տա, և գործնական կյանքում ապացուցի, վոր ինքն իրոք հանդիսանում է կարմիր բանակայինի ռազմական և քաղաքական դաստիարակիչը:

գ) Ընդհանուր առմամբ վերցրած մեր դիվիզիայի քաղաքական կազմի վորակն անցյալի հետ համեմատած, բարձրացել է. ռազմականացման յենթարկելու ասպարեզում, քաղկազմը—մասնավորապես քաղղեկները ցույց են տվել զգալի առաջադիմություն:



Այն կարծիքը, վոր քաղղեկները հեղինակություն չունեն, անպատրաստ են և այլն, հիմնովին սխալ է, վորպիսի մտայնության դեմ կոնֆերանսն անհրաժեշտ է համարում հետագայում վճռական պայքար մղել:

դ) Այս բոլորի հետ միաժամանակ, պետք է ավելի ուժեղացնել հրամ. և առանձնապես քաղկազմի ռազմականացման գործը, նրան ռազմական խաղերի, զինվորական և ՊԱԶԸ-ի պարապմունքներին լայն չափով մասնակից դարձնելու և նրա հետ ռազմական հատուկ պարապմունքներ տանելու միջոցով:

ե) Քաղբաժնի ընդունած կուրսը—կուս անդամ քաղղեկներ ունենալու ուղղությամբ համարել միանգամայն ճիշտ ու անհրաժեշտ և հետագայում շարունակել նրա կիրառումը նույն թափով:

զ) Հատկապես լուրջ ուշադրություն դարձնել կրտսեր-հրամկազմի ռազմական քաղաքական պատրաստության բարձրացման և վորակի ուժեղացման խնդրի վրա:

Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում շարունակել կրտսեր հրամկազմի հեղինակության՝ բարձրացման գործնական աշխատանքները, վորի համար պետք է ամբողջ հրամ. քաղկազմի և կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունների ուշադրությունը սրել հանդեպ այս խնդիրը: Միաժամանակ պետք է ուշադրություն դարձնել զորամասերի վարժական դպրոցների համալրման վրա:

8. Միահրամանատարության խնդրում կոնֆերանսն ընդգծում է այդ սկզբունքի՝ Դիվիզիայում կիրառելու վճռական անհրաժեշտությունն ու այժմեյականությունը, վորի համար բոլոր անհրաժեշտ նախադրյալները արդեն կան: Ավելի արագ թափով պետք է առաջ տանել

կուսակցական հրամանատարների, վորպես միահրամանատարներ առաջ քաշելու և նախապատրաստելու աշխատանքները: Անհրաժեշտ է ավելի խոշոր ուշադրություն դարձնել նրանց գործնականապես կուսքաղլուսաշխատանքների մեջ քաշելու վրա:

9. Ծանրաբեռնվածության գործում պետք է նշել, վոր նա տեղի յե ունենում աշխատանքը բավարար չափով ռեգլամենտացիայի չյենթարկելու և ժամանակն աննպատակահարմար կերպով վատնելու պատճառով:

Քաղլուսաշխատանքների կամ նրա ձևերի կրճատումը վոչ նպատակահարմար է և վոչ էլ հնարավոր: Ծանրաբեռնվածության վերացումը պետք է կատարվի աշխատանքի ռացիոնալիզացիայի յենթարկման միջոցով:

Առանձնապես անհրաժեշտ է թեթևացնել կուսակցական հրամանատարի և դաս-հրամ-խմբակավարի ծանրաբեռնվածությունը, վորպեսզի նա կարողանա ինքնազարգացմամբ զբաղվել, հայտնաբերել իրեն առաջին հերթին, վորպես հրամանատարի և ռազմական տեսական պատրաստությունից հետ չմնա:

10. Կարմիր բանակային մասսայի ակտիվությունն ընթանում է նաև իրավունքի (գլխավորապես, գյուղի կենցաղային ու բանակի ծառայության վերաբերող հարցերը) գիտելիքներ ձեռք բերելու ձգտման ուղիով: Այս հանգամանքը հրամքաղկազմի առաջ խնդիր է դընում բարձրացնել իր գիտելիքներն այդ բնագավառում.

կոնֆերանսն անհրաժեշտ է համարում, ապագայում աշխատանքի այդ ասպարեզում ավելի մեծ ուշադրություն դարձնել ուժեղացնելու դատախազության և Տրիբունալի հասարակական-քաղաքական աշխատանքը, բարձրացնել կապի հանձնաժողովների վորա-



կական կազմը և իրավա-գիտական պրոպագանդայի համար հատուկ ժամեր հատկացնել, թե բանակային մասսայի և թե հրամանատարական քաղաքական կազմի համար:

11. Կարմիր բանակայինների ինքնագործունեության հասարակական կազմակերպությունների աշխատանքի բնագավառում, պետք է հիշատակել, վոր նրանք դեռևս լրիվ չափով չեն դարձել կ. բանակայինների հասարակական ինքնագործունեությունը զարգացնող կազմակերպություններ:

Անհրաժեշտ է խնդիր ունենալ, վոր այդ կազմակերպությունները դառնան կուսակցական ազդեցությունը բանակային անկուսակցական մասսայի վրա ուժեղացնելու գործոններ: Պետք է ձգտել նրան, վոր հասարակական կազմակերպությունները հնարավորություն տան ու նպաստեն կարմիր բանակայինների ինքնագործունեության հայտնաբերմանը, դաստիարակեն ու հասարակական աշխատանքների հմտություն տան նրանց և կուս. կազմակերպություններին նպաստեն կ. բանակայինների հասարակական-խորհրդային գիտակցությունը ձևակերպելու գործում:

Այդ խնդիրները կարելի յե իրագործել աշխատանքների վորակի բարելավման միջոցով, վորի համար, անհրաժեշտ է՝

12. Վորակապես բարելավել կուս. կազմակերպության՝ հասարակական կազմակերպությունների վրա ունեցած ղեկավարությունը, ակտիվ կերպով աշխատանքներին մասնակից դարձնելով կուսակցականներին, կոմյերիտականներին ու ամբողջ հրամքաղկազմին:

13. Խնդիր չդնել 100 տոկոսով ընդգրկելու կ. բա-

նակայիններին, որը դժվարեցնում է աշխատանքը: Որոշ սահմանափակումներ դնել հասարակական կազմակերպությունների անդամների և ոչ անդամների միջև՝ աշխատանքների մեջ քաշելու և ակտիվ մասնակցության խնդրում: Խուսափել հասարակական կազմակերպությունների ժողովները վաշտային ընդհանուր ժողովների վերածելուց:

14. Բարելավել հասարակական կազմակերպությունների ժողովների բովանդակությունը և կոնկրետացնել նրանցում քննվող հարցերը: Ուժեղացնել լենանկյուններում զրույցների և նորությունների տախտակի միջոցով տարվող աշխատանքը. ավելի լայն չափով օգտագործել պատի թերթերը, դիագրամները, մոդելների և այլ ձեռնարկների կազմելը, որի համար ժամանակ հատկացնել օրացուցային-ցուցակներում: Հատուկ ուշադրություն դարձնել հասարակական կազմակերպությունների անդամներին ակտիվ աշխատանքի մեջ քաշելու վրա անհատական և խմբակային պարտականություններ տալու միջոցով:

15. Բոլոր անցկացվող սեմինարների աշխատանքների ընթացքում ուշադրություն դարձնել նաև հասարակական կազմակերպությունների աշխատանքների ձևերի ու մեթոդների պարզաբանման վրա:

16. Տնտեսության աջակցող հանձնաժողովները վերջին ժամանակներս ունեցել են որոշ նվաճումներ, նրանք արդարացրել են իրենց, որպես մի կազմակերպություն, որը նպաստում է տնտեսական ապարատին, տնտեսավարության ռացիոնալիզացիայի գործում, աստիճանաբար այդ աշխատանքի մեջ քաշելով կ. բանակային մասսային: Անհրաժեշտ է այդ աշխատանքի և



այդ ասպարեզում ունեցած ղեկավարության հետագա ուժեղացումը, մանավանդ, խնայողության ռեժիմի կիրառման գործում:

17. Չնայած որոշ առաջադիմության, դեռ չի կարելի բավարար համարել կ. բանակայինների դիմումների պատասխանները քաղաքացիական կազմակերպությունների կողմից: Անհրաժեշտ է համապատասխան կազմակերպությունների միջոցով դնել այդ հարցը և ձգտել, որ բարենպաստ լուծում ստանա: Բարելավելով կապի հանձնաժողովների աշխատանքը, բավարարելով կ. բանակայինների պահանջները խորհրդածությունների միջոցով, միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել աշխատանքը հարց ու պատասխանների երեկոների շուրջը:

18. Գավ. զինկոմատների աշխատանքների ասպարեզում, կոնֆերանսը ընդգծում է ընդհանուր բարելավում, Քաղբաժնի ղեկավարության զգալի ուժեղացում:

Որպես հիմնական խնդիր, շարունակում է մնալ զինգործավարների որակի բարձրացումը, նրանց ռազմականացումը և նրանց նյութական դրության բարելավումը: Գավ. զինկոմատների հաստիքների (շտատների) վերջին խիստ կրճատումը, երբ զորակոչված կոնտինգենտի շրջանում չկան զինապարտ գրագիրների կադրեր, հարկադրում է Քաղբաժնին համապատասխան մարմինների առաջ դնելու՝ Գավ. զինկոմատների ուժեղացման խնդիրը:

Զորակոչի խնդրում անհրաժեշտ է հետագայում ևս ավելի խոշոր ուշադրություն դարձնել և խնամքով վերաբերվել դեպի սոցիալական ընտրության և արտոնություն ունեցողների ջոկման գործը:

Այս ասպարեզում հաջողությունն հնարավոր է այն դեպքում միայն, յերբ այդ աշխատանքների մեջ կը քաշվեն բավական թվով տեղական համապատասխան աշխատողներն ու կազմակերպությունները։

19. Բանակի Քաղաքական Վարչության, թե կենդանի և թե գրավոր կապն ու ղեկավարությունն անցյալի համեմատությամբ ավելի ուժեղացել է ու կոնկրետացել։

20. Հայաստանի Կ. (բ) Կ. Կենտկոմի ղեկավարությունը յեղել է ուժեղ։ Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում, վոր հետագայում Կենտկոմը գավառային կոմիտեների միջոցով ուժեղացնի կապը զորամասերի —նամանավանդ, յերկրային գնդի—հետ, և ուժեղացնի ռազմական մոմենտը տեղական կուս. կազմակերպությունների և վերջիններիս միջոցով բոլոր այլ կազմակերպությունների ու բնակչության մեջ։

21. Կապը հատուկ բաժնի, զին. տրիբունալի և դատախազության հետ յեղել է սերտ, վորի շնորհիվ նրանք իրենց աշխատանքների ընթացքում կարողացել են անցկացնել Քաղբաժնի հիմնական գիծը։

22. Կոնֆերանսը, արձանագրելով ռազմական դըպրոցի կուս. կազմակերպության և ընդհանուր քաղլուսաշխատանքի վորակական բարձրացումը, անհրաժեշտ է գտնում շարունակել ռազմա-քաղաքական դպրոցների Հուլիսյան կուս. խորհրդակցության վորոշումների կիրառումը և 5-րդ կուս. կոնֆերանսի հրահանգների հիման վրա շարունակել Քաղբաժնի ղեկավարությունը կուսակցական աշխատանքների ասպարեզում։

Կուսակցական աշխատանքների ասպարեզում

23. 6-րդ կոնֆերանսը նշում է, վոր ընթացիկ տարում Դիվիզիայի կուսակցական կազմակերպության կյանքում նկատվել է խոշոր ակտիվություն և թարմություն, լուրջ վերաբերմունք հանդեպ ընդհանուր կուսակցական-քաղաքական խնդիրները, վորի ցայտուն ապացույցն է կուս-ղեկավար մարմինների գարնանային և աշնանային վերընտրական կամպանիաների ընթացքում կուսակցական լայն մասսաների հայտնաբերած առողջ ակտիվությունը, Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմի ապրիլյան-հուլիսյան պլենումների և 15-րդ կոնֆերանսի վորոշումների խոր ուսումնասիրությունը, և այն առողջ ու համերաշխ վերաբերմունքը, վոր նա ցուցահանեց դեպի կուսակցության մեծամասնությունը՝ ոպոզիցիոն բլոկի դեմ մղվող ներկուսակցական պայքարի ու տարաձայնությունների ընթացքում։

Այդ խնդիրների քննության ընթացքում, Դիվիզիայի կուսակցական կազմակերպությունն առանց գաղափարական քաղաքական թեքումներ ունենալու միյահամուռ կերպով կանգնած է յեղել Լենինյան միասնության պահպանման տեսակետի վրա, միաժամանակ նա մեր վողջ կուսակցության հետ միասին վճռական պայքար է մղել նոր ոպոզիցիոն բլոկի Փրակցիոն քայքայիչ գծի դեմ։

24. Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում, վոր Դիվիզիայի կուսակցական կազմակերպությունը հետագայում ևս նույն թափով ու վճռականությամբ շարունակի իր պայքարը ՀԱՄ. Կ. (բ) Կ. ներսում նկատվող տրոցկիստական սոցիալ դեմոկրատական թեքումների դեմ ու ամեն կերպ պաշտպանի կուսակցության շարքերի Լենինյան միաձուլությունը։

Այդ իսկ նպատակով անհրաժեշտ է ուժեղացնել

կուսակցական լայն մասսաների գաղափարական-քաղաքական, բոլշևիկյան դաստիարակությունը և Լենինիզմի հիմունքների և մեր կուսակցության անցյալի ու վերջին բոլոր վորոշումների ուսումնասիրությունը:

25. Կուսակցական շինարարության հերթական աշխատանքները Դիվիզիայում, պետք է ընթանան՝ ներկուսակցական դեմոկրատիայի սկզբունքների, (բանակի պայմաններին հարմարեցրած) ճիշտ կիրառման, կուսակցական վողջ մասսայի ակտիվության է՛լ ավելի բարձրացման, ղեկավարության ձևերի կատարելագործման, մեր կողմից կատարվող աշխատանքների վորակի ու գաղափարական բովանդակության խորացման, կատարված կուսակցական աշխատանքների վրա հսկողություն ունենալու, և փորձի մանրամասը հաշվի առնելու նշանաբանի տակ:

26. Պարտականությունների հավասար բաշխման, կուսակցական ուժերի նպատակահարմար օգտագործման, աշխատանքի ռացիոնալիզացիայի յենթարկման ու ժամանակի ռեգլամենտացիայի միջոցով և անտեղի խորհրդակցություն անցկացնելու կամ ժողովներն իզուր տեղը ձգձգելու փոխարեն, պետք է հետագայում բարձրացնել կուսակցական աշխատանքների վորակն ու գաղափարական բովանդակությունը:

Մեր կատարած աշխատանքների վորակը և բովանդակությունը չպետք է քանակից հետ մնա: Մեր ունեցած քաղաքական նվաճումները պետք է վորակապես ամրապնդվեն ու խորացվեն:

27. Այս խնդրի լուծումը մեծ չափերով կախված է կուսակցական ակտիվից, ընդհանրապես, և մասնավորապես՝ բջիջների քարտուղարների կադրից, վորը մեր



Դիվիզիայում դեռ ևս թույլ է: Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում հետագայում լուրջ ուշադրություն դարձնել կուսակցական ակտիվի վերապատրաստման, նրա շրջանակների լայնացման և նրանց ղեկավար հրահանգներին ծանոթ պահելու խնդրի վրա, վորի համար հանձնարարել Քաղբաժնին հնարավորության սահմաններում թարգմանելու և հրատարակելու գոյություն ունեցող ղեկավար հրահանգները և բարձր մարմինների վորոշումները:

Այս նպատակի համար պետք է լայն չափերով օգտագործել նաև կոմբջիջների քարտուղարների համար հետագայում բացվելիք սեմինարները:

28. Կուսակցական ժողովների ու նրանցում քննվող խնդիրների և զեկուցողների առաջ քաշման խնդիրը խոշոր նշանակություն ունի ներկուսակցական աշխատանքների աշխուժացման, վորակի լավացման, և կուս. անդամների ակտիվության բարձրացման տեսակետից: Այս խնդրի վրա լուրջ ուշադրություն դարձնելու հետ միաժամանակ, անհրաժեշտ է ամենալայն չափով կիրառել հարցերի քննության կամ մշակման կոմիսիոն ձևը:

29. Արձանագրելով վաշտային բջիջների ցանցի լայնացումը և նրանց, վորպես կուսակցական կազմակերպչական հիմնական միավորների, ձևակերպման ու ամրացման փաստը, կոնֆերանսն անհրաժեշտ է համարում, վոր բոլոր վաշտերին և նրանց հավասար միավորներին կից կոմբջիջներ ունենալու համար ընդունած կուրսը նույն թափով շարունակվի և հետագայում:

Միևնույն ժամանակ պետք է ձգտել նրան, վոր նախնական կոմբջիջները քանակապես այնքան ամրա-

պնդվեն, վորպեսզի բջիջի մի վորևէ անդամի բացակայությունը չանդրադառնա նրա աշխատանքների վրա:

30. Անցյալներում շատ եր խոսվում շարքային կուսակցականների քանակի պակասության մասին, այժմ մենք կուսկազմակերպության մեջ ունենք շարքային կուսակցականների մի բավական խոշոր թիվ, վորին լայն չափերով օգտագործելու ու առաջ քաշելու խնդրի վրա պետք ե հետագայում ավելի խոշոր ուշադրություն դարձնել:

Սրա հետ միաժամանակ, կոնֆերանսն անհրաժեշտ ե համարում հատուկ ուշադրություն դարձնել կուս. թեկնածուների մշակման, նրանց աշխատանքների ըստուգման, և թեկնածուական ժամանակը լրիվ չափով օգտագործել նրանց կուսակցականորեն դաստիարակելու և ժամանակին անդամ փոխադրելու համար:

31. Կուսակցական կազմակերպության սոցիալական կազմի և աճման կանոնավորման բնագավառում ունեցած նվաճումների հետ միաժամանակ, մենք ունեցել ենք հետևյալ թերությունները.—

ա) դեպի կուսակցությունը նկատված ձգտման թույլ ուսումնասիրությունը:

բ) 1903 թ. ծնվածների անբավարար ընդգրկումը կուսակցության շարքերը և

գ) կոմբջիջների վոչ բավարար մոտեցումը կուս. շարքերն ընդունվողների խոր ուսումնասիրության, նրանց սոցիալական դրության և կենսագրության վերաբերող հարցերի պարզաբանման գործը:

Կոնֆերանսն անհրաժեշտ ե համարում.—

ա) Լուրջ ուշադրություն դարձնել դեպի կուսակցությունը նկատված ձգտման լայն ուսումնասիրության, նրա ճիշտ օգտագործման խնդրի վրա:

բ) Նկատի ունենալով 1903 թ. ծնվածների լավագույն մասի անբավարար ընդգրկումը կուս. շարքերը, անհրաժեշտ ե լուրջ ուշադրություն դարձնել 1904 թ. ծնվածների նվիրված ու հարազատ մասին նրա ծառայության առաջին տարում կուս. շարքերն ընդունելու խնդրի վրա:

32. Կուսակցական կազմակերպության մասնակցությունը ռազմական շինարարության խնդիրներում ե՛լ ավելի ուժեղացնելու և խորացնելու հետ միաժամանակ, կոնֆերանսն անհրաժեշտ ե գտնում ծրագրված և սիստեմատիկ կերպով առաջ տանել կուս. կազմակերպության ռազմականացման գործը մի կողմից, իսկ մյուս կողմից կուսակցական աշխատանքների ընդհանուր սիստեմի մեջ ուժեղացնել ռազմական պայմաններին յուրահատուկ ելեմենտները:

33. Վորպես հիմնական խնդիր առաջիկա շրջանում, պետք ե մեր առաջ դրվի կուս. ղեկավարության ձևերի կատարելագործման, նրա բովանդակության ու վորակի բարձրացման հարցը:

Կուսակցական աշխատանքների ձևերը և նրանց ղեկավարությունը հետագայում, պետք ե անպայմանորեն համարեցվի ու զուգորդվի, թե՛ կուսակցական և թե՛ անկուսակցական մասսայի որեցոր աճող հասարակական–քաղաքական ակտիվության պահանջներին: Այս նպատակով, պետք ե ուշադրություն դարձնել կուսակցական ղեկավար կադրերի,—մասնավորապես ստորին ղեկավար կադրերի–վորակի լավացման և ընդհանուր քաղպատրաստության բարձրացման վրա:

34. Անկուսակցական մասսայի մեջ տարվելիք աշխատանքների հիմքում պետք է դնել նրա անդադար աճող ակտիվությանը ճիշտ քաղաքական ընթացք տալու և կուսկազմակերպության կողմից, այդ ակտիվությունն ընդգրկելու խնդիրը:

Կուսակցական կազմակերպությունն իր աշխատանքներն այս բնագավառում պետք է դասավորի այնպես, վոր հնարավորություն ունենա մի կողմից ընդգրկելու անկուսակցական վողջ մասսային, իսկ մյուս կողմից կարողանա մոտեցման տարբեր ձևեր ու մեթոդներ ընտրել հանդեպ այդ մասսայի զանազան շերտերը (բանվորներ, բատրակներ, ինտելիգենտներ, չքավոր ու միջակ գյուղացիները և այլն):

Կուս. կազմակերպությունների և առանձին բջիջների հիմնական խնդիրը պետք է լինի այն, վոր նրանք կարողանան իրենց շուրջը համախմբել անկուսակցական ակտիվի այնպիսի կադրեր, վոր հնարավոր լինի դրանց միջոցով լայն կերպով ծավալել կուսքաղլուսաշխատանքներն անկուսակցական լայն մասսաների մեջ: Այս նպատակով պետք է առհասարակ ակտիվը բնորոշելու և նրան մոտենալու ճիշտ մեթոդներ մշակել, մտածել նրա քաղաքական դաստիարակության և հաշվառման մասին:

Բացի այս, պետք է կիրառել անկուսակցականների պատգամավորական ժողովների և ակտիվի խորհրդակցության սիստեմը:

35. Առանձին ուշադրություն պետք է դարձնել անկուս. բանակայինների վաշտային ժողովների սիստեմատիկ գումարման և նրանցում քննվող խնդիրների վրա: Պետք է ձգտել նրան, վոր այդ ժողովներում (բա-



ցի, իհարկե, զորամասի ներքին կյանքին ու շինարարությանը վերաբերող հարցերից) քննվեն նաև ընթացիկ քաղաքական խնդիրներ, վորոնց միջոցով հնարավոր կլինի պարզելու անկուս. մասսայի քաղաքական վերաբերմունքն ու տրամադրությունը հանդեպ կոմկուսակցության ու խորհրդային իշխանության քաղաքականությունը և նրանց վորոշումները:

36. Նկատվում է, վոր բանակայինների բատրակ և չքավոր մասը միջակների և ունեվորների հետ համեմատած իր ակտիվությամբ հետ է մնում:

Յելնելով այդ դրությունից, կոնֆերանսն անհրաժեշտ է համարում, վոր հետագայում կուս. կազմակերպությունը հատուկ ուշադրություն դարձնի չքավորների ակտիվության բարձրացման, նրանց առաջ քաշման վրա Լենինկյունների, հասարակական կազմակերպությունների և այլ աշխատանքներում լայն չափով նրանց մասնակից դարձնելու միջոցով:

37. Անկուսակցական մասսայի մեջ տարվելիք աշխատանքների բոլոր բնագավառների հիմնական առանցքը պետք է կազմի պրոլետարիատի դիկտատուրայի, սոցիալիստական շինարարության գաղափարի և կոմկուսակցության ղեկավար դերի պրոպագանդան:

## Յերկրային շինարարության ասպարեզում

Վերեվ հիշված բոլոր խնդիրներից զատ, վորոնք հավասարապես վերաբերվում են նաև 3-րդ գնդին, կոնֆերանսը յելնելով յերկրային շինարարության առանձնահատուկ պայմաններից, նշում է.—

1. Յերկրային գնդի կուս. կազմակերպության գլխավոր առանձնահատկությունը, վորը բացասականորեն է ազդում նրա աշխատանքների վրա, դա նրա՝ միջհա-

վաքային շրջանում ցրված լինելն է։

Նկատի ունենալով այդ, կուսկոնֆերանսը առաջադրում է՝

ա) Միջհավաքային շրջանում ավելի ուժեղացնել ղեկավարությունը կոմբջիջների վրա․

բ) Կուսղեկավար մարմինների աշնանային վերընտրությունները կատարել ընդհանուր հավաքի վերջը․

գ) Գարնանային վերընտրությունների ժամանակ անցկացնել կուսներկայացուցչական ժողովներ․

դ) Բջիջների քարտուղարների վերընտրություններին մասնակից դարձնել փոփոխական կուսակցականներին։

2․ Քաղբաժնի կենդանի կապը 3-րդ գնդի նկատմամբ ուժեղացել է։ Հետագայում այդ կապը գնդի յեվ շըրջանների, մասնավորապես 3-րդ գումարտակի հետ ուժեղացնելու համար պահանջվում են նյութական միջոցներ, վորի համար խնդիր դնել քաղբաժնի առաջ համապատասխան որգանների ոգնությամբ լուծելու այդ հարցը։

3․ Նշելով յերկրային գնդի տեղական կազմակերպությունների հետ ունեցած կապի հաջողությունները, կոնֆերանսը միաժամանակ ընդգծում է, վոր այդ կապը դեռևս թույլ է յերկրային մասերի և տեղական կուս․, խորհրդային, արհեստակցական և կոմյերիտական ստորին կազմակերպությունների միջև, վորի ուժեղացման վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել։

Կոմյերիտական աշխատանքների ասպարեզում․

Դիվիզիայի 5-րդ կուս․ կոնֆերանսից հետո, ԼԿՅԵՄ կազմակերպությունն աճել ու ամրացել է։

Աջակցության խմբակները կուսակցական և միու-



թենական համագումարների ու կոնֆերանսների վորոշումների հիման վրա, ծավալել են իրենց աշխատանքները։

Այս մի տարվա ընթացքում, Դիվիզիայի ԼԿՅԵՄ կազմակերպությունը զգալի հաջողություններ է ձեռք բերել, նա ավելի յե մոտեցել զորամասի կուսակցական կյանքին, ու շինարարության խնդիրներում ակտիվ մասնակցություն հանդես բերելով։

Համ․ Կ․ (բ) Կ․ ներսում 14-րդ համագումարից հետո, մղվող ոպպոզիցիոն պայքարի ընթացքում, կոմյերիտական կազմակերպությունը կուս․ կազմակերպության հետ միասին կանգնած է յեղել Լենինյան ճիշտ գծի վրա։

Խոշոր չափերով բարելավվել են միութենական աշխատանքների ցույց տված կուսակցական ղեկավարությունը։

Այս բոլորի հետ միասին, 6-րդ կոնֆերանսը նշում է միութենական աշխատանքի թույլ կողմերը և նրանց վերացման համար, առաջադրում է հետևյալ խնդիրները․—

1․ Կոնֆերանսն ընդգծում է, վոր կոմյերիտմիությունն իր մասսայով բավականաչափ դեռ ևս չի յուրացրել իր դերն ու նշանակությունը Կ․ բանակի մարտունակության ամրացման գործում։

Կոմյերիտականներին որինակելի կ․ բանակային դարձնելու խնդիրը դեռ չի լուծվել։ Կարգապահական պատիժների տոկոսը միության անդամների մեջ, դեռ ևս մեծ է, կոմյերիտականները յերբեմն չեն պաշտպանում պետ․ կազմի և մասնավորապես կրտսեր պետկազմի հեղինակությունն ու չեն աջակցում նրա աշխատանքնե-

րին: Լինում են դեպքեր, յերբ կոմյերիտականը դառնում ե կ. բանակային վատառողջ տրամադրությունների արտահայտիչը:

Անհրաժեշտ ե, վոր ԼԿՅԵՄ խմբակներն ավելի մեծ ուշադրություն դարձնեն ռազմական շինարարության հարցերին, պետք ե այնպես անել, վոր կոմյերիտական ամբողջ մասսան պարզ ու լրիվ չափով յուրացնի, թե ինչ դեր ու նշանակություն ունի կոմյերիտմիությունը բանակում, նրա մարտունակության ամրացման գործում, ինչպես նայև այն, թե ինչ նշանակություն ունի կոմյերիտականի, վորպես մարտիկի, որինակելիությունը:

2. Կարգապահության բարձրացման աշխատանքը պետք ե խմբակի մշտական սիստեմատիկ աշխատանքը դառնա. կարգապահության հարցերը կը դրվեն խմբակի ժողովներում, կապելով այն զորամասի կարգապահության դրության հետ: Պետք ե հրաժարվել յերկուստակ պատիժը սիստեմ դարձնելուց (միութենական պատիժներին կոմյերիտականը պետք ե յենթարկվի, յերբ սիստեմատիկ կերպով խախտում ե կարգապահությունը, կամ լուրջ զանցանք ե գործում):

3. Կուսակցական կազմակերպությունների աջակցության խմբակներին պետք ե մասնակից դարձնեն ընդհանուր քաղաքական և կուսակցական կյանքի կարևորագույն հարցերի քննությանը, առանց վորի յերիտասարդության լենինյան դաստիարակության մասին խոսք լինել չի կարող:

Ընդհանուր կուսակցական-քաղաքական հարցերը քննելիս պետք ե կռվել «ուսումնասիրական» թեքման դեմ. կոմյերիտական ժողովներում այդ հարցերը վոչ



միայն պետք ե ուսումնասիրվեն, այլ և քաղաքական քննության առնվեն, այն հաշվով, վոր խմբակը քաղաքական վերաբերմունք մշակի հանդեպ այդ հարցերը:

4. Կոմյերիտականների պահանջների ու տրամադրությունների հաշվառումը յեղել ե թույլ: ԼԿՅԵՄ խմբակները պետք ե պրոպ. կոլլեկտիվների անդամների և ակտիվ կոմյերիտականների միջոցով ուսումնասիրեն և գիտենան յուրաքանչյուր կոմյերիտականի տրամադրությունը և ժամանակին արձագանքեն, քանի վոր այդ հաշվառման բարելավումը միութենական աշխատանքի ղեկավարության և ամբողջ աշխատանքի բարելավման անհրաժեշտ պայմանն ե հանդիսանում:

5. Միությունից կամովին հեռացման դեպքերը—ճիշտ ե շատ քիչ են—բայց և այնպես, լուրջ ուշադրության առարկա պետք ե դարձնել:

Անհրաժեշտ ե, ուշադրություն դարձնել այդ հեռացումների պատճառների ուսումնասիրության խնդրի վրա:

6. Անհրաժեշտ ե ամեն կերպ աջակցել կոմյերիտական ներքին կյանքի ու աշխատանքների աշխուժացմանը: Լուրջ ուշադրություն պետք ե դարձնել ԼԿՅԵՄ խմբակների ժողովների թարմացման վրա, հարմարեցնելով այդ ժողովներն ու նրանցում քննվող հարցերը կոմյերիտականների ակտիվության պահանջների բավարարմանը: Այս տեսակետից հսկայական նշանակություն ունի ԼԿՅԵՄ վաշտային խմբակներին զորամասի ու խմբակի կյանքից վերցրած հարցերի ընտրության մեջ նախաձեռնություն տալը:

7. Մինչև այժմս, ԼԿՅԵՄ խմբակներում աշխատանքի ճիշտ բաշխում չկա. կոմյերիտական շարքային

մասը, երբեմն դժգոհություն է հայտնում այդ առթիվ: Նկատվում է թույլ կոմյերիտականին աշխատանք հանձնարարելու վախը: Անհրաժեշտ է ավելի յեռանդով իրագործել՝ «չկա կոմյերիտական առանց միութենական պարտականության» լոզունգը: Բացի անհատական հանձնարարություններից պետք է գործադրել աշխատանքի կոմիսսիոն մեթոդը:

Շատ թույլ է դրված միության մեջ նոր ընդունվածների աշխատանքի քաշելու գործը: Պարտականությունների բաշխումը կատարում է խմբակը, հաշվի առնելով կոմյերիտականի այս կամ այն ասպարեզում աշխատելու ցանկությունն ու նրա ընդունակությունները:

«Չկա կոմյերիտական առանց միութենական պարտականության» լոզունգը, երբեմն, հասկացվում է, վորպես մեկի մի հասարակական աշխատանք կամ պարտականություն տալը: Այդ լոզունգի տակ պետք է հասկանալ կոմյերիտականների անհատական ընդգրկման, մշտական հանձնարարություններ տալը, իսկ դրա հետ միասին յուրաքանչյուր կոմյերիտականի կողմից միութենական աշխատանքների ակտիվ մասնակցություն ցույց տալը:

8. Ակտիվի առաջ քաշումը ու դաստիարակությունը մեր պայմաններում հատուկ կարևոր նշանակություն է ստանում, և զորամասերում մենք հանձինս նոր համալրման ունենք քաղաքականապես զգալիորեն հասունացած մասսա, վորի մեջ անհրաժեշտ է խորացրած աշխատանք կատարել:

Անհրաժեշտ է ամրացնել ակտիվի առաջ քաշման ու դաստիարակության գործում ունեցած նվաճումները,



բարելավել վաշտային կազմակերպիչների խորհրդակ-
ցությունները, նրանցում քննության դնելով միութենա-
կան աշխատանքի առանձին գործնական հարցեր: Պետք
է բարելավել պրոպ. կոլեկտիվի աշխատաքը և անհրա-
ժեշտ դեպքում խոշոր զորամասերում անցնել 2 պրոպ.
կոլեկտիվի կազմակերպմանը:

Բացի դրանից, անհրաժեշտ է կազմակերպել վաշ-
տային կազմակերպիչների սեմինարներ և ակտիվի մի
մասը անցկացնել այդ սեմինարների միջոցով:

9. Անկուսակցականների մեջ տարվող աշխատան-
քին պետք է մեծ ուշադրություն նվիրել: Կոմյերիտա-
կան կազմակերպությունը կուսակցության օգնականն
է անկուսակցական մասսայի ընդգրկման և դաստիա-
րակման գործում:

Անկուսակցականների մեջ տարվող ամբողջ աշխա-
տանքը ԼԿՑԵՄ խմբակները պետք է կատարեն կուս.
կազմակերպության անմիջական ղեկավարությամբ: Ան-
հրաժեշտ է այնպես անել, վոր ավելի մեծ թվով անկու-
սակցականներ մասնակցեն այդ ժողովներին, դրա հա-
մար հարկավոր է համապատասխան ընտրություն կա-
տարել դոնրաց ժողովներում քնվող հարցերի մեջ,
հաշվի առնելով նաև անկուսակցականների պահանջ-
ները:

10. Անհրաժեշտ է, ինչ գնով ուզում է լինի, բար-
ձրացնել կոմյերիտականների ակտիվ մասնակցությունն
արտադպրոցական աշխատանքներում և զանազան ին-
քնագործունեյության ու հասարակական կազմակեր-
պություններում: Պետք է լոզունգ ունենալ «չկա կոմ-
յերիտական արտադպրոցական աշխատանքից դուրս»:

11. ԼԿՑԵՄ խմբակների ժողովներում սիստեմատիկ

կերպով պետք է դնել արտադպրոցական աշխատանքի, ինքնագործունեության կազմակերպությունների հարցեր (զեկուցումներ լենինյան խորհուրդների, ակումբի վարչության, ինքնագործունեության կազմակերպությունների բյուրոների և այլն):

12. Կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում ԼԿՑԵՄ խմբակների բյուրոները ստեղծել, թե՛ գնդերի դպրոցներին և թե՛ առանձին վաշտերին կից, (կապի ու սապյորական վաշտեր), որտեղ ԼԿՑԵՄ խմբակները բավական ուժեղ են իրենց թվական կազմով:

13. Կազմակերպության մեջ ղեկավարող աշխատանքներին մեծ թվով կոմյերիտականների մասնակից դարձնելու համար պետք է ԼԿՑԵՄ գնդերի բյուրոներին կից ստեղծել մշտական կազմ. և ագիտ. կոմիսսիաներ, կուս. կազմակերպություններում ունեցած կոմիսսիաների օրինակով, և պետք է շարքային կոմյերիտականներին քաշել այդ կոմիսսիաների մեջ:

14. Միության աճումը կանոնավորելու խնդրի վրա ԼԿՑԵՄ և կուս. կազմակերպությունները պետք է կենտրոնացնեն իրենց ուշադրությունը: Բանվոր և բատրակ յերիտասարդության լրիվ ընդգրկման խնդիրը դեռ ևս լուծված չէ մինչև իսկ 1903 թ. համալրման նրկատմամբ:

Ձգձգելով ուսումնասիրության շրջանը, անհրաժեշտ է նորակոչիկներին միության շարքերը գրավել, որքան հնարավոր է շուտ: Աճման կանոնավորման խնդրում անցյալում տեղի ունեցած աննորմալ յերևույթները, պետք է վերացնել: Պետք է հրաժարվել միության շարքերը մտնող բանվորա-գյուղացիական յերիտասարդության քաղ. պատրաստության վերաբեր-



յալ առաջադրվող խիստ պահանջներից, պետք է չձըգձգել գործերի քննությունը, թե խմբակներում և թե կոմիտեներում:

15. Կոմյերիտական կազմակերպությունները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն վատ տրամադրությունների վրա, որ որոշ կարմիր բանակայիններ, չմբռնելով մեր կուսակցության ու իշխանության ճիշտ քաղաքականությունն ազգային խնդրի ասպարեզում, արտահայտում են քաղաքի ու գյուղի մանր բուրժուական և ունևոր տարրերի տրամադրությունները: Մեր կուսակցության քաղաքականության պարզաբանումը ազգային խնդրի նկատմամբ ու ինտերնացիոնալիստական դաստիարակության մոմենտը ճիշտ և կոնկրետ տեղ ու կոնկրետ արտահայտություն պետք է գտնի մեր բոլոր աշխատանքների մեջ:

16. Միության առաջ դրված բոլոր խնդիրները կարող են լրիվ իրագործվել միայն կուսակցության ճիշտ ղեկավարության տակ: Կոմյերիտ. միության նկատմամբ կուսակցական ղեկավարության ապահովումը ԼԿՑԵՄ ներկա դրությամբ, ամբողջ կուս. կազմակերպության կարևորագույն խնդիրը պետք է լինի:

Կուս. ղեկավարությունը պետք է դրված լինի այնպես, որ չսահմանափակվի կոմյերիտականների նախաձեռնությունն ու ինքնագործունեությունը:

Անհրաժեշտ է ավելի վճռականորեն շարունակել կուսակցական ղեկավարության վերցրած ուղիղ գիծը և հետագայում ավելի խորացնել այն:

## ԱԳԻՏ. ՊՐՈՊ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ.

1. Ագիտ. պրոպ. աշխատանքի ասպարեզում, կոնֆերանսը նշում է կուսակցական գծի ուժեղացումն

ագիտպրոպ. աշխատանքի բոլոր ձևերում, աշխատանքի մեթոդական կատարելագործումը և նրա դաստիարակչական ազդեցության ուժեղացումը:

Դրա հետ միասին, կոնֆերանսը նշում է արտադպրոցական աշխատանքի ընդհանուր թուլությունը, վորի վերաբերմամբ ամենից քիչ են հայտնաբերվել այդ նվաճումները:

Առաջիկա շրջանում, ամբողջ ագիտ. պրոպ. աշխատանքի ընդհանուր ուժեղացումը պետք է ընթանա կուսակցական ղեկավարության ձևերի ու մեթոդների, աշխատողների նախնական պատրաստման, նրանց հետագա կատարելագործման, և վոր ամենագլխավորն է, արտադպրոցական աշխատանքի բազմակողմանի ուժեղացման ուղիյով:

### կուս. լուսավորության արդյունքներն ու խնդիրները.

2. Կոնֆերանսը նշում է կուսլուսավորության գոյություն ունեցող սիստեմի ընդհանուր ամրացումն ու կենսունակությունը և նրա հաջողությունները կուսակցական մասսայի գաղափարական-քաղաքական մակարդակի ու բոլշևիկյան դաստիարակության բարձրացման գործում:

Դրա հետ միասին ամենաէական թերությունների թվին պետք է դասել հետևյալը.—

ա) Կուս. լուսավորության ուշ ծավալումը, պարապմունքների օբյեկտիվ ու սուբյեկտիվ խանգարումները, վորի հետևանքով անհնար յեղավ վորոշված ժամկետին ավարտել ուսումնական տարին և հարկ յեղավ ավարտումը փոխանցել ամենաաննպաստ շրջանը—ճամբարային շրջանը:

բ) Ունկնդիրների բաշխումը վոչ թե ըստ գիտելիքների մակարդակի, այլ յերկրային սկզբունքով:



գ) Միութենական դպրոցների ունկնդիրների ակտիվության վոչ բավարար օգտագործումը և ցուցադրական միջոցների ու գրականության թույլ համաձայնեցումը, ունկնդիրների վոչ բավարար նախնական պատրաստությունը և մասամբ գրադարանի մասնակցության լրիվ բացակայությունը կուսլուսավորության գործում:

դ) Ծրագրում Հայաստանի ու Անդրկովկասի հեղափոխական շարժման, Հայաստանի Կոմկուսակցության պատմության հարցերի բացակայությունը, մեզանում այդ հարցերի վերաբերյալ մշակված նյութեր չլինելու հետևանքով:

ե) Մի շարք սխալներ գործելը միութենական դպրոցների մի քանի ղեկավարների կողմից, ինչպիսին են՝ բովանդակության խեղաթյուրումը, սխալ փաստերի հաղորդումը, հարցերն ուղիղ դնելուց խուսափելը և այլն:

զ) Մեծ մասամբ այդ թերություններից առաջ են գալիս կուս. դպրոցների հիմնական թերությունը այն է՝ ի վնաս կուսլուսավորության դաստիարակչական խնդիրների ձևական ուսումնական թեքման վերացման դանդաղությունը:

է) Կուս. կազմակերպության՝ դպրոցների ընդհանուր աշխատանքներին (գլխավորապես, կազմակերպչական հարցերի մասին) ցույց տված մշտական, առօրյա ղեկավարության ուժեղացման հետ միասին չափազանց թույլ է յեղել այդ ղեկավարությունը, մանավանդ ստորին կուս. կազմակերպություններում, աշխատանքների բովանդակության ու դաստիարակչական հարցերում:

3. Կուս. դպրոցներում ընդհանուր կուսակցական հարցերի մշակումը (կուսակցության 14-րդ համագումարը) անցել է բավարար: Այդ հարցում դպրոցները մեծ դեր խաղացին կուսակցականների գաղափարական գործում:

4. Կուս. լուսավորությունը յերկրային զորամասերում, ունենալով գիվղիայի ընդհանուր հաջողությունները իր բնակազմային մասերում, առաջվա պես թույլ է փոփոխական կազմի մեջ: Այդ թուլացումը բացատրվում է վարժակայաններում տարվող աշխատանքի առանձնահատուկ պայմաններով, ղեկավարների, գրականության բացակայության, կուսակցականների սակավաթիվ լինելով, և ինքնազարգացման աշխատանքի հմտության պակասությամբ:

5. Առաջիկա շրջանի խնդիրը պետք է լինի՝ ունեցած նվաճումների զարգացումն ու հիշատակված թերությունների հաղթահարումը և վերացումը:

Հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացնել.—

ա) Կուսկազմակերպության կողմից կուսլուսավորությանը մշտական և առորյա ղեկավարություն ցույց տալու վրա, թե բովանդակության և թե դասախարակչական աշխատանքի հարցերում ու կուս. բյուրոյի կողմից ավելի ուժեղ ղեկավարություն ցույց տալու վրա.

բ) Դպրոցների ունկնդիրների նախնական պատրաստության վրա.

գ) Մոտիկ ապագայում պրոպագանդիստների բռնակազմ պատրաստելու վրա.

դ) Ցերկրային զորամասերում՝ հաղթահարելու աշխատանքի առանձնահատուկ պայմանները—վաշտային



կուս. լուսավորության խմբակների աշխատանքների մեջ ավելի պարզություն մտցնելու և կուսակցական փոփոխականների ինքնազարգացման աշխատանքների հարցում ճշտություն մտցնելու վրա: Մասնավորապես, հայոց լեզվով գրականության հարցը պետք է լուծվի մոտիկ ապագայում, վորի համար պետք է միջոցներ փնտրել՝ զորամասերն անհրաժեշտ գրականությամբ բավարարելու նպատակով:

Հրամ. կազմի քաղ. պատրաստության ասպարեզում.

6. Կոնֆերանսը № 1515 հրամանով կատարած քաղ. գիտելիքների վերջին ստուգման արդյունքների հիման վրա նշում է հրամկազմի քաղաքական ու հանրակրթական թույլ պատրաստականությունը: Դրա գլխավոր պատճառներն են՝

ա) Խմբակների և անհատապես պարապող հրամանատարների աշխատանքների վերաբերմամբ սիստեմատիկ ղեկավարության բացակայությունը—ինքնազարգացման աշխատանքները ղեկավարող հանձնաժողովների կողմից:

բ) Կուս. կազմակերպության՝ ինքնազարգացման հանձնաժողովների աշխատանքների վրա ունեցած միանգամայն անբավարար ուշադրությունը:

գ) Հրամ. կազմի կողմից պարապմունքներին ժամանակին ներկա չլինելը:

դ) Բնակարանային վատ պայմանները և զորամասերում ինքնազարգացման համար նպաստավոր պայմանների ու հարմարությունների բացակայությունը և

ե) Ինքնազարգացման հանձնաժողովների աշխատանքի հաշվառման բացակայությունը:

7. Հրամ. կազմի գիտելիքների մակարդակը, նրա

քաղաքական ու հանրակրթական պատրաստության հետագա բարձրացումը հնարավոր է միայն այն պայմանով, յեթե հնարավորություններ ստեղծվեն հրամ. կազմին քաղպատրաստության համար (ճիշտ ժամանակ վորոշելու և զորամասերում շենքեր հատկացնելու տեսակետից) և սիստեմատիկ կերպով ղեկավարություն ցույց տրվի, թե պարապող հրամկազմին՝ ինքնազարգացման հանձնաժողովների կողմից և թե այդ հանձնաժողովների աշխատանքներին՝ կուս. կազմակերպության կողմից:

## Քաղ. պարապմունքների ասպարիզում.

8. Կոնֆերանսը նշում է զգալի բարելավումներ ու նվաճումներ քաղպարապմունքների ասպարեզում: Հիմնական նվաճումների թվին պետք է դասել.—

ա) Կուսակցականների ու հրամանատարների ավելացումը խմբակավարների կազմում և խմբակավարների կայուն բնակազմ ստեղծելու գործում ունեցած վորոշակի հաջողությունները:

բ) Կոմպլեկսը, քաղ. պարապմունքների կազմակերպչական ձևերի (խմբակա-վաշտային մասշտաբով) վերջնական ամրացումը և դպրոցական պարապմունքները զգալիորեն կատարելագործված մեթոդներով տանելը:

գ) Քաղպարապմունքների նյութական կողմի (դրպրոցական կահավորման) բավարար դրությունը:

դ) Վորպես այդ պայմաններից բղխող հետևանք՝ կարմիր բանակայինների քաղաքական ու կուլտուրական աճումն ու քաղպարապմունքների դաստիարակչական խնդիրների իրականացումը:



Դրա հետ միասին, կոնֆերանսն արձանագրում է հետևյալ հիմնական թերությունները՝

ա) Կուսբյուրոյի կողմից քաղպարապմունքներին ցույց տրվող ղեկավարության ընդհանուր ուժեղացման հետ միասին, ստորին կուս. կազմակերպությունների թույլ ղեկավարությունը, կուսակցականների ու կոմյերիտականների վոչ բավարար օգտագործումը քաղպարապմունքների ժամանակ և կուսակցության թույլ պրոպագանդան:

բ) Խմբակավարների անբավարար քաղաքական ու հանրակրթական պատրաստությունը, քաղղեկի՝ իր դերին,—վորպես խմբակավար հրահանգչի դերին—դանդաղ մոտեցումը:

գ) Կուսակցական գծի վոչ բավարար պարզությունը կուսակցության քաղաքականության բացատրության մեջ, վոչ բավարար ուշադրություն միջազգային հեղափոխական շարժման կոնկրետ որինակներով մշակման (ինտերնացիոնալիզացիա) և կոմպլեկսում հանրակրթական առարկաների թույլ մշակումը (մանավանդ, անգրագետների խմբակներում):

դ) Հայոց լեզվով ձեռնարկների ու գրականության պակասությունը թե կարմիր բանակայինների և թե խմբակավարների համար:

ե) Հայաստանի ու Անդրկովկասի հեղափոխական շարժման պատմության ծրագրին վերաբերող մեթոդական գրականության և նյութերի պակասությունը:

9. Առաջիկա շրջանում հիմնական խնդիր է՝ ամրացնել ձեռք բերած հաջողությունները, շարունակել կատարելագործել քաղպարապմունքների հրահանգչական—մեթոդական կողմը և դրա հետ միասին օգտագործել

քաղ. լուս. աշխատանոցները, ստորին կուս. կազմակերպություններին ավելի մոտեցնել քաղպարապմունքների ղեկավարության և կուսակցական պրոպագանդի գործին ու ավելի մեծ ուշադրություն դարձնել կ. բանակայինների ինտերնացիոնալիզացիայի խնդրի վրա:

Կոնֆերանսն առանձնապես ընդգծում է քաղպարապմունքների նշանակությունը չքավոր ու բատրակ կ. բանակայինների ակտիվացման գործում և կուս. կազմակերպության հիմնական խնդիրներից մեկն է համարում այդ մոմենտի ճիշտ ու բազմակողմանի օգտագործումը:

Արտադպրոցական աշխատանքների հերթական խնդիրները.

10. Կոնֆերանսը նշում է նախընթաց ժամանակաշրջանում կատարած արտադպրոցական աշխատանքների ընդհանուր թուլությունը կ. բանակայինների հարաճուն ակտիվության լիովին ընդգրկման գործում, թուլություն, որը հիմնականում բխում է հետևյալ պատճառներից.—

ա) Կուս. ղեկավարության ու կուսակցության պրոպագանդի թուլությունը արտադպրոցական աշխատանքների ասպարեզում:

բ) Արտադպրոցական աշխատանքի սկզբունքային հիմունքների խեղաթյուրումը (դպրոցական մոտեցում, վարչականացում, կ. բանակայինների պահանջը, նրա ինքնագործունեությունն ու ակտիվությունն հաշվի չառնելը):

գ) Արտադպրոցական աշխատողների թույլ պատրաստությունը աշխատողների բնակազմերի անբավարար ընտրության հետևանքով:



դ) Արտադպրոցական աշխատանքների հրահանգման ու վերահսկողության անկանոնությունը:

ե) Քաղլուսաշխատանոցների վոչ լրիվ օգտագործումը:

զ) Արտադպրոցական աշխատանքի վերաբերյալ ձեռնարկների բացակայությունը:

Գրադարանային աշխատանքը նույնպես թույլ է. Չնայած գրադարանների համալրման գործում ունեցած հաջողության, մանավանդ հայկական լեզվով լույս տեսած գրականության (վորն առայժմ, դեռևս բավական քանակությամբ չէ) գրադարանները վորակապես հետ են մնում կ. բանակայինների ակտիվացող պահանջներից:

Անտեսված ու թույլ է դրված ընթերցողների պահանջների ուսումնասիրությունն ու ընթերցանության ղեկավարությունը: Գրադարանները համարյա չեն սպասավորում քաղ. պարապմունքները, կուսլուսավորությունը և հրամկազմի ինքնազարգացման գործը:

11. Կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում ուժեղացնել արտադպրոցական աշխատանքների վրա կուսակցական ղեկավարությունը, բարձրացնել այդ աշխատանքների գաղափարական բովանդակությունը, ուժեղացնել պատասխանատվությունն ու վերածել այդ աշխատանքն ամբողջ դիվիզիայի հասարակության գործի: Վորպես հիմնական խնդիր կուս. կազմակերպությունների առաջ ծառանում է վճռական պայքարը՝ արտադպրոցական աշխատանքների շաբլոնի, ավելորդ ռեգլամենտացիայի, արտադպրոցական աշխատանքներին մասնակցող բանակայիններին նախաձեռնությունից զուրկ կամակատար դարձնելու երևույթների դեմ: Անհրաժեշտ է, վոր կ.

անկուսակցական բանակային մասսան ավելի լիովին արտահայտի իր պահանջները արտադպրոցական աշխատանքների վերաբերյալ։

Անհրաժեշտ է կիրառել անցյալում արդեն գործադրված աշխատանքի այն մեթոդներն ու ձևերը, վորոնք յուրահատուկ են ազգային դիվիզիաների համար։

Առաջիկա ժամանակաշրջանում արտադպրոցական աշխատանքների վերաբերյալ հիմնական հրահանգներ պետք է ծառայեն ՊՌԽԹ–ի № 47 (14 սեպտեմբերի 26 թ.) և № 35/10 (31 հուլիսի 26 թ.) հրահանգներն ու ԿԿԲԲՎ № 25/13 (15 սեպտեմբերի 26 թ.) հրահանգը։

## ՊԱՁԸ–ՈՍՈ

12. Կոնֆերանսը նշում է ռազմական պրոպագանդի թուլությունը նամանավանդ, քաղաքացիական կազմակերպություններում։

Կարևոր թերություն կոնֆերանսը համարում է՝

ա) Յերկրի պաշտպանության շուրջը մշակված հասարակական կարծիքի բացակայությունը, չափազանց թույլ մասնակցությունը քաղաքացիական կազմակերպությունների կողմից և պաշտոնական–վարժական թեքումը դիվիզիայի կազմակերպություններում այդ ասպարեզում։

բ) Պատշաճ ուշադրության բացակայությունը դեպի այդ աշխատանքը։

գ) Մասսայական աշխատանքի ծավալման՝ պահեստի պետկազմին այդ աշխատանքների մեջ քաշելու թուլությունը։

Նշելով ՊԱՁ–ը (Պաշտպանության Աջակցող Ընկերության) աշխատանքների աշխուժացումը, վերջին ժամանակներս ռազմա–գիտական ընկերության ՊԱՁ–ը վերածման առթիվ, կոնֆերանսը հետագա աշխատանքների համար անհրաժեշտ է համարում.—

ա) ՊԱՁԸ (Պաշտպանության Աջակցող Ընկերության) խնդիրների ու նպատակների շուրջը մշակել հասարակական կարծիք։

բ) 100 տոկոսով օգտագործել Ավիաքիմի հետ միացումը՝ ամրացնելու համար ՊԱՁԸ–ի կազմակերպությունը, առաջին հերթին քաղաքացիական կազմակերպությունների մեջ։

գ) Լիովին վերացնել պաշտոնական–վարժական թեքումը ՊԱՁԸ բանակի կազմակերպություններում։

դ) Ուժեղացնել ղեկավարությունը, թե կուսակցական և թե ՊԱՁԸ–ի գծով։

Զինթղթակցական աշխատանքի ասպարեզում.

13. Կոնֆերանսը նշելով այդ աշխատանքի ընդհանուր հաջողությունները (վաշտային պատի թերթերի ամրացումը, խմբագրական կոլլեգիաների հաջող վերընտրությունները, զինթղթակիցների թվի աճումը), միանգամայն անբավարար է համարում այս աշխատանքի՝ կուս. կազմակերպության կողմից ցույց տված ղեկավարությունը, վորպիսի հանգամանքից ել բղխում են, գլխավորապես, մի շարք թերություններ, վոր ժամանակին նկատված են յեղել, բանակի զինթղթակիցների 3–րդ խորհրդակցության կողմից։

Առաջիկա ժամանակաշրջանում հիմնական խնդիր պետք է լինի այդ խորհրդակցության վորոշումների իրագործումը, ըստ վորում ամենակարևորն է ուժեղացնել կուս. ղեկավարությունը, զինթղթակցական աշխատանքների վրա։

14. Քաղաքացիական մամուլի ռազմականացման գործում ձեռք բերած եյական հաջողությունները դեմ են առնում թերթերի ռազմական բաժինների աշխատակիցների վոչ բավարար բնակազմի:

Այդ բաժիններն ուժեղացնելու համար անհրաժեշտ ե այն բոլոր հրամանատարների ու քաղ. աշխատողների մասնակցությունը, վորոնք անմիջորեն չփվում են բնակչության մեջ տարվող ռազմական պրոպագանդի հարցերին և մանավանդ, անհրաժեշտ ե յերկրային զորամասերի զինթղթակիցների, ինչպես նաև պահեստի հրամքաղկազմի մասնակցությունը:

15. Նշելով «Կարմիր Զինվոր» թերթի զգալի հաջողությունները, կ. բանակայինների սպասավորման և թերթը գյուղում տարածելու գործում, կոնֆերանսը անհրաժեշտ ե գտնում դեպի ռուսական կ. բանակայինն ունեցած հիմնական ուղղության հետ միասին, շարունակել ուղղությունը դեպի գյուղն ու բնակչության մեջ ռազմական պրոպագանդ մղելը:

Կոնֆերանսն անհրաժեշտ ե համարում, հետագայում շարունակել «Կարմիր Զինվոր»-ի գրադարանի հրատարակությունը, վորն անցյալում զգալի հաջողություններ և ունեցել:

## ԲԱՆԱՁԵՎ.

Դիվկուսհանձնաժողովի գործունեյության առթիվ.

Հայկական Հրաձիգ Դիվիզիայի կուսակցական կազմակերպության 6-րդ կոնֆերանսը լսելով ընկ. Ն. Գուրգենյանի զեկուցումը դիվիզիայի կուսհանձնաժողովի մեկ տարվա գործունեյության մասին, գտնում ե



կուսհանձնաժողովի գիծը ճիշտ, կատարած աշխատանքները բավարար:

Ընթացիկ ժամանակաշրջանի բնորոշ կողմերն են՝

1. Կոմյերիտական և անկուսակցական մասսաների հասարակական-քաղաքական ակտիվության անընդհատ աճումը.

2. Կուսակցական կազմակերպության քաղաքական և վորակական աճումն ու բարձրացումն:

3. 14-րդ համագումարից հետո, կուսակցության ներսում ձևավորված նոր ոպոզիցիոն բլոկի դեմ մղվող պայքարի ընթացքում, մեր դիվիզիայի կուսակցական կազմակերպությունը հանդես յեկավ, վորպես մի ամբողջ միավոր և վողջ կուսակցության հետ միասին դատապարտեց ոպոզիցիայի հակալենինյան, տրոցկիստական—սոց.-դեմոկրատական թեքումները, վորի ընթացքում, նա մշակեց իր ճիշտ քաղաքական վերաբերմունքը հանդեպ մեր կուսակցության հիմնական գիծը սոցիալիզմի շինարարության խնդրում:

4. Նկատվում ե, վոր մի շարք ընկերներ կուսակցության գծի ու քաղաքականության հիմնական խնդիրներում յերբեմն հայտնաբերում են սխալ ըմբռնում և նրանց, անգիտակցորեն, տալիս են ոպոզիցիոն ձևի լուսաբանում, վորը հետևանք ե այն բանի, վոր նրանք անբավարար տեղեկություն և ծանոթություն ունեն կուսակցության ղեկավար մարմինների ունեցած վորոշումների մասին:

5. Մեր Դիվիզիայի շարքերը մտած 1904 թ. ծնվածներն իրենց հետ բերած ունեն նոր տրամադրություններ, վորոնք զարկ են տալու գյուղացիական տրամադրությունների աճման:

կոնֆերանսը, հիշատակելով վերև հիշված հիմնական մոմենտները, անհրաժեշտ է գտնում, վոր կուսակցական հանձնաժողովը անշեղորեն շարունակի հիվանդագին յերևույթների հայտնաբերման և ուսումնասիրության գործում իր ունեցած գիծը և վճռական պայքար մղի կուսակցության ծրագրի, կանոնադրության և կուսակցության բարձր օրգանների վորոշումների բոլոր տեսակի խախտումների դեմ:

Աչալուրջ հետևելով մեր կուսակցության շարքերի լենինյան միասնության պահպանմանը, կուսհանձնաժողովը միաժամանակ պետք է լայն աջակցություն ցույց տա Դիվիզիայի քաղաքական բաժնին՝ կուսակցական կազմակերպության աշխատանքների ղեկավարության գործում:

6. Գոյություն ունեցող գյուղացիական տրամադրությունների հաշվառումը և նրանց առաջացման պատճառների ուսումնասիրությունը—նամանավանդ յերկրային գնդի կուս. կազմակերպության նկատմամբ, վորը շրջաններում ցրված լինելու հետևանքով այս կամ այն կերպ յենթակա յե մանր բուրժուական, գյուղացիական տրամադրությունների ազդեցության—ունի խոշոր նշանակություն, վորի դեմ մեր կուսակցական կազմակերպությունը պետք է իր աշխատանքների ընթացքում կռիվ մղի:

7. Ընթացիկ տարում նկատվել են կուսակցության շարքերից ինքնակամ դուրս գալու մի քանի դեպքեր: Անհրաժեշտ է հետագայում խիստ լրջությամբ ուսումնասիրել նման դեպքերի պատճառները և վորոշումներ կայացնելիս միշտ նկատի ունենալ և հաշվի առնել կոնկրետ դեպքերը:



8. Կուս. կազմակերպության անդամների միմյանց մոտեցման (սպայկայի) ուժեղացման հետ միաժամանակ, մեր առաջ ծառանում է կուսընկերների կենցաղի, կուլտուրական մակարդակի բարձրացման և բյուրոկրատական մնացորդների լիակատար վերացման համար պայքար մղելու խնդիրը:

Այս խնդիրների լուծմանը չպետք է տալ կամպանիոն բնույթ, այլ պետք է կապել մեր ընդհանուր տեսողական աշխատանքների հետ, նման յերևույթների դեմ պետք է կռվել մեր ընթացիկ, գործնական աշխատանքների պրոցեսում:

9. Կուսակցական կազմակերպության աճման և սոցիալական կազմի կարգավորման ասպարեզում ունեցած հաջողությունների հետ միաժամանակ, կոնֆերանսը նշում է հետևյալ թերությունները.—

ա) Մերժվածների բարձր տոկոսը հետևանք է նրան, վոր բջիջները հաճախ լուրջ և մտածված վերաբերմունք չեն ունեցել դեպի ընդունելությունները:

բ) Կուսշարքերն ընդունվողների ուսումնասիրությունը և նրանց սոցիալական դրության բնորոշումը բջիջների կողմից յերբեմն կատարվել է, վոչ թե նախքան դիմումն ստանալը, այլ նրանից հետո:

Տեղական կուսկազմակերպությունների անուշադիր վերաբերմունքը հանդեպ մեր բջիջների հարցումները և յերբեմն ել, վոչ ճիշտ, հակասական, տեղեկություններ տալը:

գ) Յերաշխավորող ընկերներից վոմանք չեն ունեցել լուրջ մոտեցում և իրենց պատասխանատու չեն զգացել կուսակցության առաջ:

դ) Ընդունելությունների ընթացքում գործադրվող

ձևական կողմերի վրա լրիվ պահպանումը և այն փաստը, որ շատ անգամ դիմում տվողների կենսագրությունները հաստատում են նրանց շատ քիչ ծանոթ կուսակցականներ:

10. Այս թերությունների վերացման համար, կոնֆերանսն անհրաժեշտ է համարում հետագայում գործադրել հետևյալ միջոցները.—

ա) Էլ ավելի բարձրացնել կոմբջիջների պատասխանատվությունը կուսշարքերը նոր անդամներ ընդունելու խնդրում: Ձգտել նրան, որ բջիջներն ավելի լուրջ, մտածված և հոգատար վերաբերմունք ունենան այս ասպարեզում:

բ) Կուսակցության շարքերն անցնել ցանկացողների ուսումնասիրությունը սկսել, նախքան նրանց դիմումներ տալը, կամ ընդունվելը, որի համար կանոնավորել և լայն չափերով գործադրել անհատական ու խմբակային կցումների սիստեմը և կցված ընկերներին պատասխանատու դարձնել ճիշտ տեղեկություններ տալու իրենց ամրացվածի մասին:

գ) Հ. Կ. (Բ) Կ. Կենտկոմի միջոցով հրահանգել տեղական կուսակցական կազմակերպություններին, որպեսզի վերջիններս ժամանակին և ճիշտ տեղեկություններ տան իրենց շրջանից բանակ յեկող այն բանակայինների մասին, որոնք ցանկանում են անցնել կուսակցության շարքերը, մեր բջիջների կողմից հարցումներ անելու դեպքում:

դ) Ընդունվողներից պահանջվող ձևականությունների կատարմանը չմոտենալ զուտ ձևականորեն, այլ կատարել այն լրիվ չափով, լինելով կուսակցության



աճման ու սոցիալական կազմի կանոնավորման տեսակետից:

ե) Կուսակցական կազմակերպության աճման ընթացքում հաշվի առնել և տարբեր մոտեցում ունենալ դեպի կուսակցություն ձգտում ունեցող սոցիալական զանազան շերտերը, այն հաշվով, որ ավելի բարձրացվի բանվորների, բատրակների և չքավորների տոկոսը կուսկազմակերպության մեջ:

զ) Նկատի ունենալով այն հանգամանքը, որ կուսկազմակերպությունը գտնվում է Կարմիր բանակում ու աշխատում է նրա պայմաններում և այն, որ նրանից պահանջվում է լինել ռազմականացված, ընդունելությունների ընթացքում լուրջ ուշադրություն դարձնել նաև ընդունվողի վերաբերմունքի վրա դեպի ռազմական գործը:

11. Նկատի ունենալով դեպի կուսակցությունը նըկատված խոշոր ձգտումը, անհրաժեշտ է հետագայում լուրջ ուշադրություն դարձնել այդ ձգտման ուսումնասիրության վրա և միաժամանակ պարզել ու ավելի խորացնել մեր կողմից գործադրվող աշխատանքների այն ձևերը, որոնք անկուսակցական մասսայի մեջ կուսակցության շարքերն անցնելու ցանկություն և ձգտում են առաջացնում: Ավելի լուրջ ուշադրության և ուսումնասիրության առարկա պետք է դարձնել ծառայողական կազմի կողմից դեպի կուսակցությունը նկատվող ձգտումը:

12. Կոնֆերանսն արձանագրում է այն փաստը, որ 1903 թ. ծնվածների ընդունելությունը համեմատաբար դանդաղ է առաջ գնացել (1903 թ. ծնված կ. բանակայիններից մինչև այժմ կուսշարքերն են ընդունվել 12

հոգի): Անհրաժեշտ է այս բացը վերացնել, միաժամանակ ձգտել, որ նույն դրությունը չկրկնվի 1904 թ. ծնվածների նկատմամբ:

13. Ընդունելությունների ընթացքում նկատված մասնակի թերություններից մեկն էլ այն է, որ բջիջները կուսշարքերն ընդունվող կ. բանակայիններին խիստ «քննության» ենթարկելու տեսակետից են մոտեցել: Տրվել են պատահական, չմշակված և խրթին հարցեր, որոնք չեն պարզել ընդունվողի սոցիալական դրությունը, քաղաքական պատրաստականությունը, նրա նվիրվածությունը և օգտակարությունը բանակում, գյուղում և այլն, այլ անտեղի դժվարացրել են շարքային բանակայինների կուսակցության շարքերն անցնելու գործը:

Անհրաժեշտ է ձգտել նրան, որ բջիջները հրաժարվեն «քննության» սիստեմից, նկատի ունենալով ընդունվողի սոցիալական դրությունը, նրա նվիրվածությունը կուսակցությանն ու խորհրդային իշխանությանը, հարազատ լինելը, քաղաքական պատրաստությունը և այլն:

14. Թեկնածուներին անդամ փոխադրելու և առհասարակ կուսանդամների ու թեկնածուների քանակական փոխհարաբերության կանոնավորման ասպարեզում խոշոր նվաճումներ ենք ունեցել (անցյալ տարի թեկնածուները կազմում էին 57 տոկոսը, իսկ անդամները 43 տոկոսը, մինչդեռ այժմս թեկնածուները կազմում են 48 տոկոս, իսկ անդամները՝ 52):

Արձանագրելով այս հաջողությունը, կոնֆերանսը միաժամանակ չեշտում է, որ թեկնածուների օգտագործման, նրանց առաջ քաշման ու մշակման խնդրի



վրա, անբավարար ուշադրություն է դարձված յեղել: Թեկնածուներին կուսակցական դաստիարակություն տալու, նրանց իր ժամանակին անդամ փոխադրելու և կազմակերպության անդամների ու թեկնածուների քանակական փոխհարաբերությունը կանոնավոր պահելու համար, կոնֆերանսն անհրաժեշտ է համարում էլ ավելի ուժեղացնել աշխատանքը թեկնածուների մեջ, տալ նրանց պարտականություններ, քաշել նրանց ակտիվ աշխատանքի կուսակցական կյանքում, հետևել, թե որքան նրանք ճշտությամբ ու իր ժամանակին կատարում են իրենց առանձնած կուսակցական պարտականությունները:

Անհրաժեշտ է միաժամանակ պարզել հին, արդեն ճահճացած թեկնածուների քանակը և վերջնականապես դնել այդպիսիների կամ անդամ փոխադրելու կամ կուսակցության շարքերից հեռացնելու խնդիրը:

15. Կոնֆերանսը մատնանշելով մեր կուսկազմակերպության ընդհանրապես առողջ լինելու փաստը, միևնույն ժամանակ ընդգծում է, որ դեռևս գոյություն ունեն որոշ հիվանդագին երևույթներ, որոնք, սակայն, մասսայական և մշտական բնույթ չկրելով հանդերձ, սկսում են լուրջ հետևանքներ ունենալ: Հիվանդագին այդ երևույթները արտահայտվում են հետևյալում՝

ա) Կուսակցական դիսցիպլինայի խախտման դեպքերի նկատելի բարձրացումը, որը հետևանք է նրան, որ բջիջները քիչ ուշադրություն են դարձնում կարգապահական խախտումների դեմ կռվելու գործին: Անհրաժեշտ է, որ հետագայում բջիջները և կուսկոլեկտիվներն իրենց ուշադրության դաշտից բաց չթողնեն

կարգապահության խախտման և վոչ մի դեպք։ Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է կռվել կուսակցության անդամների կողմից ռազմական կարգապահության խախտումների դեմ, վորպիսի հանգամանքը կարող է վատ որինակ ծառայել կոմյերիտական և անկուսակցական մասսայի համար մի կողմից, ազդել Դիվիզիայի մարտունակության և կարգապահության վրա—մյուս կողմից։

Կուսկազմակերպությունը զինվորական կարգապահության հիմնական պահանջները շարունակաբար խախտող կուս. ընկերների նկատմամբ պետք է լինի նույնքան խիստ, վորքան կուս. կարգապահությունը խախտող ընկերների նկատմամբ։

բ) Հարբեցողությունը, վորն անցյալ տարի հիվանդագին յերևույթների շարքում վերջին տեղն եր բռնում, ընթացիկ տարում տարածվելու վորոշակի նշաններ է ցույց տվել։ Ուշադրավ է այն հանգամանքը, վոր հարբեցողությունը հաճախ հանդես է յեկել թաքնված կամ քողարկված ձևով։ Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում մի կողմից հայտնաբերել հարբեցողության նմանորինակ ձևեր, իսկ մյուս կողմից անխնա պայքար մղել այդ յերևույթի դեմ։

Կոնֆերանսն ընդգծում է, վոր հիվանդագին յերևույթների դեմ կռվելու գործում բջիջների և կոլեկտիվների մասնակցությունը պահանջված չափով ուժեղ չի յեղել։

Անհրաժեշտ է, ձգտել նրան, վոր հիվանդագին յերևույթների հայտնաբերման և նրանց դեմ կռվելու գործը չանցնի կոլեկտիվների ու բջիջների կողքով, այլ նրանց միջով, նրանց գիտությամբ ակտիվ ու ան-



միջական մասնակցությամբ։ Առանց այս կամ այն հիվանդագին յերևույթի կամ վորևէ մի ընկերոջ գործը բջիջում, կոլեկտիվում նախորոք քննելու՝ չպետք է հանել՝ կուս. բյուրոյին ու ապա կուս. հանձնաժողովին։

Հիվանդագին յերևույթների դեմ մղվող կռվին, պետք է աշխատել ամեն կերպ մասսայական և դաստիարակչական բնույթ տալ, և նրանց հեշտ կերպով վերացնելու համար ստեղծել կուսակցական հասարակական կարծիք։

16. Մատնանշելով կուս. ատենակալների անհրաժեշտությունը և նրանց հետ տարված ու նրանց աշխատանքների դրական արդյունքները կոնֆերանսն անհրաժեշտ է համարում հետագայում կուս. ատենակալներին ավելի լայն չափով քաշել կուս. հանձնաժողովի և զորամասերի կուս. կազմակերպությունների ու կուս. բյուրոների աշխատանքների մեջ։ Պետք է ձգտել նրան, վոր կուս. ատենակալները լինեն ավելի հեղինակավոր կուսակցականներից և կայուն շարքային ընկերներից։

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր Դիվիզիայի կուսակցական կազմակերպության մեջ չկան 3 տարվա ստաժ ունեցող շարքային ընկերներ, համարել անհրաժեշտ, վոր ատենակալների կուսակցական ստաժը սահմանափակվի մեկ տարով։

17. Արձանագրելով կուս. հանձնաժողովի դերի մասսայականացման ու զորամասերի կուս. կազմակերպությունների մոտենալու ասպարեզում ունեցած հաջողությունները, կուս. կոնֆերանսը գտնում է անհրաժեշտ, վոր տարեկան յերկու անգամ զորամասերի կուս. կոլեկտիվների ժողովներում գրվեն զեկուցումներ կուս. հանձնաժողովի գործունեության մա-

ոլին, որ կուս. հանձնաժողովների բաց նիստերին ավելի շատ կուսակցականների հրավիրել մասնակցելու:

18. Նկատի ունենալով այն, որ կուսակցական կազմակերպության աճումը մեծ մասամբ գնում է ի հաշիվ կոմյերիտականների, կուս. հանձնաժողովը պետք է լրջությամբ հետաքրքրվի կոմսոմոլի կազմակերպության աճման ու նրա սոցիալական կազմի կանոնավորման խնդիրներով: Կոմսոմոլում նկատված հիվանդագին յերևույթների ուսումնասիրության և նրանց դեմ մղվող պայքարին աջակցելու գործում Կ. Հ. շատ խոշոր անելիքներ ունի: Ցելնելով այս տեսակետից, անհրաժեշտ համարել, որ կուս. հանձնաժողովը կապ ստեղծի ՀԼԿՅԵՄ Կենտկոմին կից գոյություն ունեցող կոնֆլիկտային հանձնաժողովի հետ փոխադարձ ներկայացուցչություն ունենալու միջոցով:

19. Բացի այն, որ կուս. հանձնաժողովը յերկրային գնդում ունենալու յե իր անդամ ներկայացուցիչը, պետք է ե՛լ ավելի ուժեղացնել նրա կապը յերկրային գնդի հետ, մանավանդ նախակոչյան պատրաստության և ընդհանուր հավաքի շրջաններում: Նախակոչյան աշխատանքների շրջանում պետք է լուրջ ուշադրություն դարձնել գնդի կազմակերպության անդամների միմիանց հետ ունեցած կապի և հարաբերությունների ուսումնասիրության վրա: Այս ասպարեզում հաշվի առնել և օգտագործել մյուս Դիվիզիաների կուս. հանձնաժողովների փորձը:

20. Արձանագրելով ռազմական դպրոցի կուս. կազմակերպության հետ ունեցած կապի բավական ուժեղ լինելու փաստը, հետագայում այն ավելի ուժեղացնել և կոնկրետացնել:



21. Կապը Հ. Կ. Կ. Կ. Վ. Հ. հետ և վերջինիս ղեկավարությունն ու մասնակցությունը կուս. հանձնաժողովի աշխատանքներին յեղել է ուժեղ և բավարար:

22. Բանակի կուս. հանձնաժողովի կապն ու ղեկավարությունը նամանավանդ հիվանդագին յերևույթների դեմ կռվելու և կուս. կազմակերպության աճման ու սոցիալական կազմի կարգավորման ասպարեզում յեղել է միանգամայն բավարար: Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ել ավելի խորացնել ու կոնկրետացնել այդ կապը:

## ԲԱՆԱՁԵՎ.

### Ընկ. Ս. Ասլիբեկյանի «Կրասնայա Զվեզդա» թերթի մասին.

Դիվիզիայի 6-րդ կուս. կոնֆերանսը կուսակցական կազմակերպության անհրաժեշտ խնդիրներից մեկն է համարում հասնել նրան, որ հրամանատարական և քաղաքական կազմը բաժանորդագրվի «Կրասնայա Զվեզդա» թերթին և լայն չափերով տարածի այն պահեստի պետ. կազմի ու ՊԱԶԸ-ի կազմակերպությունների շրջանում:

Այս նպատակով անհրաժեշտ է լայն պրոպագանդա մղել, «Կրասնայա Զվեզդա» թերթի դերի ու նշանակության մասին, հրամքաղկազմի, պահեստի պետկազմի և ՊԱԶԸ-ի բջիջների ժողովներում առանձին զեկուցումներ դնել, բաժանորդագրությունը տարածելու համար հատուկ կազմակերպիչներ առաջ քաշել և ագիտացիոն նշանակություն ունեցող դասեր կազմակերպել «Կրասնայա Զվեզդա» թերթի վրա:

ՀՀ Ազգային գրադարան
NL0212465

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

41. 157